

968

Հայկան

Թիֆլու 1889

82

C-53

52



~~Архив~~ Год III

~~Архив~~ Год IV

2011

V

Հրատարակութիւն
ԲԱՐՄԵԴ ՔԱՄԱԼԵԱՆԻ

82
T-53

W R U U L E S

ԱԴՐԵՏԳՈՒԹԻՒՆ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ,

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՎԻԼԼԻԱՄ ՋԵՓՍՈՒԹԻՒԻ

Թարգմանութիւն

ՍԵՆԵ-ՔԵՐԻՄ ԱՐԾԲՈՒԺՈՒԹ



19003

Տ Ե Լ Ա Մ Կ

197

Дозволено цензурою. Тифлисъ, 26 Января 1889 г.

Tipografija M. D. Rotinianca. Na Gol. prospl. d. № 41

Հ ՐԱՏԱՐԱԿՑԻՑ

Թէև ոչ մի ջանք և աշխատանք չ'ինայեցինք «Դաշնակ»,
ժողովածուի հրատարակութեան համար, բայց, այնու ամենայ-
նիւ մի անսպասելի խոշնդրուի հանդիպելով՝ ստիպուած յետա-
ձգում ենք այդ ժողովածուի հրատարակութիւնը մի անորոշ
ժամանակամիջոցով:

Ուստի այդ ժողովածուի փոխարէն հրատարակելով պ. Աե-
նեքերիմ Արձրունու հայերէն լեզուով թարգմանած նէքսպիրի
յայտնի «Համեմ», ողբերգութիւնը, ուղարկում ենք մեր բոլոր
բաժանորդներին:

Բ. Գահական

ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

1880 թուականի Օգոստոս ամսին՝ ես, վատահութիւն ունեցար փորձ փորձել «Համլէտ» ողբերգութիւնը թարգմանելու Հակական բեմի համար, ըստ պահանջման թատրօնի վարչութեան և հետեւով հասկացող բարեկամներիս լորդումանց: Ազդպիսի աշխատութիւնը, անշտաշա, պլասի կրէր իւր մէջ «վատահութեան» բոլոր նշանները, գոնեա իմ կողմանէ, քանի որ ես չէի զինաւորուած ան պահմաններով, որնց կատարեալ գոյսութիւնը միան պահմանաւորում է: «Համլէտ» թարգմանութեան խջողութիւնը, Պարտքս եմ համարում կանգ առնել այդ պահմանների վերաց:

ա. Ըստ պահանջման Հակական թատրօնի վարչութեան՝ ես ըստիպուած էի ողբերգութեան թարգմանութիւնը աւաբաել նթացս մի ամսոյ, որպէս զի նա կարողանաւ պատրաստել նորա ներկապացումը աշխան սկզբին: Ազդ պատճառուու «Համլէտի» թարգմանութիւնը ես աւաբաեցի քս ան և երեք օրուաչ մէջ, Կիալօվովոկում, ուր կը բնակի քայլքաված առողջութիւնս կազզուրելու նպաստակով: Բնական է, որ այսպիսի պարագաների մէջ կատարած ծանր աշխատութիւնը չէ կարող չունենալ շտապողութեան լատուկ քանի մի պակասութիւններ:

բ. Անզդիերէն ես չգիտեմ, չգիտեմ գոնեա անքան, որ կարողանաւ թարգմանել «Համլէտ» բնագրից, ուստի թարգմանեցի ուրիշ լեզուներով թարգմանութիւններից: Անժխաելի ճշմարտութիւն է, որ

եթէ թարգմանութիւնը կատարվում է ոչ բնագրից, որքան որ նա կատարելագործուած լինի, միշտ, շատ թէ քիչ, հեռու կլինի վերջինից, այսինքն բնագրից:

դ. Եւ վերափի, եթէ իմ ընթերցողները ուսումնասիրել են «Համլէտի» վերաբերեալ գրականութիւնը զանազան լեզուներով, նորա պատմական, հոգեբանական, բանաստեղծական, բևմական և դրամատիկական քննազառութիւնները, նորքա պիտի է համոզվին, որ չկան երկու թարգմանութիւններ, որոնք ճշտութեամբ միմեանց նման լինին: Որովհեան «Համլէտ» ողբերգութիւնը լի է անսահման և բազմակողմանի գեղեցկութիւններով, խորհին փիլխառիալութիւնով, սրախօսական դարձուածներով, պատմական ակնարկներով, դրամատիկական ոճով, ազդու լեզուով, բեմական տևարաններով ևազն, ուստի զանազան արգերի թարգմանիչները պահպանում էին իրանց աշխատանաց մէջ վերոպրեալ լատիութեանց մի քանիսը, 'ի բաց առնելով միւնիերը ազդպիսի կերպիւ ինձ լատինի բազմաթիւ թարգմանութիւնները միմեանցից շատ զանազանուում են և իրաքանչիւրը նոցանից ներկայացնում է ընթերցողին նէսքալիրի «Համլէտ» ողբերգութեան «կտորանքը» և ոչ ամբողջութիւն: Օրինակ, թարգմանիչներից մէկը կամնալով մնաց՝ հարազատ բնագրին և պահպանել նորա ճշտութիւնը (Կէտչը, Էմիլ Մօնտէգիու,) զոհում են այն նպաստակին բնագրի ազ լատիութիւնները, միւնիերը ճգոնելով պահպանելու բանաստեղծական գեղեցկութիւնները մնացնում են գաղափարի և մոքերի ճշտութեան դէմ, (Պոլէկուի, Կրօնիբերդ, Շարլ Հիւգօ), երրորդը, կամնալով իւրեանց թարգմանութիւնները ծառակեցնել միացն բևմի, թատրօնի նըպատակներին, զանց են առնում, թէ բանաստեղծական կողմիրը և թէ բնագրի ճշտութիւնը (Զագուլեալ) չորրորդը, պահպանում են միացն կլասիկական ոճի լատիութիւններ, որու պատմասուաթ թարգմանութիւնը ներկայանում է իրեմ մի մեռեալ կմախք, (Վարնչենկօ) ևազն: Նշանաբելով ազդպիսի թերութիւններ, բնական է, որ մեր ժամանակակից թարգմանիչները պարս են փախչել միակողմանութիւններից և փոխանցանել, կամ թարգմանել «Համլէտ» այնպէս, որ բնագրի բոլոր

շատկութիւնները 'ի կարեաց չափու, արտապատուի և մարմանաց թարգմանութեանց մէջ:

դ. Գալով ներկայ թարգմանութեանը, թող ընթերցողը համարձակութիւն չ'համարէ իմ կողմից, եթէ ասեմ, որ ևս իմ թող ուժերով աշխատել եմ որ «Համլէտ» հաջ թարգմանութիւնը չլինի անչափ միակողմանի, որպէս վերոպրեալները: Ալ հարց է, թէ որ աստիճան չածողութիւն ունեցած եմ աշխատութեանո մէջ, սական ակսքան միան կարող եմ ասել, որ թարգմանելով «Համլէտ» ես միշտ աչքիս առաջ ունեցել եմ Հապկական մանուկ բեմը և Հայ հանդիսականներին, որոնք պիտի հասկանակին բեմից արտասանած մինախօսութիւնները:

1880 թուականից սկսեալ «Համլէտ» լաճախ և արդիւնաւոր ներկայացումները, որոց չաջողութիւնը, գուցէ, աւելի վերաբերելի է զերասանների և գերասանուինների տաղանդին, խրախուսնց լինձ, 'ի լուս ընծայել ներկայ թարգմանութիւնը, իբրև մի փոքրիկ ծառապութեան նշան իմ կողմանէ 'ի նպատակ Հայ մատենագրութեան: Թարգմանիչը, բանձնելով հրատարակչին հրատարակելու այս աշխատանքը, նոյն կերպիւ ինչպէս նա ելած է իւր գրչի տակից 1880 թուականին, առանց որեւէ փոփոխութեան և ուղղելու, ինքն քաջ գիտէ իւր գործի պակասութիւնները: Բայց և աճնպէս, այս հրատարակութիւնը մի, ալսպէս ասել, պիօներութիւնն է, որով ես կուզեմ առիթ տալ աւելի ընդունակ, տաղանդաւոր, և աւելի բարեբաղդ պակամններով զինաւորուած անձանց, 'ի նորէ ձեռք զարկել «Համլէտի» թարգմանութեան 'ի Հայ, որպէս զի Հայոց մատենագրութիւնը աղ կողմանէ, իսու չ'նկնի Զինաց մատենագրութիւնից գոնեա, որ ազդ ողբերգութեան թարգմանութիւնը ունէ մէկից աւելի:

ՍԵՆԵՓԵՐԻՄ ԱՐԾՐՈՒՆԵՒՅ

5 Փետրվարի 1889 ամի.

Տիգեզ:

1880

ԹԻՖԼԻՍԻ ԹԱՏՐՈՆ

ՀԻՆԳԵՄԲԻ 20-ԻՆ ՆՈՅԵՄԲԵՐԻ

Հայ դերասանական Մշտական խումբը ներկազգացրեց
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

ՀԱՄԼԵՏ

Ողբերգութիւն 5 արար. հեղ. Վ. Շեքապիրի, թարգմ. Ա. Արծրունուս
ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Կլավիսոս, թագաւոր Դանիոլ Պ. ՄԵԱԿԵՆԱՆ
Հերուուզա, թագուհի օր ԵՐԱՆՈՒՀԻ ԳԱՐՍՔԱՇԵԱՆ
Համելիա, սորառողին առաջ. ամուսնուց Պ. ԱԴԱՄԵԱՆ
Պօլոնիուս Պ. Մանդինեան
Լաւրուս } Պ. Բէղարեան

Սոֆիա } սորառողիքը Օր. ՍԻՐԱՆՈՅՑ

Հօրացիօ, Համելիսի ընկերը Պ. Առաքիսեան

Վօլոմիմանդ } Պ. Ն Ն սէրժեն պրայմի ման
Կօրնէլի } Պ. Ն Ն պալատականներ

Քօլէկրանց } Պ. Աղամեան վաստակաւուր ջն

Գիլէնշատէրն } Պ. Գեմիրեան սէրժեն սիրուան

Օսրիկ } Պ. Աբրահամիան

Մարցէլո } Պ. Սահակեան սէրժեն սիրուան

Քերնարդո } Պ. Սարումեան սէրժեն սիրուան

Ֆրանցիսկօ } Պ. Ն Ն սէրժեն սիրուան

Համելիտի հօրութականնը Պ. Աւալեան սէրժեն սիրուան

Գերասան } Պ. Զարթէղեան սէրժեն սիրուան

Գերասանուհի } Օր Վարդուհի

Առաջին } Պ. Տէր-Դաւթեան սէրժեն սիրուան

Գերեզմանափարներ } Պ. Աւալեան սէրժեն սիրուան

Երկրորդ } Պ. Աւալեան սէրժեն սիրուան

Պալատականներ, աստիճանաւորներ, գերասաններ, գերեզմանա-

փորներ և ժողովուրդ:

Գործադրութիւնը կատարվում է Դանիոլ մայրաքաղաքում:

Հ Ա Վ Ե Տ

0.1.1880 0.1.1880 0.1.1880

ԱՐԱՐՈՒԱ ԱՊԱԶԻՆ
ՏԵՍԱՐԱՆ ԱՐԱԶԻՆ

(ԴԱՐԱՏԱՓ ՊԱԼԱՏԻ ԱՐԱԶ)

ՏԵՍԻ Ա.

ՖԲԱՆՉԵՍԿՈ Առաջանաբեռն: Մահում է ԲԵՐՆԱՐԴՈ:
ԲԵՐՆԱՐԴՈ: Ո՞վ ես:
ՖԲԱՆՉԵՍԿՈ: Կանգ առ: Նշանաբանդ և ինքն սամ, ով ես:
ԲԵՐՆԱՐԴՈ: Կեցցէ թագաւորը:
ՖԲԱՆՉԵՍԿՈ: Բերնարդո:
ԲԵՐՆԱՐԴՈ: Նոյն ինքն է:
ՖԲԱՆՉԵՍԿՈ: Դու շատ ձիչ և իւր ժամանակին ես գալիս ինձ
փոխանակելու:

ԲԵՐՆԱՐԴՈ: Կէս գիշեր է, գնա քնիր:
ՖԲԱՆՉԵՍԿՈ: Շնորհակալ եմ. ցուրաը խիստ է, ինքս և լաւ
չեմ զգում ինձ:

ԲԵՐՆԱՐԴՈ: Հանգիստ է արդեօք:
ՖԲԱՆՉԵՍԿՈ: Ինչպէս գերեզմանը: Մուկն անգամ չէ շարժվում:
ԲԵՐՆԱՐԴՈ: Լաւ: Բարի գիշեր, Եթէ տեսնես պահնորդութեան
ընկերներին՝ Հօրացիօին և Մարցէլոին, ասա որ շտապին:

(Հօրացիօն և Մարցէլոն ժանաւմ էն:)

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ, ՀՕՐԱՑԻՕ ԵՒ ՄԱՐՑԵԼՈ.

ՖՐԱՆՉԵՍԿՈ: Ահա, կարծեօք նոքա դալիս են, կանգ առ, ով եւս
ՀՕՐԱՑԻՕ: Հայրենիքի բարեկամներ:

ՄԱՐՑԵԼՈ: Եւ թագաւորի հպատակներ:

ՖՐԱՆՉԵՍԿՈ: ՄԾաք բարե, բարի գիշեր: (Պահում է)

ՄԱՐՑԵԼՈ: Ե՞ւ, Բերնարդո:

ԲԵՐՆԱՐԴՈ: Ի՞նչ կայ:—Հօրացիօն ակտոն է:

ՀՕՐԱՑԻՕ: Մասսամբ: (Գետու ուղարկում է)

ԲԵՐՆԱՐԴՈ: Բարե եկար Հօրացիօ, բարե Մարցելո:

ՀՕՐԱՑԻՕ: Այս գիշեր նա երկեցաւ արդեօք:

ԲԵՐՆԱՐԴՈ: Ես դեռ ոչինչ չեմ տեսել:

ՄԱՐՑԵԼՈ: Հօրացիօն ասում է թէ՝ այդ բոլորը երևակալու-
թիւն է. նա հաւատ չէ ընծայում այն սարսափելի լաւանութեան, որին
մենք երկու անդամ ականատես եղանք: Ուստի ես նորան խնդրեցի,
որ այս գիշեր գայ պահակատեղին և համոզուի, աեսնելով մեռեալ-
ների լայնութիւնը, թէ մեր աչքերը մեզ չեն խարում և ինքը
նորա հետ խօսի:

ՀՕՐԱՑԻՕ: Առասապել է, նա չի լայտնուիլ:

ԲԵՐՆԱՐԴՈ: Նատենք մի փաքր՝ և թող տուր դարձեալ լարձա-
կուել քո լսելիքի վերակ, որ շատ ծանրացել է մեր պատմածի հա-
մար, թէ մենք նորան երկու անդամ տեսել ենք:

ՀՕՐԱՑԻՕ: Նատենք և լսենք թէ էլ ինչ կ'պատմես մեզ, Բերնարդո:

ԲԵՐՆԱՐԴՈ: Անցեալ գիշեր, երբ ահա այն աստղը, որ բեենից
գէպի արմամուտըն է ծագում, փալեց, իսկ այնաւող, ուր այժմս էլ է
փալում, Մարցելոն և ես, երբ կէս գիշերուան դանզը խփեց...

(Պահում է 12 ժամ:)

ՄԱՐՑԵԼՈ: Լոյր, ահա նա դալիս է: (Մահում է Ուղարկում:)

ԲԵՐՆԱՐԴՈ: Իսկ և իսկ մեր հանգուցեալ թագաւորն է:

ՄԱՐՑԵԼՈ: Դու դիտուն ես, Հօրացիօ, խօսիր հետք:
ԲԵՐՆԱՐԴՈ: Նայիր՝ նման չէ արդօք նորան: Լաւ տես:

ՀՕՐԱՑԻՕ: Կատարելապէս, Զարժանքից և երկիւղից ես դողում եմ:
ԲԵՐՆԱՐԴՈ: Նա կամննում է որ հետք խօսին:

ՄԱՐՑԵԼՈ: Հօրացիօ, մի բան հարցրու:
ՀՕՐԱՑԻՕ: Ո՞վ ես դու, որ տիրապետել ես կէս գիշերուակ գե-
ղեցիկ ժամը զինուորական զգեստով և ոչնքով զարդարուած, որով
շրջում էր երեկն Դանիակի թագաւորը: Յանուն երկնքի երդուեց-
նում եմ քեզ, խօսիր:

ՄԱՐՑԵԼՈ: Նա վիրաւորուեց:

ԲԵՐՆԱՐԴՈ: Նա հեռանում է:

ՀՕՐԱՑԻՕ: Կանգնիր, խօսիր, երդուեցնում եմ քեզ, խօսիր:

(Ուղարկում: Գնում է:)

ՄԱՐՑԵԼՈ: Նա գնաց.—Շկամեցաւ պատասխանել մեզ:

ԲԵՐՆԱՐԴՈ: Հը՛, ինչ կայ, Հօրացիօ, դու դողում ես և գունա-
տուել ես: Տեսածդ կարծեմ, ցնորքից մի բան աւելի է, Դու ինչպէս
ես կարծում:

ՀՕՐԱՑԻՕ: Երդում եմ Արարչի անունով, որ, եթէ իմ սեփա-
կան աշքերս ինձ երաշխաւոր չ'լինեին, ես ուրիշի խօսքերին չե-
հաւատալ:

ՄԱՐՑԵԼՈ: Անպէս չէ, որ նա շատ նման էր թագաւորին:

ՀՕՐԱՑԻՕ: Ինչպէս դու ինքդ քեզ իսկ և իսկ անպէս էր զրա-
հաւորուած, ինչպէս զուով նորինգիացուն խորտակելու ժամանակ.
Ինչպէս լինքերը կիտած, ինչպէս մենամարտութեան ժամանակ վե-
հացուն գեց ստուցի վերակ: Անխմանալի է:

ՄԱՐՑԵԼՈ: Իսկ այդ կերպ նա երկու անդամ խոր գիշերուակ
մէջ անցաւ մեր մօսով մարտի քալերով:

ՀՕՐԱՑԻՕ: Թէ, ինչ է գուշակում այս երեսիթը, չեմ կարսու ասել,
միտք ինձ թվում է, որ Դանիակին մի սարսափելի խառնակումն է
սպառնում:

ՄԱՐՑԵԼՅՈ: Նստենք, բարեկամներ, թող բացատրէ ով որ զիտէ, թէ ինչու համար են զիշերային ասսխատ և արթուն պահապահները, որոնք խանգարում են Դանիայի ժողովուրդի քանը. Ի՞նչու համար է, որ ամենայն օր թնդանօթներ են ձուլում և օտար երկիրներից պատերազմական իրեղնեներ առնում, դործաւորներին բըռնութեամբ նաւարան ուղարկում, որտեղ նոքա չեն զանազանում առնը հասարակ օրից: Ո՞վ կ'բացատրէ ինձ:

ՀՕՐԱՅԻՒԹՈ: Ես: Գոնէ աղապէս կ'պատմեմ, մեր հանգուցեալ թագաւորը, որի ուրուականը մենք այժմ տեսանք, մենամարտեց Նորվեգիայի Ֆորտէնքրասի հետ: Նա դրդուած լինելով իւր նախանձելի բաղդից՝ նորան մենամարտութեան կանչեց: Մեր քաջ, մեր դիւցազն համլէտը (աղապէս է նա ճանաչուած աղասիդ, ասս աշխարհի մասում) ապանեց թնամուն և Ֆօրտինբրասը իւր կեանքի հետ կորցրեց և իւր բոլոր պետութիւնը: Աղապէս էր նոցա փոխադարձ և մենամարտների ինիքով ու ստորագրութեամբ հաստատած դաշինքը: Եւ մեր թագաւորն իւր տէրութիւնը նոնպէս գրաւական զրեց, որ եթէ Ֆօրտինբրասը լաղթէր, նորան պիսաի հասնէր:—Բայց ինչպէս որ նոյն պատմանի զօրութեամբ Ֆօրտինբրասի տէրութիւնն անցաւ Համլէտին, այժմ երիտասարդ Ֆօրտինբրասը կրելավ իւր կործքի մէջ անզուտղ վայրինի հուր և անփորձ քաջութիւն, ժողովիլ է Նորվեգիայի զանազան անկիւններում շրջմոլիկների խումբ, որոնք մի պատառ հացի համար ամեն իրենց արդիւնաւոր ըանի վերաէ կ'լարձակուին: Եւ նորա դիաւորութիւնը (ինչպէս լաւտնի է Դանիային) այն է՝ որ զէնքի զօրութեամբ վերադարձն իւր հօր կորցրած տէրութիւնը: Անա ձեզ, իմ կարծիքավ, այդ ամեն պատրաստութիւնների, պահապանների, չարժմանց և լուզմուքների պատճառը մեր երկրի մէջ: Կարծիքս սխալ չպէտքէ լինի:

ԲԵՐՆԱՐԴՈ: Մեկնութիւնդ համաձան է զիմուրուած ուրուականի լաւտութեանը, որը ակնքան նման էր թագաւորին՝ պատերազմների այդ անցեալ և ներկայ պատճառին:

ՀՕՐԱՅԻՒԹՈ: Դա առանձին մի հասիկ է, որ միմնեցնում է իմաստութեան աշքը:—Մեծազօր լաղթական Հումանմ, մեծն կիսարի անկ-

ման ժամանակ, մեռեալները պատաճների մէջ, աղաղակներով և մըրմաջալով թափառում էին փողոցներում: Երեսում էին աստղեր իւրեանց հրեղէն գիսակներով, թափվում էր արեան անձրեւ, արեգակը ծածկում էր բծերով և լուսինը հիւանդանում էր մինչեւ խաւարման օրը: Կարծես աշխարհի վերջն էր եկեւ: Միմնոն ահարկու հնդափոխութեան նշան երեւեցնում են երկինքն ու երկիրը մեր երկրի և հայրենակիցների համար:

(Մասնաւում է ուրուականը:)

Դակեցէք, ահա, կրկին եկաւ: Կամի թող ինձ ոչնչացնէ նա, բայց ևս նորա ճանապարհը կ'կարեմ: Կանգ առ, ուրուական, եթէ բու գիտես բարբառ մարդկային և ունիս ձան: Խօսիր ինձ հետ: Ասա, գուցէ բարի քաջութեամբ կարող եմ վերադարձնել քեզ քո հանգատութիւնը, կամ զիտես՝ գու ճակատագիրը, որը սպառնում է քո հայրենիքին, և ես կարող եմ նորա առաջն առնել:—Ոհ, խօսիր Գուցէ կենդանութեանդ օրերում ուկի և գանձ ես խորել գմանի մէջ, որի պատճառով ասում են թէ ոգիքը թափառում են գիշերները: (Առաջարկ իւսուած է:) Մարցէլլօ, առաջն առ և խօսիր հետք:

ՄԱՐՑԵԼՅՈ: Զծակիմ ես նորան նիզակով:

ՀՕՐԱՅԻՒԹՈ: Ծակիր, եթէ չ'կանգնի:

ԲԵՐՆԱՐԴՈ: Ահա, նա աղասիդ է:

ՀՕՐԱՅԻՒԹՈ: Աղասիդ է:

ՄԱՐՑԵԼՅՈ: (Հօրցչեօնի:) Անհետացաւ: (Ուրուականը գնաւում է:) ՄԵՆՔ վիրաւորեցինք նորան: մենք բոնութեամբ կամեցանք նորան պահեւ, այս նու նիզակներին և սրերին անմատչելի եղաւ, մեր հարուածը ները միմիան անմիտ վիրաւորանք էին: (Գնաւում է:)



ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՌԴ.

(ՀԵՂՈՒՆԱՐԱՆ ԴԱՇՎԻՑ ՊԱԼԱՏՈՒՄ:)

(ԵՐԱԾՐԱԿԱՆ-ԼԻՆ)

ՏԵՍԻԼ Ա.

(Մահմառ էն ԹԱԳԱԽՈՐ ԹԱԳՈՒՀԻՒ, ՀԱՄԱՅՆ, ՊՈԼԾՆԻԿԻՍ, ԱԱ-
ԷՐՏ, ՎՈԼՏԵՐՄԱՆԴ, ԿՈՐՆԵԼԻ, ԻՇԽԱՆՆԵՐ ԵՒ ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ.

ԹԱՂԱԼՈՒՅԻ: (Նորբերդ գումար վերայ) Թէպէտ և անզին է մեզ համար
մեր եղբօր վիշտասկը, որին լափշատկեց մահը, թէպէտ պատշաճա-
ռոր էր, որ մեր սրաերը ընկրդմած լընէին վշաերի մէջ և բալոր մեր
տէրութիւնը երեար իբրև մի սգաւոր անձն, սական դասողութիւնը
չաղթաղ հանդիսացաւ բնութեան դէմ, և խմաստուն ամբութեամբ մը-
տարքերելով մեր եղբօրը՝ մննք մեզ ևս չենք մոռանում: Ուստի տրխ-
րութիւնն և վիշտը մննք միացրինք, մի աչքով արտաստելով, միւսը
մննք զուարձութեան զարձրինք, ասօն կատարեցինք թաղման ժամա-
նակ, հայրենի հոգինանզսափ տաղ երգեցինք, հաւասարակշունչինք
վիշտն ու ուրախութիւնը և ճնշուած բերկրանքով մեր նախկին քրօջը,
խակ աչմմ մեր թագուհուն, մեզ կին անուանեցինք: Սոյն վարքով
մննք երբէք չըսնաբարեցինք ձեր իմաստութիւնը, որ ազատորէն
համախոհ էր մեզ, որի մասին լաւանում եմ ձեզ մեր գոհանակութիւ-
նըն ու ողջոնը: Էացի գրանից զուք պէտք է դիմենաք, որ երխա-
սարդ Ֆօրտինբրասը՝ արհամարհելով մեզ և կարծելով որ մեր թան-
կագին եղբօր մահց լետ մեր տէրութիւնը խախտուցաւ, վստահա-
ցաւ անարգելու մեզ, պահանջելով մեզանից դեսպանների միջոցով
աչն հոգիրը, որ պատերազմական իրաւամբ վաստակել էր մեր հոչա-

կաւոր եղբայրը: Ալմաքանս գորա մասին բաւական է: Այժմ խօսենք մեր և այս ժողովի մասին: Մենք գրեցինք Նորմետիայի թագաւորին, որ ծերութեան և ակարութեան պատճառով չէ բաժանվում իւր մահճից և հազիւթէ զիտէ իւր եղբօր որդու չարամտութիւնը, որ նա զադարեցնէ զործի ընթացքը, ևս առանել, որ զինուորների ժողովութը և սոցա պահպանելու ծախքը զժուարացնում են իմ տէրութեան դրութիւնը: Քեզ, սիրելի Կօրնելի և քեզ, Վօլտիմանդ, լանձնում ենք տալ զառամեալ թագաւորին մեր ողջունը և խորհրդակցել նորա հետ, առանց շեղուելու ձեզ տուած նամակների ծիշդ բախնդակութիւնից: Մնաք բարեւ: Ձեր արագութեամբն ապացուցէք ձեր եռանդը:

ԿՈՐՆԵԼԻ, և ՎՈԼՏ. Պատրաստ ենք, ինչպէս միշտ, ապացուցանելու
և այժմ մեր եռանդը:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ. ԶԵՆք կասկածում. բարի ճանապարհ.

(Ա օ բ ն ե լ ի ն և Վ ա զ օ լ ո վ ի յ ս տ հ ո վ ը գ ր գ ն ո ւ մ է լ ո ւ շ)

Գույ ինչ կ'ասես, Լաէրտ: Գու ասում էիր, թէ մի բան ևս կամ մենում խնդրել մեղանից. Ինչ է խնդիրքդ, Լաէրտ: Դանիակի թագաւորին ասած խելացի խօսքը կորած չէ: Ի՞նչ կարող է Լաէրտը խնդրել թագաւորից, որ նա չ'կատարէ խնդիրքը չ'լսած:—Գլուխն էլ այնքան մօտ չէ սրախն, ձեռքերն էլ այնքան ծառապէլու պատրաստ չեն բերանին, որքան Գանիակի գահն քո հօրը: Ասա, Լաէրտ, ինչ էլի կամ մենում:

ԱԱՅՏԸ: Զերդ վեհափառութեան թուլաւոթիւնը կրկին վերադասնալու ֆրանսիա, որտեղից ևս կամաւորապէս եկաւ, որբազան պարաքս համարելով ներկայ լինել ձերդ վեհափառութեան թագադրութեան, իսկ այժմ կատարելով այդ պարաքը՝ ևս իմ բոլոր բաղձանքներով և մաքերովս ձգուամ եմ դէպի Ֆրանսիա, որի մասին և խնդրուամ եմ ձեր թուլաւութիւնը:

ԹԱՂԱԽՈՐ: Հայրդ թռի կտակ ի՞նչ է ասում Պօլօնիուսը:

ՊՈԼՅՈՆԻՑԻԱՆ: Վեհափառ Տէր, անվերջ խնդրանքով նա խլեց ին-

ձաճից իմ ակամակ թովտութիւնը. հարկադրեց ինձ, վերջապէս, որ
և դեմ իմ դժուար համաձանութեան կնիքը նորա ցանկութեան
վերաբ խնդրում եմ, թաղաւոր, թով տուէք նորան գնալու:

ԹԱԳԱԽՈՅԻ: Օգուա քաղիր, Լամբատ, քո բարդաւոր վազրկեանից,
կարգաւորիր ժամանակի, ինչպէս քեզ համելի է, անցրաւ ժամերդ,
ինչպէս կամիս իսկ դու, մեր բարեկամ և որդի, Համլէտ:

ՀԱՄԼԵՏ: (Մէ իռվշ) Փոքր ինչ առաւել քան բարեկամ և հե-
ռու բան որդի:

ԹԱԳԱԽՈՅԻ: Ինչու են տիրութեան ամպերն երեսիդ:

ՀԱՄԼԵՏ: Դեռ շատ մօտիկ եմ ուրախութեան արեղակին, թա-
գաւոր, ես չեմ կարող ծածկուիլ տիրութեան ամպերի մէջ:

ԹԱԳՈՒԽԾԻ: Հեռացրու քեղանից գիշերախին խաւարը, իմ բարի
Համլէտ, նայիր բարեկամօրէն Դանիախի թագաւորի վերաբ, ինչու
խոնարհցրած աչքերով, կարծես փոշու մէջ քո հանգուցեալ հօրդ ևս
որոնում: Ազգպէս է մեր, ամենան կենդանեացս ճակատագիրը—մեռնել:

ՀԱՄԼԵՏ: Աչ, թագուհի, ամենան բան կ'մեռնի՝ ազգպէս է
ընդհանուրի ճակատագիրը:

ԹԱԳՈՒԽԾԻ: Եթէ ազգպէս է, ինչու հօրդ մահը ադրքան տիրուց-
նում է քեզ, կարծես նորանով բնութեան օրէնքը խախտուեց. ադր-
պէս է երեսում նայելով քեզ վերաբ:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ, թագուհի, ոչ թէ երեսում է, այլ խօկապէս կար.
ևս երեսութեներին չեմ հաւատում: Ես չ'գիտեմ ոչ մի երեսութ, ոչ այս
ոն վերարկուն, ոչ սպաւորի սովորական հազուսոր, ոչ խեղդուած
չնչառութեան հեկիկանքը, ոչ արտասոււաց առաստութիւնը, ոչ վշաս-
րեկ գէմքի ախտոր տեսքը, վշտի ոչ մի ձեր, տեսակները և նշաննե-
րը չեն կարող խօկապէս ցուց տալ իմ հոգեկան լուգինքը, որով ևս
առջորդում եմ: Ազդ ամենը գուցէ երեսաւ, որովհետեւ նոցա ձեացնել
կարելի է, իսկ հոգւոս մէջ ես կրում եմ աչ ինչ որ կաչ և ինչ որ
տիրութեան ամեն զարդարանքներից բարձր է:

ԹԱԳԱԽՈՅԻ: Բոլորը գեղեցիկ է և գովիլի, Համլէտ, բարի է քո
տիրութիւնը, և որդիական սիրով մէջ մենք քնքով սիրու ենք տեսնում:
Ամենան բան իւր ժամանակին ունի—տիրութիւնը նմանապէս: Անխասա-

է և մեծ մեղք անգամ տրանջալ վիճակի դէմ—անհնաղանդութիւնը
և տրանջը բնութեան լաւիտենական օրինաց դէմ են, լաւիտեան
ցաւել և լալ մեռեալների մասին: Թող տիրութիւնդ, նայիր ինձ վերաբ
ինչպէս ծնողի վերաբ, թող բոլոր աշխարհը տեսնէ, որ գու մեր գահի
ամենամերձաւորն ես և սիրուած անզիսի սիրով, որով հալցը սի-
րում է իւր որդուն: Քո դիտաւորութիւնը Վիրաւմբերգի ուսումնա-
րան երթալու մասին մեր կամքին համելի չէ և մենք խնդրում ենք
քեզ մնալ ապաւել մեր ւրախութեան և բերկրանաց համար:

ԹԱԳՈՒԽԾԻ: Կ'լուսամ որ մօրդ խնդիրքը ի զուր չի անցնիլ. ա-
զաշում եմ, մնացիր մեղ մօտ:

ՀԱՄԼԵՏ: Հնաղանդել ձեզ՝ ընդ միշտ իմ պարտքն է, թագուհին
ԹԱԳԱԽՈՅԻ: Ազդպիսի պատասխանը ուրախացնում է սիրուս:
Դու կ'լինիս մեղ հաւասար Դանիախի մէջ. ես կամենում եմ սրտիս ու-
րախութիւնից, որ այս օրուակ հացկերութիւն քո կենաց բաժակը թըն-
դանօթի որոսումով հաղորդուի երկնքին և երկրին: Բարձրածան կ'ծա-
նուցանենք աշխարհին մեր զուարձութիւնը և երկրի ամպը երկնից
ներքու կ'գուռաւ: Երթանք, թագուհի: (Բոլորը գնում էն:)

ՏԵՍԻԼ Բ.

ՀԱՄԼԵՏ (Ֆախ):

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ, եթէ գուք, իմ հոգուս շղթաներ, զու, ադրքան ամ-
րացեալ ուկիրացս զանգուած, փշուէիք, քակըալուէիք և ցող դառ-
նապիք, և կամ թէ Դու, Դատաւոր երկնքի և երկրի, չ'սահմանէիր օ-
րէնք անձնասպանութեան դէմ, ոհ, Աստուած: Ո քան
գարշելի, որքան կոպիտ, գատարկ, անպատուզ և ջնջն է երեսում աչ-
քիս կեանքն այս աշխարհում: Ասելին աշխարհ: Անմանք, զու ինչ ես
վայրենի, անպատուզ, չորացած տունկերով խեղդուած մի պարտէզ:—
Ինչու մինչի այն աստիճան պիտի համեր: Միան երկու ամիս է,
որ նա մեռաւ, ոչ, երկու էլ չկայ: Թագաւորն անքան աղնիս, որ-
քան Հետպերին Աստիքին համենատելով. անքան խանդակաթ սիրով
սիրում էր մօրս, որ երկնակին հողմին կ'արգելէր գիտչել երմսին: Եր-

կինք և երկիր, ինչու եմ վիշում—սա էլ նորան աճքան անձնատուր էր, նորա սէրը կարծես սիրու երջանկութեան հետ աճում էր, և մի ամիս հաղիւ անցաւ... լաւ է չմտածել դորա վերաց: Թուշութիւն։ ահա քո անունը, ով կին: Մի կարծ և դիւրընթաց ամիս, վեռ աճն մաշիները չին մաշուել, որոցմով նա սպաւոր իբրև նէօրէ, հօրս գագաղին էր հետեւում: Ո՞հ, երկինք, անիմաստ և անբարբառ գաղան անզամ աւելի սուդ կ'պահէր: Նա հօրեղօրս կինն է, իսկ հօրեղալրս աճքան նման է հօրս, որքան ես չերքուլիսին: Մի ամիս է միան, և զեռ կեղծ արտասուաց հետքերը չ'ցամաքած իւր աչքերի վերաց, նա արդէն ամուսին է: Ո՞հ, պիղծ անհամբերութիւն. ալդպէս արագ ընկնել աղգապղծութեան անկողնու մէջ: Զար է գուշակում այս ամենը: Վշտացիր հոգիս, շրթունքներս պէտք է լուն:

ՏԵՍԻԼ Պ.

ՀՕՐԱՑԻՕ, ԲԵՐՆԱՐԴԻՕ, ՄԱՐՑԵԼԼՈ (Յանուար էն):

ՀՕՐԱՑԻՕ: Ողջոն ձեզ, իշխան:

ՀԱՄԼԻՑ: Ուրախ եմ ձեր տեսութեամբ, պարոններ. բաց եթէ չեմ սխալփում, սա Հօրացիօն է:

ՀՕՐԱՑԻՕ: Ինքն է, իշխան, ձեր մշտական խոնարհ ծառան:

ՀԱՄԼԻՑ: Ուզում ես ասել, իմ բարեկամ, եկ փոխենք միմեանց հետ ալդ անունը: Ինչու համար դու, Հօրացիօ, Վիւրտեմբերգից եկել ես աբսեղ: Մարցելլօ:

ՄԱՐՑԵԼԼՈ: Իշխան:

ՀԱՄԼԻՑ: Ուրախ եմ, որ քեզ էլ եմ տեսնում. ողջոն: Ճշմարիտ, ինչ բան քեզ ապսեղ բերեց:

ՀՕՐԱՑԻՕ: Ծովութիւնը, իմ բարի իշխան:

ՀԱՄԼԻՑ: Չեի կամենալ քո թշնամուցն անզամ լսել ալդ խօսքը: Ես առաւել դու չ'պիտի անարդես իմ լսելքը, ինքդ քեզ դրաբար տելով: Ես գիտեմ, որ դու ծով չես: Ի՞նչ գործ ունիս դու Ելզենօրում: Մենք ապսեղ քեզ արբեցութիւն կ'սովորեցնենք:

ՀՕՐԱՑԻՕ: Ես եկաւ, իշխան, ձեր հօր թաղմանը:

ՀԱՄԼԻՑ: Խնդրում եմ, մի ծաղրիր, ընկերս, ասա՛, որ մօրս հարսանեաց համար ես եկել:

ՀՕՐԱՑԻՕ: Ճշմարիտ է, հարսանիքը շատ շուտ հետևեց թաղմանը:

ՀԱՄԼԻՑ: Տնտեսութիւն, Հօրացիօ, տնտեսութիւն. թաղման ճաշկերոյթի պահած մնացորդը գործադրուեց հարսանեաց համար: Ինձ առաւել զիւրին կ'լինէր իմ ամենալատ թշնամուն հանդիպել երկնքում, քան թէ վիճակուել այս օրին: Հօրացիօ, ոհ, իմ հալքս, ինձ թում է, թէ ես նորան տեսնում եմ:

ՀՕՐԱՑԻՕ: Ի՞նչպէս, իշխան:

ՀԱՄԼԻՑ: Իմ հոգւոս աչքերով, Հօրացիօ:

ՀՕՐԱՑԻՕ: Ես ես տեսել եմ նորան: Ազնիւ թագաւոր էր նա:

ՀԱՄԼԻՑ: Մարդ էր կատարեալ, այս բառի բուն նշանակութեամբ. նորա նմանը ես չեմ դտնիլ:

ՀՕՐԱՑԻՕ: Իշխան, կարծեմ, որ անցեալ զիշեր ես նորան տեսաց: ՀԱՄԼԻՑ: Տեսար, ումը:

ՀՕՐԱՑԻՕ: Զեր հօրը՝ թագաւորին:

ՀԱՄԼԻՑ: Իմ հօրը՝ թագաւորին:

ՀՕՐԱՑԻՕ: Մեղմացրէք ձեր զարմանքը մի բոպէ, և ես ձեզ կ'պատմեմ մի հրաշք՝ հիմնուելով և սոցա վկանութեանց վերաց:

ՀԱՄԼԻՑ: Պատմիր, ի սէր Աստուծոյ:

ՀՕՐԱՑԻՕ: Երկու գիշեր շարունակ սոքա, Մարցելլօն և Բերնարդօն խորեանց պահականոցում, խորը կէս զիշերին, ահա ինչ տեսան. չանկարծ նոցա առաջն երեսում է մի կերպարանք, որ ձեր հօր նման էր, տոքից մինչեւ զլուխ զինաւորուած և հանդարաս, հանդիխաւոր կերպով անց է կինում նոցա մօտից, երեք անդամ անց ու զարձ է անում նոցա երկիւզալից աչքերի առաջն աճքան առածութեամբ նոցանից, որքան նորա գաւազանի երկարութիւնն էր, որը նա ձեռքին բռնած ունէր, իսկ սոքա ապշած և համրացած չեն կարողանում հետաքանի խօսել: Ազն ամենը նոքա պատմեցին ինձ սարսափելի խորհրդաւոր կերպով և երբորդ զիշերը ես ինքս գնացի պահականոցը, ուր մի առ մի

հաստատուեց սոցա պատմածը: Մինոյն ժամանակ, մինոյն կերպարանքով ուրուականը լավանուեց: Ես ճանաչում էի ձեր հօրը. նայեցէք ահա երկու ձեռք, սոցա մէջ այնքան նմանութիւն չկայ:

ՀԱՄԼԵՏ: Ո՞րտեղ էր այդ պատմամունքը:

ՄԱՐՅԵԼՈ: Դարաստաիի վերակ, որտեղ կանգնած են ամրոցի պահպաները:

ՀԱՄԼԵՏ: Դուք նորա հետ խօսեցիք:

ՀՕՐԱՑԻՕ: Ես խօսեցի, բայց չէր պատասխանում. միայն մի անդամ նա բարձրացրեց զլուխը, ըստ նորա ցուցման, իբր խօսել էր կամենում, բայց այդ միջոցին կանչեց աքաղաղը և այդ ձախի հետ նա արագութեամբ հեռացաւ և անհետացաւ:

ՀԱՄԼԵՏ: Զարմանալի է:

ՀՕՐԱՑԻՕ: Կեանքով երդում եմ ձեղ, իշխան, որ ասածներս ձիշտ են և մենք պարտաք համարեցինք լայտնել ձեղ:

ՀԱՄԼԵՏ: Այս, պարոններ, այդ պատմութիւնը շուարեցնում է ինձ. Այս գիշեր դուք և ես կ'երթանք պահականոցը:

ԲՈՂՈՐԾ: Երթանք, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Դուք ասում էք՝ զինուորուած էր:

ԲՈՂՈՐԾ: Այն:

ՀԱՄԼԵՏ: Գլուխ մինչև մտք:

ԲՈՂՈՐԾ: Այն:

ՀԱՄԼԵՏ: Դուք աեսաք նորա երեսը:

ՀՕՐԱՑԻՕ: Տեսանք, իշխան. սաղաւարտի երեսակալը բարձրացրած էր:

ՀԱՄԼԵՏ: Նորա հայեացքը բարկացնա էր:

ՀՕՐԱՑԻՕ: Ամելի վշտալի էր, քան բարկացու:

ՀԱՄԼԵՏ: Գունատ էր գէմքը, թէ կապտադոյն:

ՀՕՐԱՑԻՕ: Սասաիկ գունատուած էր:

ՀԱՄԼԵՏ: Եւ հայեացքը միշտ ձգնած էր ձեղ վերակ:

ՀՕՐԱՑԻՕ: Միշտ:

ՀԱՄԼԵՏ: Ինչու ես ձեղ հետ չէի:

ՀՕՐԱՑԻՕ: Կ'սարսափէիք:

ՀԱՄԼԵՏ: Շատ և շատ կարելի է: Եւ նա երկար ժամանակ մընաց ձեղ հետ:

ՀՕՐԱՑԻՕ: Այնքան որքան հարկաւոր է առանց շտապելու համարել մինչև հարիւր:

ՀԱՄԼԵՏ: Մօրուքը ալեզարդ էր:

ՀՕՐԱՑԻՕ: Ինչպէս նորա կենդանի ժամանակ:

ՀԱՄԼԵՏ: Այս գիշեր և ես կ'զամ պահականոցը: Գուցէ նա կըրկին լուսուուի:

ՀՕՐԱՑԻՕ: Երաշխաւոր եմ, որ կ'լավանուի:

ՀԱՄԼԵՏ: Եւ եթէ նա կրկին կընդունէ հօրս կերպարանքը, ես հետը կ'խօսեմ թէպէտ դժոխքն ինքը բանալու լինի իւր բերանը և հրամակէ ինձ լուել: Խնդրում եմ ձեզանից, որ մինչև այժմ պահպանել էք այդ գաղտնիքը, պահպանեցէք զարձեալ ապագալում, և ինչ որ տեսնէք այս երեկու, ամեն բանին նշանակութիւն տուէք և ոչ լեզու: Ես կը գնահատեմ ձեր բարեկամութիւնը: Մնաք բարեւ, կէս գիշերուազ մօտ դարաստափի վերակ մինք կ'տեսնումնք:

ԲՈՂՈՐԾ: Ընդունեցէք, իշխան, մեր խորին լարդանքը:

ՀԱՄԼԵՏ: Ոչ լարդանք և ոչ ծառակութիւն կ'պահանջեմ ձեզանից, այլ բարեկամութիւնը. բարեւ միաք:

(Հօրոցի Մարցէւս, Իւրաբրու: Գնում էն:)

Հօրս գինաւորուած ուրուականը վտանգներ է սպառնում. եղեռնագործութեան զիւտը...ոհն, գոնէ շուտով փիշերը դար: Բայց մինչ այն ժամանակ, հանդարտութիւր իմ ողի: Եղեռնագործութիւնը սաքի կը կանգնի, զարշելի գործեր երեսն կ'զամ աշխարհիս երեսին և եթէ դուք նոցա ծածկել կը ցանկանափիք ամբողջ հողագնդի ննըքու, նոքա զարձեալ դուրս կ'սողափին:

(Գնում է:)

ՏԵՍԻԼ Դ.

ԱԱԷՐԾ, ՕՖԵԼԻԱ (ՄՊԻՆՈՒՄ ՀԱՅ:)

ԱԱԷՐԾ: Ճանապարհաս բոլոր իրեղէնները նաւի վերաց են: Զըմոռանաս, քոյքիկ, որ եթէ գնացող նամերի համար լաջողակ քամմի մնի և կամ բարեբազդ միջոց՝ չ'ծուլանաս նամակներ գրելու ինձ:

ՕՖԵԼԻԱ: Գու կասկածում ես:

ԱԱԷՐԾ: Ինչ որ կ'վերաբերի Համլէտի սիրահարական ցնորքներին, դա մի աշխարհավին հաճուամոլութիւն է: Նայիր դոցա վերաց, ինչպէս նորա արեան բորբոքման վերաց, ինչպէս մի մանուշակի վերաց որը բնութեան շքեղ երիտասարդութեան արդիւնքն է, որը թէն վաղահաս է, բայց անհաստատ, գեղեցիկ է, բայց կարճատե, բապէական անուշահոսութիւն և քաղցրութիւն, աւելի ոչինչ:

ՕՖԵԼԻԱ: Միմիան աղդքան և առաւել ոչինչ:

ԱԱԷՐԾ: Ոչինչ, որովհետեւ մեր բնութեան զարգացումն միմիան ջղերի և մարմնու զարգացմամբ չէ սահմանափակվում, այլ որքան վսեմ և բարձր է տաճարը, աճքան և բարձր է հոգու և խելքի ներքին սրբագործութիւնը: Գուցէ այժմ նա քեզ ճշմարիտ սիրում է և խորամանկութիւնը կամ որ և իցէ մթին խորհուրդ գեռ չէ արատաւորել նորա հոգուու առաքինութիւնը: Բայց դու պէտք է վախենաս, ի նկատի առնելով նորա բարձր դիրքը, որ նա ինքը իւր վերաց իշխել չէ կարող, որովհետեւ նա իւր բարձրագոն ծննդեան պտուղն է: Չի կարող նա, ինչպէս մննք հասարակ մանկանացուներա, իւր սրտի սիրածը իւրեան կին ընտրել, որովհետեւ նորա ընտրութիւնիցն է կա: Խուած իւր ամբողջ աերութեան խաղաղութիւնն և բարօրութիւնը: Ուատի և նորա ցանկութիւնը սահմանափակվում է այն մարդոց ցանկութեամբ, որոնց վերաց նա գլուխ է: Եւ եթէ նա դարձեալ կ'իսուէ քեզ հետ իւր սիրու մասին, դու աւելի խոհեմ կ'լինես, եթէ նորան կ'հաւասաս ախքան, որքան նա ըստ իւր կոչման և զօրութեան կարող է իրագործել իւր խօսքերն այն աստիճան, որքան թուլ կ'տառ Դանիայի ժո-

դովուրդի ընդհանուր ձախը: Մտածիր ուրեմն որքան կարող է արատաւորել քո պատիւը, եթէ հաւասարմութեամբ լսես նորա սիրահարութեան երգերը—կ'կորցնես սիրող, կամ քո ողջախոհական գանձը նորա անզսպելի շողոքորթութեանը մատչելի կանես: Վախեցիր դորանից, Օֆելիա, վախեցիր, սիրուն քուրիկս, հեռու կաց երկիւզալի ցանկութիւններից: Կուսերից ամենամաքուրն արդէն անպարկեցտէ, երբ նորա գեղեցկութիւնը մերկանում է լուսնի առաջ: Զրաբարսութիւնից սրբութիւնն անգամ վախչել չէ կարող: Որդը ուստում է գարնան զաւակներին, առաջ քան կ'բացուի կոկոնը: Երիտասարդութեան առաւուեանը երկիւզալի փշում է թունաւոր քամին նրբագոյն ցողի վերաց: Զգուշացիր, քուրիկ, երկիւզը ամենալաւ պահպանութիւնն է: Բաւական է երիտասարդութիւնն համար և այն պատերազմը, որը ինքն մզում է իւր հետ, արտաքին թշնամիքն աւելորդ են:

ՕՖԵԼԻԱ: Քո գեղեցիկ խրատը կ'լինի իմ որտիս պահապանը: Բայց և դու, սարի եղբայր, չ'վարուես այնպէս, ինչպէս խխատ քարովիչները, ցոց ասալով ինձ սուլ և փշու ձանապարհ դէպի երկինք: Դու չ'եղուես ինքդ իբրև թեթևամիտ և անհոգ մոլեգնեալ՝ դէպի դատարկաշրջկների ձանապարհը, քո սեպհական խրատների հակառակ:

ԱԱԷՐԾ: Իմ մասին դու անհոգ եղիքը բայց ևս ուշացագ: —Ահա և հայս... Կրկին օրհնեցէք և բարութիւնը կրկնապատիկ կ'իջնէ իմ վերաց:

(ՄՊԻՆՈՒՄ Է ՊՈՀՆԻՌԱ-Ն:)

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՑՆՔ և ՊՈԼՅՆԻՌՈՒՄ

ՊՈԼՅՆԻՌՈՒՄ: Դու դեռ այսուեղ ես, Լաէրտ, ամաշիր: Պամին բարձրացրել է արդէն առավաստները—քեզ սպասում են: (Դնելով հետո Լաէրտի գլուխ վերաց:) Լինի քեզ հետ իմ օրհնութիւնը: Խրատներս ապաւրիր հոգուող մէջ: Չ'խօսես այն՝ ինչոր կ'մտածես, և խակ մտքերդ չ'կատարես: Ամենքի հետ վարուող եղիքը բայց ոչոքի հետ սերտ մի

բարեկամանար: Փորձած բարեկամներիդ երկաթեաչ կապէրով կապիր
սրտիդ մէջ, բաց չ'ապակամնես ձեռքերդ՝ ամեն անց ու դարձ անող-
ների հետ եղբայրանալով: Փախիր խոռվութիւնից, բաց եթէ կոռու-
ցար, պահիր քեզ այնպէս, որ քո հակառակորդը քեզանից վախինար:
Ամենքին լսիր, բաց քչերի հետ խօսիր: Ընդունիր խրաքանչիւրի
խրատը, բաց պահապանիր քո սեպհական կարծիքը: Հագուստդ լին
հարուստ և ոչ պահապարդ, շքեղ և ոչ ծաղրածու: Փարիզեցու ճաշա-
կը նուրբ է և աղնիւ: Դրամ պարտք մի վեր առ. և մի տուր, որով
հետեւ փոխառութեան հետ կորչում է և բարեկամութիւնը: Տնտեսու-
թեան մէջ պարտքը թոն է: Գլխաւորապէս դու ինքդ քեզ հաւա-
տարիմ եղիր և անուհետեւ, ինչպէս երկու անգամ երկու, դու չես լի-
նիլ շինծու մարդ: Մնաս բարեւ, թնդ երկնալին օրհնութիւնը հաս-
տառէ քո մէջ իմ ասա խրատները:

ԱԱԷՐԾ: Մնաք բարեւ, հայր իմ, մնաս բարեւ, ՕՓէլիա: Չ'մո-
ռանաս խօսքերս:

ՕՖԷԼԻԱ: Նոցա ես ամուր փակեցի սրտիս մէջ և բանալին հե-
տըդ տար:

ԱԱԷՐԾ: Մնաս բարեւ: (Գ.հում է:)

ՊՈԼՅՆԻՈՒՄ: Նա քեզ հետ ինչ էր խօսել, ՕՓէլիա:

ՕՖԷԼԻԱ: Իշխան Համլէտի մասին:

ՊՈԼՅՆԻՈՒՄ: Ասն, ինձ ասացին թէ նա քանի ժամանակ է իւր
ազատ ժամերը քեզ հետ է անցկացնում և թէ դու ինքդ ուրախ
ես ազդ բանին: Եթէ ազդպէս է, ինչպէս ինձ նախազգուշացրել են, ես
ստիպուած եմ, ՕՓէլիա, նկատել քեզ, որ դու այնպէս չես հասկանում
քեզ, ինչպէս պատշաճ է իմ դասեր և ինչպէս պահանջում է քո պա-
տիւը: Ի՞նչ կատ ձեր մէջ, ասա ինձ ճշմարիտը:

ՕՖԷԼԻԱ: Չ'զիսեմ, հայր. իշխանն ինձ ասաց, որ սիրում
է ինձ:

ՊՈԼՅՆԻՈՒՄ. Սէր—լիմարութիւն: Դու խօսում ես ինչպէս մի
անփորձ և լիմար աղջիկ: Դու հաւատում ես նորա ասածին:

ՕՖԷԼԻԱ: Ինքս չ'զիսեմ, ճշմարիտ, թէ ինչ կարծեմ:

ՊՈԼՅՆԻՈՒՄ: Իսկ ես քեզ կ'ասեմ,—կարծիր, որ դու երեխակ ես,
եթէ նորա հաւասարիքը ճշմարտութեան տեղ ես ընդունում, նոքա
ոչինչ չ'արժեն: Դու ինքդ քեզ թանկ գնահատիր, ալլապէս ինձ փ-
մար զրութեան մէջ կ'ձգմա:

ՕՖԷԼԻԱ: Նա ինձ չապանեց իւր սէրը մեծ լարգանքով և պար-
կեշտ ձեռվ:

ՊՈԼՅՆԻՈՒՄ: Ասն, եթէ կամիս, ամենալին բան կարելի է պարկեշ-
տութիւն անուանել:

ՕՖԷԼԻԱ: Նա սրբազն երդումով պնդում էր իւր խօսքերը:

ՊՈԼՅՆԻՈՒՄ: Որոգավթ թուչնակների համար: Ես գիտեմ թէ որ
քան առաստէ հոգին երդումներով, երբ արիւնը կ'եռաց մեր մէջ, բաց
դա առանց կրակի մի կազծ է, որ փալում է միան: Նա հանգչում է
բառերի ձայնի հետ: Ազուհետեւ ժլատ եղիր քո կուսական ներկայու-
թեան մասին և քո զալուկին ամենքին մի արժանացրու: Ի՞նչ կը
վերաբերի իշխան Համլէտին՝ հաւատա նորան անքան՝ որ նա երի-
տասարդ է և ազատ իւր բարքով, ինչպէս որ դու ազատ լինել չես կա-
րող...մի խօսքով—մի հաւատալ նորան, նա քեզ կ'խարէ: Նորա խօսքե-
րը այն չեն, ինչ որ արտաքուստ կ'երևան, լանցաւոր զուարձութեան
միջնորդներ են նոքա: Միանգամ այն, ընդ միշտ ես կամենում եմ,
որ ազուհետեւ դու բառերը իզուր չ'վատնես Համլէտի հետ դատար-
կաբանելու համար. լանում ես: Այս եմ քեզնից պահանջում: Այժմ կա-
րող ես գնալ:

ՕՖԷԼԻԱ: Հնազանդվում եմ:

(Գ.հում էն:)

կուած են հաւատարմութիւնից; Միենան վիճակը կրում է և անհատը, երբ մարդը զրոշմուած է ընութեան գծով՝ օրինակ՝ երբ նորա չափից դուրս կրակատ բնաւորութիւնը մինեցնում է խելքի զօրութիւնը: Մասնաւոր պակասութիւնները, ընդհանրութեան կարծիքով, խաւարեցնում են ըոլոր բատկացեալ առաքինութիւնները, թէպէտ նորա լինին մաքուր իբրև սրբութիւն, ազնքան վսեմ, նորա որքան կարող են աղպէս լինել: Աւազի չափ չարութիւնը ոչնչացնում է խակական առաքինութիւնը:

(Մոհուած է ուրուովկանը)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ.

(ԴԱՐԱՏԱՓ)

ՏԵՍԻԼ Ա.

Մանում են. ՀԱՄԼԵՏ, ՀՕՐԱՅԻՇ և ՄԱՐՑԵԼՈ:

ՀԱՄԼԵՏ: Սաստիկ ցուրտ է, քամին էլ իշխատ:

ՀՕՐԱՅԻՇ: Աւն, ցուրտ է:

ՀԱՄԼԵՏ: Քանին է ժամը:

ՀՕՐԱՅԻՇ: Կէս զիշերին մօտ է:

ՄԱՐՑԵԼՈ: Ո՛չ, արդէն անցել է:

ՀՕՐԱՅԻՇ: Ճշմարիտ, չխմացա՛: Ուրեմն մօտ է ժամանակը, երբ ուրուականը սովորալար լայտնվում է: (Բէմէ եղեկ էր ծառապութեան չափը և լնդանութիւնը) Սա ինչ է իշխան:

ՀԱՄԼԵՏ: Թագաւորը ամբողջ զիշեր արթնութեան և զուարձութեան մէջն է անցկացնում. խմում է և եռանդով պարում: Հազիւ նա լցնում է զինու բաժակը, որ երաժշտութեան և թնդանօթի որոտումը աւետում է նոցա լաղթութիւնը զինու դէմ:

ՀՕՐԱՅԻՇ: Դա սովորութիւն է:

ՀԱՄԼԵՏ: Աւն, բայց ըստ իմ—թէպէտ պատեղ ծնած եմ, սական աւելի աղեիւ է աղդպիսի սովորութեանց մուացումը, քան թէ նոցա պահպանելը: Գիշերավն ինչջուքներն և զինարբուքը վատ համբաւ տարածեցին մեր մասին բոլոր Արեկելեան և Արևմտեան ազգերի մէջ: Նորա մեղ արբեցող են անուանում և զանազան անուանակոչութիւններով մեղ միանդաման խալտառակում են և աղդպիսի մեր գործերը, որքան որ նորա գեղեցիկ և մեծամեծ լինին, խակապէս զըր-

ՀՕՐԱՅԻՇ. Նաէեցէք, իշխան, գալիս է:

ՀԱՄԼԵՏ: Պաշտպանեցէք մեղ, ով սերովքէք երկնից: (Լոռութեան:) Ո՞գի ես դու բարութեան, թէ անիծեալ սաստանաչ, դու բերում ես զրախատի՝ զեփիւռ, թէ դժոխափին փոթորիկ, կորստաբեր թէ չնորհալի են քո գիտաւորութիւնները: Դու լայտնվում ես ազնպիսի հրաւիրական դէմքով, որ ես պարտ եմ խօսել քեզ հետ, պատրաստ եմ անուանել քեզ Համլէտ, թագաւոր, հայր, Դանիակի իշխան և Տէր: Ո՛չ, պատասխանիր ինձ, մի մատնիր ինձ մարդասպան անդիտութեան: Ասա, ինչու քո սուրբ սակորները պատառեցին քո պատանը, ինչու գերեզմանդ, ուր մենք ահսանք քեզ ազնքան հանգիստ պառկած, բացեցիւր ծանը և մարմարեակ կափարիչը, որ արտաքսէ քեզ: Ի՞նչ կ'նշանակէ, որ դու, անկենդան դիմէ, նորից զինեալ լուսաւորվում ես լուսնի լուսով, սարսափով պատում ես զիշերը և մեղ անդէտներին անհասանելի մաքով տանջում: Ասա, ինչու համար և ինչ պէտք է անես:

ՀՕՐԱՅԻՇ: Նա նշանով կանչում է, որ հետեւք նորան, որովհետեւ կամենում է ձեղ մի բան հաղորդել:

ՄԱՐՑԵԼՈ: Նաէէք, ինչ քաղցր ժպիտով ձեղ մի ալ տեղ է հրաւիրում, բայց դուք նորան մի հետեւք:

ՀՕՐԱՅԻՇ: Ո՛չ, մի գնաք, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Աւատեղ նա խօսել չէ կամենում: Ես նորան կ'հնտեսմ:

ՀՕՐԱՅԻՇ: Մնացէք, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ կատ վախենալուև կեանքս իմ աչքին աւելի արժան է, քան գնդասեղը, իսկ հոգուց նա վնասել կարող չէ։ Հոգիս նոյնպէս անմահ է, ինչպէս ինքը։ Նա նորից կանչում է, — ևս զնում եմ։

ՀՕՐԱՅԻՒԹ: Բայց նա խաբելով ձեզ ծովը կ'հանէ, կամ ափերի մերայ, ահարկու ժայռերի գագաթը կ'հանէ և անտեղ փոխելով իւր կերպարանքը, դեմ կերպ ընդունելով, նա կ'խենթացնէ ձեզ։ Մասածեցք այդ մասին։ Միայն տեղի ամացութիւնը ինքն ըստ ինքեան կարող է ձեզ յուսահասութեան հասցնել, երբ նաէք անդունդը և լըսէք ալլօների շառաջխնը։

ՀԱՄԼԵՏ: Նա զարձեալ կանչում է, գնամ, — ևս էլ զալիս եմ։

ՄԱՐՑԵԼԼՈ: Իմ իշխան, դուք չ'պիտի գնաք։

ՀԱՄԼԵՏ: Հեռացիր ինձանից։

ՀՕՐԱՅԻՒԹ: Լսեցէք մեզ և մի գնաք, իշխան։ (Բահում էն նորան։)

ՀԱՄԼԵՏ: Ճակատապիրն ինձ կանչում է և ամենափոքը ջղերս ալճքան զօրեզանում են, որքան զօրել են Նաւրիակ առիւծի ջղեր։ (Ուբուռինը իշխում է։) Դարձեալ կանչում է, թողէք, պարոններ։ (Աշտոռուչով նոյնակց։) Երդվում եմ Աստուծով, որ ես նորան էլ ուրուական կ'զարձնեմ, ով որ կհամարձակէ արգելու ինձ։ Հեռացէք։ Գնամ, ես հետևում եմ քեզ։ (Գնամ է սուրուական յեղեկց։)

(Բահում էն գնամ էն։)

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՈՐԴ

(ՊԱՐԱՍԱՓԻ ՀԵՌԱԽՈՐ ՄԱՍԸ)

ՏԵՍԻԼ Ա.

Մանում են. ՈՒՐՈՒԱԿԱՆ և ՀԱՄԼԵՏ։

ՀԱՄԼԵՏ: Ո՞ւր ես տանում ինձ, կանդ առ. ևս էլ չեմ դալ։ ՈՒՐՈՒԱԿԱՆ, Լսիր։

ՀԱՄԼԵՏ: Պատրաստ եմ։

ՈՒՐՈՒԱԿԱՆ, Մօտ է արդէն ժամը, որ պիտի վերադառնամ ախնտել, որի անունից միայն սարսափում են մեղաւորները։

ՀԱՄԼԵՏ: Ո՞հ, հայր իմ։

ՈՒՐՈՒԱԿԱՆ, Մի ցաւիր իմ մասին, այլ ուշադրութեամբ լըսիր, ինչ պատմելու եմ քեզ։

ՀԱՄԼԵՏ: Ո՞հ, խօսիր, իմ պարտքս է լսել քեզ։

ՈՒՐՈՒԱԿԱՆ, Եւ լսելուց մետք վրէժինդիր լինել։

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ։

ՈՒՐՈՒԱԿԱՆ, Ես եմ հօրդ անմահ ուրուականը, որ զատապարտուած եմ մինչև գիշերուակ որոշեալ ժամը թափառել, իսկ ցերեկով չարչարուել անչէջ բոցի մէջ, մինչև կ'արգութեն և կ'ոչնչանան իմ բոլոր երկրակին մեղքերը։ Եթէ ինձ արգելած չ'լիներ բախնել քեզ իմ բազդիս զադոնիքը, իմ պատմութեանս ամենաթեթե բառն անդամ կ'տանջէր հոգիդ, կ'սախպէր քո զոդ աչերիգ դուրս գալ խրիանց տեղից, կ'սառեցնէր երիտասարդ արիւնդ, զանդուր մազերդ կ'ցցուէին ինչպէս բարկացոտ վայրենու մազերը. բաց յաւիտենական զադանիքը մարմնից և արիւնդից գոյացած ականջների համար չեն։ — Լսիր, լսիր,

լոիր, եթէ դու սիրել ես քո հօրը:

ՀԱՄԼԵՏ: Ո՞հ, երկինք:

ՈՒՐՈՒՍԿԱՆ: Վայէծ առ նորանից գարշելի և անլուր սպանութեան համար:

ՀԱՄԼԵՏ: Սպանութիւն:

ՈՒՐՈՒՍԿԱՆ: Ամենազարշելի—ինչպէս և ամեն սպանութիւն. բայց հայդ սպանուած է աւելի գարշելի, աւելի անլուր և աւելի անբնական մահով:

ՀԱՄԼԵՏ: Պատմիր շուստի, և ես արագ թեմրով, ինչպէս միտքը, ինչպէս սիրոց ցնցումը, դէպի վրէժխնդրութիւն կ'ուլանամ:

ՈՒՐՈՒՍԿԱՆ: Տեսնում եմ քո պատրաստականութիւնը: Եւ եթէ դու վնէիր զանգաղ, ինչպէս թառամած իսոս, զարձեալ սիթափելով կ'սարսափէիր: Ասիր, Հարուտ: Լուր են տարածել իբր թէ արգիտում քնած ժամանակ ինձ օձը թունաւորեց և ես իբր դորանից մեռաջ և մահուանս այդ կեղծ լուրը նենգաբար խարել է ամբողջ Պանիան: Իմացած եղիր, աղջիւ երիտասարդ, որ մահարմր թոյն մարմուս մէջ լցնողը այժմ զարդարուած է իմ թագովս:

ՀԱՄԼԵՏ: Ո՞հ, նախագուշակումն: Հօրեղբայրոս:

ՈՒՐՈՒՍԿԱՆ: Այն, խելքի հրապոյցներով և դաւաճանական ձեռքերով—անիծեալ լինին խելքը և ձեռքերը, որ խարեբարութեան կ'ծառափէն—սրբապլղծ և պոռնիկ անսառնը իմ թագուհուն հնազանդեցրեց իւր խաստառակ ցանկութեան: Ո՞հ, Համլէտ, որքան սարսափելի էր այդ անկումը. ինձ՝ որ անչպէս անփոփոխ սիրով, ինչպէս երգումն սիրում էր նորան փոխանակել և ընկնել այնպիսի մարդու զիրկը, որ ոչինչ է ինձ հետ համեմատելով: Բայց ահա փչում է առաւօտեան զեփիւռը... կարծացնեմ պատմութիւնս: Ան ժամանակ՝ երբ ես ըստ իմ սովորութեան ճաշից իւտոյ քնած էի պարախուում, հօրեղբայրդ ծածկաբար մօսեցաւ ինձ և փոքրիկ անօթից լցրեց ականջիս մէջ թոյն, որ շատ վնասակար է մարդու բնութեան համար, արագութեամբ խառնութով արեան հետ: Այդպէս՝ քնած ժամանակս՝ իմ եղբօր ձեռքը զրկեց ինձ կեանքից, թաղից և թաղուհուց. սպանուեցաւ ես անպատճաստ,

առանց հաղորդուելու, առանց թոյլ տալու ինձ քաւել մեղքերս և վերջացնել հաշիներս աշխարհի հետ: Ո՞հ, սարսափելի է, սարսափելի և սարսափելի—Եթէ դու ունիս բնութիւն քո մէջ, դու չ'պիտի համբերես, որ Դանիակի թագաւորական անկողինը պղծութեան անկողին

դառնաւի: Բայց դաստաբարտելով այդ գործը, դու չ'պիտի թունաւորես

քո հոգիո: Թոն վրէժդ չ'մերձենակ մօրդ: Թոն այդ բանը Աստուծուն

և իւր ներքին դաստաւորին. Նոքան կ'չարչարեն նորան: Մնաս բարեն մնաս բարե և մի մոռանար ինձ:

(Գնուած է:)

ՀԱՄԼԵՏ: Տէր երկնքի և երկրի, էլ ինչ կաէ, դժոխքն էլ պիտի կանչեմ: Ո՞չ, հանգստացիր, սիրու իմ. ո՞հ մի ծերանաք, նեարդեր և կմալք, որքան կարելի է ամուր պահպանեցէք ինձ: Ե՞ս մոռանամ քեզ: Աքն, խեղճ ուրուական, չեմ մոռանալ. որքան ուղեղումս վիշողութիւն կաւ—կ'վշեմ քեզ: Աքն, կ'ջնջեմ վիշողութեանս թերթերից բուրը պատմութիւնները, գրեանց քաղուածքները, տպաւորութիւնները, անցնեալ հետքերը, մտածութեանս պատուիները և երիտասարդութեանս դիտութիւնները: Քո խօսքերը միանին, հայր իմ, կ'ապրեն սրտիս գրքովի դութիւնները: Քո խօսքերը միանին, մէջ, երգվում եմ երկնքի անունով: Ո՞հ, չարագործ և անհաւատարիմ, զեզան էր նողիւնի ժամանակ անունով: Դոնէ Դանիակում կարելի է: Է չարագործ լինել չափանակ ժամանակում կարելի է: (Գրուց է:) Հիմա, հօրեղբայր, դու այդ տեղ ես: Այժմ նորա բառերը: «Մնաս բարե, չ'մոռանաս ինձ»: Երդուցիր, որ չեմ մոռանալ:

ՀՕՐԱՑԻՈ: (Բէմից բռուրու:) Խշան, Խշան:

ՄԱՐՑԵԼՈ: (Բէմից բռուրու:) Հէ, ուր էք, Խշան: Աստուծ ձեզ փրկէ:

ՀԱՄԼԵՏ: Ամէն:

ՄԱՐՑԵԼՈ: (Բէմից բռուրու:) Ուր էք, Խշան:

ՀԱՄԼԵՏ: Ալսեղ, թուչնակներս:

(Մոհուած էն Հօրեցիք և Մարցելո:)

ՄԱՐՑԵԼՈ: Հը, ինչ եղաւ, Խշան:

ՀՕՐԱՑԻՕ: Արդեօք մի բան իմացաք:
 ՀԱՄԼԵՏ: Ո՞չ, հրաշք է:
 ՀՕՐԱՑԻՕ: Պատուցէք, իշխան:
 ՀԱՄԼԵՏ: Ո՞չ, դուք կ'սարածէք:
 ՀՕՐԱՑԻՕ: Ոչ, ոչ, իշխան, երդում եմ:
 ՄԱՐՑԵԼԼՈ: Եւ ես:
 ՀԱՄԼԵՏ: Երդականցէք... ով կարող էր կարծել, բայց դուք պիտի
 պահեք գաղաճիքը:

ՀՕՐԱՑԻՕ:
 և ՄԱՐՑԵԼԼՈ: } Երդում եմ, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Դանիակում չկատ ոչ մի արարած անպիտան, չարա-
 գործ, որ միմնոն ժամանակ չ'լինի անխիզ:

ՀՕՐԱՑԻՕ: Իշխան, այդ բանը մեղ ծանօթացնելու համար կա-
 րիք չկար, որ մեռաւները գերեզմանից դուրս դադին:

ՀԱՄԼԵՏ: Երաւոնք ունիս և այդ պատճառով առանց երկար
 բացատրութիւնների սեղմենք միմնանց ձեռքերը և մեկնուենք:
 Դուք—ուր որ կ'կանչեն ձեզ ձեր գործերը և բաղձանքները. իսկ ես,
 ես կերթամ աղօթեմու:

ՀՕՐԱՑԻՕ: Իշխան, ասածներդ անիմաստ և անկազ բառեր են:

ՀԱՄԼԵՏ: Նոքա վիրաւորում են քեզ, ցաւում եմ, ի սրտէ յա-
 սում եմ:

ՀՕՐԱՑԻՕ: Վիրաւորելու բան չկատ ակստեղ:

ՀԱՄԼԵՏ: Կատ, սուրբ Պետրոսը վիկա, որ կատ: Ուրուականի մա-
 մին ես կասմի, որ նա աղնիւ է: Իսկ ինչ կ'վերաբերէ ձեր ցանկու-
 թեան՝ իմանալ թէ ինչ անցաւ իմ և նորա մէջ—այս անդամ դապե-
 ցէք այդ ցանկութիւնը: Եւ մասու, իմ բարի ընկերներ, իմ բարեկամ-
 ներ, աշակերտութեանս աշխատակիցներ, խօստացէք կատարել իմ
 փոքրիկ խնդիրս:

ՀՕՐԱՑԻՕ: Ի՞նչ խնդիր:

ՄԱՐՑԵԼԼՈ: Պատրաստ ենք,

ՀԱՄԼԵՏ: Ոչոքի չպատմէք, ինչ որ աեսաք ակս գիշեր:

ՀՕՐԱՑԻՕ: Ոչոքի չեմ պամիլ:

ՄԱՐՑԵԼԼՈ: Եւ ես:

ՀԱՄԼԵՏ: Ոչ, սրիս վերակ երդուեցէք:

ՄԱՐՑԵԼԼՈ: ՄԵնք երդուեցինք արդէն:

ՀԱՄԼԵՏ: Ոչ, սրիս, սրիս վերակ:

ՈՒՐՈՒԱԿԱՆ: (Գետէ բանից) Երդուեցէք:

ՀԱՄԼԵՏ: Ա՛, բարեկամ, զու ակտեղ ես: Ե՛հ, պարոներ, դուք
 լսում եք, որ բարեկամս դագաղի մէջ քնած չէ: Կամհնում եք եր-
 դուել:

ՀՕՐԱՑԻՕ: Ի՞նչ բան:

ՀԱՄԼԵՏ: Դուք երեք չեք խօսիլ ան բանի մասին, ինչ որ
 տեսաք. երդուեցէք սրիս վերակ:

ՈՒՐՈՒԱԿԱՆ: (Գետէ բանից) Երդուեցէք:

ՀԱՄԼԵՏ: (Hic et ubique) Ակտեղ և ամենուրեք: Փոխենք
 տեղներս: Ակտեղ, պարոններ, դրէք ձեր ձեռքերը սրիս վերակ: Եր-
 բեք չ'խօսել, ինչ որ տեսել եք,—երդուեցէք սրովս:

ՈՒՐՈՒԱԿԱՆ: (Գետէ բանից) Երդուեցէք:

ՀԱՄԼԵՏ: Փառաւոր գետնամուկ ես դու: Դարձեալ փոխենք
 տեղերս բարեկամներ:

ՀՕՐԱՑԻՕ: Անիմանալի զարմանք է:

ՀԱՄԼԵՏ: Այդ զարմանքն ընդունիր քո բնակարածում իբրև օ-
 տարականի: Երկնքում և երկրի երեսին շատ բան կատ, Հօրացիօ,
 որ մեր փիլիսոփականութիւն երազել անգամ չէ կարող: Բայց ակս տեղն
 եւ փոխենք:—Երդուեցէք և ակտեղ, ինչպէս որ առաջ, ինչպէս որ ես
 ինքս կը վարուեմ—գուցէ ես հարկաւոր համարեմ խելագար ցուց տալ
 ինձ—ոչ ձեռներդ ակտէս մեկնելով, ոչ զլուխը շարժելով, ոչ ակտի-
 սի բառերով՝ «լաւ է, լաւ, մենք գիտենք»՝ ամենք կարողենք, եթէ
 կամէիք», «եթէ ցանկութիւն լինէր խօսելու», «եթէ համարձակու-
 էլնք», և ոչ մի ակտիսի ակնարկութիւններով ցուց տալ, որ իմ մա-
 մին մի բան գիտէք: Երդուեցէք և Ակտուած թոնլ խոր օգնութեամբ և

ողորմութեամբ պահէ ձեզ այս բաներից. ոչ միհն էլ չանել երբէք:
ՈՒՐՈՒԱԿԱՆ. (ԳԵՐԱԿ ՊԱՀԱԳ.՝) Երդումցէք:

ՀԱՅԼԵՑ: Հանդարտուիր խոռվինալ ոդի. Ալսպէս ահա, պարոն-
ներ, իմ բոլոր առ ձեզ ունեցած սիրով ձեզ եմ յանձնում իմ անձը:
Եւ ամեն բան, ինչ որ այս խղճուկ Համլէտը՝ կարող է անել, որ ապա-
ցուցանէ իւր սէրը և բարեկամութիւնը, Աստուծով կ'անէ: Գնանք
միասին և մատները ձեր շրթունքներից չ'հեռացնէք: Փամանակի կա-
պը խղուեցաւ, ոհ, անիծեալ բաղդ, ինչու ծնուեցալ նորան կապե-
լու: Երթանք, երթանք պարոններ:

(ԳԽՈՎ ԷՇ.՝)

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ :



ԱՐԴՐՈՒԱ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

(ՍԵՆԵԱԿ ՊՈԼՈՆԻՈՒՄԻ ՏԱՆՅ)

ՏԵՍԻԼ Ա.

ՄՊԱՆՆ ԷՇ ՊՈԼՈՆԻՈՒՄ և ՐԵՑՆԱԼԴՈ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Այս փողերը և թղթերը դու իրան կըտաս:
ՐԵՑՆԱԼԴՈ: Շատ լաւ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Լաւ կըլինէր, սիրելի Ռէնալդօ, եթէ դու առաջ
քան ացելես նորան, տեղեկութիւններ ժողովէիր նորա վարք ու բար-
քի մասին:

ՐԵՑՆԱԼԴՈ: Ես ալդպէս էլ մոտագիր էի:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Գեղեցիկ, շատ գեղեցիկ. Նախ և առաջ դու պի-
տի իմանաս թէ Փարիզում Դանիացիներից ով է բնակվում, վետոյ թէ
նոքա անտեղ ինչպէս են ապրում, որտեղ են բնակվում, ում հետ ծա-
նօթութիւն ունին և ըրքան են ծախսում: Ալդպիսի կողմնակի ճանա-
պարհներով դու կ'իմանաս, որ նոքա ճանաչում են որդուս, շարունա-
կիր հարցեր, բայց ոչ ուղղակի, ալ ակնարկներով թէ դու նորան
ախպէս հեռուից կասես, օրինակ, «Ճանաչում եմ նորա հօրը, բարե-
կամներին, մատամբ և նորան»: Հասկանում ես:

ՐԵՑՆԱԼԴՈ: Հասկանում եմ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: „Մասամբ և նորանու բաց կ'աւելացնես ոչառ
քիչ” և թէ „նա իմ գիտեցածն է, նա պիտի կոռուսէր լինի,” այսպէս
և աճպէս, և ազն: Եւ ազտեղ դու կարող ես գրել նորան ինչ կամիս,
միմիան աճպիսի բան, որ նորան չի անպատճամ—զդուշ եղիր աճ-
պիսի բաներից, որոնք աղատութեան և երիտասարդութեան չառուկ են:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Օրինակ թղթախաղ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Այս, արքեցողութիւն, կեր ու խում, մենամարտու-
թիւնների փափագ, կոռուսիրութիւն, բղջախոհութիւն, այդ ամենը
կարելի է:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Բաց այդ ամենը կ'անարգէ նորա պատիւը:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Երբէք, եթէ դու պատմածդ համեմով համեմնա:
Դու կարիք չունիս նորան պարսաւելու: Դու խօսիք նորա պակա-
սութեաց վերաց աճպէս, որ նորա վերաբերութիւն նորա աղատամու-
թեան, կրակու բնաւորութեան, արեան անդուսպ չուզման,—ինչ որ
ամենի հետ էլ կը պատահի:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Բացյ, իմ բարի պարոն...

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Դու կամենում ես իմանալ, թէ բանն ինչու համար է:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Շատ կը փափագէի իմանալ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Ահա ինչու համար է, ասեմ քեզ իմ հաշիւս.—կար-
ծեմ ուղիղ հաշիւ է: Երբ դու նորան ալզպէս պարսաւես, ներկաց-
նես թէ նա բոլորովին շփոթուել է իւր գործերի մէջ, նա—նկատիր
այս—ում հետ որ դու խօսում ես, ումը կամիս փորձել, եթէ նա զի-
տէ նորա պակասութիւնները—հաւատան ինձ, անպատճառ կհամաձաւ
նէ քեզ հետ աճպիսի բառերով: «Ողորմած Տէր» կամ «իմ բարե-
կամ», կամ «ամենասիրելի», ինչպէս նոյս երկրումն ընդունուած է:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Դեղեցիկ է:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Այն ժամանակ կը համաձանի նա, —նա ինչ էի ու-
զում ասել, ես ճշմարիս ինչ որ, ինչ որ կամենում էի ասել,—մրտեղ
միացի ես:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Դուք ասում էիք թէ, նա կը համաձանի ինձ հետ,
կասէ «իմ ընկեր» «ամենասիրելի»:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Այս, նա կը համաձանի ալսպէս, «ձանաչում» եմ,
կամէ նա, այս պարոնին, տեսել եմ նորան երէկ, միւս օրը, կամ այս
ինչ օրը, սորա կամ նորա հետ և աճնտեղ. ինչպէս կամէք, նա մեծ
թղթախաղութեան կը մասնակցէր, միւս տեղ նա չափից դուրս ար-
բած էր, այս ինչ տեղը կռուցաւ և շատ կարելի է թէ նորան տե-
սել են հասարակական տունը մտնելիս, և ազն: Աչպէս մենք, հասկա-
ցող և խելացի մարդկաս, զանազան ճարպիկութիւններով հաճում
ենք մեր նպատակներին: Դու նմանապէս հետեւիր մեր խրատներին,
խորհուրդներին և մեր որդու մասին ամենալի բան կ'իմանաս:—Հաս-
կացար ինձ:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Կատարելապէս:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Տէր ընդ քեզ, դնաս բարեւ:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Իմ բարի պարոն:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Նորա իրաքանչիւր քալը դու կը դիտես:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Անշուշտ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Եւ ասա որ արխաջանութեամբ պարապէ երաժ-
տութեամբ:

ԲԵՅՆԱԼԴՅՈ: Շատ բարին (Գ. 48-5 է.)

ՏԵՍԻԼ Բ.

ՊՈԼՈՆԻՈՒՄ, ՕՖԵԼԻԱ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Գնաս բարեւ, ինչ կայ, ՕՓէլիա:

ՕՖԵԼԻԱ: Որքան ես վախեցած եմ, Աստուած իմ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Ինչ բանից, 'ի սէր Աստուծու:

ՕՖԵԼԻԱ: Սենեկումն նստած կարում էի, ւանկարծ ներս է մըտ-
նում իշխան Համելէտը—վերացի հագուստը բոլորովին պատառուած,
առանց զլարպիկի, գուլպաները արձակած և իջեցրած կօշիկե-
րը, պատի պէս զեղնած, ծնկները ծալվում էին, աչքերը մի էին
աճպիսի ողորմելի փալում էին, որ կարծես նորան դժոխքիցն
ինձ ողջարկել, որ պատմէ այնտեղի արհաւերքը:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Քո սիրոցն է նա խելագարուած:

ՕՖԵԼԻԱ: Չգիտեմ, բայց նորանից ես շատ վախեցաք:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Ի՞նչ էր խօսում:

ՕՖԵԼԻԱ: Զեռքս պինդ սեղմեց, չետոյ, ինտ քաշուելով ինձանից իւր ձեռքի երկարութեան չափ, միւսը դնելով իւր լոնքերի վերա՛ աճպէս խորը և երկար մտիկ էր տալիս երեսիս, որ կածես նկարել էր կամենում: Բաւական ժամանակ նա աղդպէս կանզնած էր, չետոյ քնքշաբար սեղմելով ձեռքս, երեք անդամ շարժեց գլուխն այսպէս՝ բարձրից ներքեւ և աճնպէս ծանր և դառն հոգոց հանեց, որ կարծես քրքրում էր մարմինը և վերջանում կեանքը: Յետոյ նա թողեց ձեռքս, զիմեց դէպի դուռը, դարձրեց գլուխը դէպի ինձ և աճնպէս դուռ գնաց:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Երթանք, երթանք ՕՓէլիա: Ես կը տեսնեմ թագաւորին: Ազդ սիրոց պարզ խելագարութիւն է: Նա խրեան խորտակում է իւր սեփական զօրսութեամբ և հասցնում է մարդուս շատ ծայրահեղութիւնների, ինչպէս մեզ չատուկ շատ կրքեր: Ափսոս...գուցէ դունորա հետ կոպտաբար վարուեցար:

ՕՖԵԼԻԱ: Ո՞չ, ինչպէս դուք հրամակել էք, ես չէի ընդունում ոչ նորան և ոչ նորա նամակները:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Գորանից է իսկ, որ նա խելագարուել է: Յաւում եմ, որ ես վայր ՚ի վերա՛ և կարծատես հաջեացք ունէի նորա մասին և վախենում էի, որ նա քեզ չ'անարդէ: Անիծեալ լինի աղդպիսի կառկածանքը: ՄԵՆՔ ծերերս ընդունակ ենք մոռածողութեանց մէջ նպատականերից սահմանն էլ անցնել, ինչպէս որ երիտասարդութիւնն երբեմն նախատեսութեան մէջ անզուշ է լինում: Գնանք թաղաւորի մօտ, նա ամեն բան պիտի իմանաք: Կարելի է աւելի թշուառութեանց ենթարկուել սէրը ծածկելով, բան—ատելութեան նորան թաղյնելով:

(Գհուած էն:)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(ՍԵՆԵԱԿ ՊԱԼԱՏՈՒՄ:)

ՏԵՍԻԼ Ա.

Մասնաւ էն ԹԱԳԱԱԽՈՐ, ԹԱԳՈՒՀԻ, ՌՈՋԵՆԿՐԱՆՑ, ԳԻՂԻՆ-
ՇՏԵՐՆ և ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ:

ԹԱԳԱԱԽՈՐ: Բարով էք եկել, իմ սիրելիք, Ռողենկրանց և Գիղ-
ղէնշտերն: Բացի այն՝ որ մենք վաղուց կը ցանկանալինք տեսնել ձեզ՝
և մի կարմոր հանդամանք ստիպեց մեզ աղդպէս շատապով վերադառ-
նել ձեզ: Դուք լսել էք, որ Համլէտը կերպարանափոխուել է ցանկարծ:
Աղդպէս եմ ասում այն պատճառով, որ նա թէ հոգով և թէ մարմառ
այն չէ, ինչ որ առաջ էր: Բացի նորա հօր մահուանից, էլ ինչ բան
պէտք է լինի նորա ինքնաճանաչութեան ընդունակութիւնը խանգա-
րողը,—չեմ հասկանում: Դուք երկուսդ եղել էք նորա երիտասարդու-
թեան և մանկութեան բարեկամներ, ուստի ես ձեզ խնդրում եմ՝ քա-
նի մի ժամանակ մնալ մեր պալատում: Զեր ընկերակցութեանը,
դուք աշխատեցէք կրկին ընտելացնել նորան ուրախութեանց և զու-
արձութեանց, և խմացէք այն՝ մեղ անկալ հանգամանքը, որ նորան
հիւանդացնում է: Ազդ պատճառն իմանալով անշուշտ և հնար կը գըտ-
նենք նորան օգնելու:

ԹԱԳՈՒՀԻ: Նա շատ անգամ ձեզ մտաբերում է և ես համոզուած
եմ, որ աշխարհիս մէջ չկաք երկու անձն ես, որոնց նա անքան հա-
րազատ լինէր: Եթէ դուք բարի կը լինեք և կը նուիրէք մեզ մի փոքր

ժամանակ, մենք էլ կը արժանացնենք ձեզ՝ մեր թագաւորական երախտագիտութեան.

ՊՈՅՆԿՐԱՆՑ: Զերդ մեծութեանց մեղ վերաց ունեցած թագաւորական իշխանութիւնն առանց խնդրելու ուղղակի հրամակել կարող է մեղ:

ԳԻՒԴԵՇԵՐՆ: Մենք հնազանդվում ենք և արդէն կատարեալ պատրաստականութեամբ ձգում ենք մերովսանն ծառադութիւնը ձեր գարշապարի տակ.—կարգադրեցէք:

ԹԱԳԱԽՈՐ: Ծնորհակալ ենք ձեզանից, ԳԻԼԴԻՆՉՄԵՐՆ, և ձեզանից, սիրելի Յոդինկրանց:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ծնորհակալ ենք ձեզանից, ԳԻԼԴԻՆՉՄԵՐՆ, և ձեզանից, Յօդինկրանց, և խնդրում ենք խմոն ացելել մեր այնքան ալափոխուած որդուն: Առաջնորդեցէք, ոմ կաց աստեղ, աս պարոններին իշխան Համբէտի մօտ:

ԳԻՒԴԵՇԵՐՆ: Տայ Աստուած, որ մեր գալուստը և աշխատանքն օգտաէտ և ախտօնելի լինի նորան:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ամէն:
(ԳԻԼԴԻՆՉՄԵՐՆ և Յօդինկրանց գնում էն միտոնի պուշտունների հետ)

ՃԵՄԻԼ Բ.

ՆՈՅՆՔ, ՊՈՅՆԿՐԱՆՑ (ՄՊԻՆԱՅ է:)

ՊՈՅՆԿՐԱՆՑ: Վեհափառ Տէր, Նորվեգիակի թագաւորին ուղարկած զեսպանները բարի համբաւերով վերադարձել են:

ԹԱԳԱԽՈՐ: Դու միշտ բարի համբաւերի հայր ես եղել:

ՊՈՅՆԿՐԱՆՑ: Այս, Էզել եմ. ո՞հ, վատանութիւն ունիմ հաւատացնել Ձեզ, թագաւոր, որ ես իմ պարտաւորութիւնս անքան եմ սիրում, որքան իմ կեանքս, իսկ թագաւորին—ոլքան Աստուծուն: Ինձ թվում է, որ ես արդէն, Էկամ զուցէ ուղեղս այժմ խորամանկութեան ճանապարհով անպէս սրնիաց էլ թոչում ինչպէս առաջ գտայ թէ ի՞նչ է իշխանի խելագարութեան խիսկան պատճառը:

ԹԱԳԱԽՈՐ: Ո՞չ խօսիր, որքան ժամանակ է, որ փափագում եմ իմանալ:

ՊՈՅՆԿՐԱՆՑ: Նախ և առաջ դուք ընդունեցէք գեսպաններին, իմ գիւտը հացկերովի վերջին քաղցրաւէնիք կը վիճի:

ԹԱԳԱԽՈՐ: Ուրեմն պատուիր նոցա հրաւիրելով մեղ մօտ: (Պօլուսաւ գնում է:) Սիրելի թագուհի, նա ասում է, որ նա գիտէ Համելսի տիկարութեան պատճառն և աղբիւրը:

ԹԱԳՈՒՀԻՆ: Վախենում եմ, որ այդ պատճառը չ'լինի միայն նորա հօր մահը և մեր հապճեալ պասկը:

ԹԱԳԱԽՈՐ: Լաւ է, մենք կը ստուգենք,
(Պօլուսաւ վերտառուած է Արքանելիք և Վաշինգտոնի հօտ Ֆեռնին:)

ԹԱԳԱԽՈՐ: Ողջոն ձեզ, իմ բարեկամքը: Ասա մեղ, Վալտիմանդ, ինչ է ուղարկում մեզ մեր եղանակը՝ Նորվեգիակի թագաւորը:

ՎՈԼՏԻՄԱՆԴ: Իւր ցանկութիւնը, որ երջանիկ լինեք, և փոխադարձ ողջոն: Հաղիւ մենք քանի մի բառ արտասանեցինք, նա խկոն հրամակուց զաղարեցնել իւր եղբօր որդու պատրաստութիւնները, որ նա կարծում էր ուղղուած է Լեհացոց դէմ: Ճշգրէն ստուգելով խնդիրը և համոզուելով որ չար զիտաւորութիւն է եղել՝ ձերդ վեհափառութեան դէմ՝ շատ վշտացաւ, որ նորա ծերութիւնից, հիւանդութիւնից և անկարողութիւնից վաս հետեւանքներ են բառաջանում: Հրամակեց բանտարկել Ֆօրտինբրասին, Խշանը հնագանդուեց, թագաւորի բերանով նա դատապարտուեցաւ և երդուեց վափուեան չ'պատերազմել Զերդ մեծութեան հետ: Ծերունի թագաւորը չափազանց ուրախանալով այդ խոստման ասթիւ, ընծանեց նորան հինգ հազար զահեկան տարեկան հասովի և նուրիեց նորան իրաւունք տանել նորա ընտրեալ զինուորներին Լեհացոց դէմ: Նա այդ բանի առթիւ Զերդ մեծութիւնից խնդրում է, (Պալունորան Ֆեռնուլ)՝ ալսեղ մաճրամասնօրէն գրուած է, որ բարեհամեր թուլաւորել նորա զօրքերին Դանիակի հողով զնալ նուածնելու Լեհացոց աշխարհը: Վարձասրութեանքն պահովութեան պատմաներն այդ նամակի մէջ նկարագրած են:

ԹԱԳԱԽՈՐ: Աղատ միջոցներում մենք կը խորհնենք և կը տանք

պատշաճաւոր պատսախան, իսկ առ այժմ գնացեք, հանգատացեք, մենք կը վարձատրենք ձեր աշխատանքը և դիշերն ի միասին կը տօնախմբենք: Ձեր ակառողջեանը շատ ուրախ ենք:

(Վաղարքանութեան և Արքական գնումնեան)

ՊՈԼՅՆԻՈՒՄ: Ահա գործն էլ չաջողակ վերջացաւ: Իմ ամենա-
ողորմած հրամանատէր և դուք, թագուհի, երկարաբանել թէ ինչ կը-
նշանակէ թագաւորութիւն, ինչ է պարագը, ինչու ցերեկը—ցերեկ է,
գիշերը—գիշեր, և ժամանակը—ժամանակ, նշանակում է ի զուր վաստ-
նել ցերեկը, զիշերը և ժամանակը: Եւ, որովհետեւ կարծաբանութիւնը
խելքի հոգին է և երկարութիւնը նորա զարդարանքը միայն, ուստի
ես խօսքս կը կրածատեմ: Զեր ազնիւ որդիին խելագարուած է: Ասում
եմ խելագարուծ է, որովհետեւ՝ ինչ է կատարեալ խելագարութիւնը,
եթէ ոչ խելագարութիւն, բաց թողնենք ազ:

ԹԱԳՈՒՀՆԵՐԻ Առանց պերճախօսութեանց և նրբութիւնների, շուտապէ գումանութեանց պարզը պատմիր:

ՊՈՂՈՆԻՈՒՄ: Պատուղս երգվում եմ, թագուհի, որ ես պերճա-
խօսութեան միտք չ'ունէի, Որ նա խելագար է—ադ ուղիղ է, ուղիղ
է, որ շատ ցաւալի է, և ցաւալի է որ ուղիղ է: Յիմար գարծուած
է—է՛, թողնենք:—Եթէ ևնթաղբենք, որ նա խելագար է, մեղ մնում
է միայն գանել էֆֆէկտի, աւելի ճիշդ ասել զէֆֆէկտի պատճառը, ո-
րովհետեւ զէֆֆէկտական էֆֆէկտը նմանապէս ունի իւր պատճառը:
Ահա բանը ինչումն է, մտածեցէք: Ես ունեմ մի աղջիկ—որովհետեւ դա
իմ աղջիկս է: Իւր հաղանդութեան պարտքը կատարելով նա ահա
ինչ լայտնեց ինձ, եղակացրէք և խորհնցէք: (Կորէւած է Յունի հո-
տուկ) —Երկնակին իմ հաստրին, իմ պաշտելի կուռքին, ամեն գե-
ղեցկութիւններով օժտուած Օֆէլիալին), վաստ նախաղասութիւն է,
ամեն գեղեցկութիւններով օժտուած»: Հին, մաշուած խօսք է, բայց
լսեցէք: «Խորս հրացալի և ձիւնի նման սպիտակ կուրծքի վերապ...»

թԱՐՈՒՀԻ: Եւ այս պրոցես է Համբետը Օֆելիալին:

ՊՈՂՈՎԵՐԻ: Համբերեցէք թագուհի, ամենը կը հաղորդմ։ (Յ-

յունակութ է.) «Մի հաւատաք, որ կան փայլուն աստղեր, որ երկնքը մը
շրջում է մեծ արեգը, տաքացնելով մի մահկանացուի կուրծքը, ալ հաւատաք անչէջ սիրոս բորբռքմանը, Ո՞չ, սիրելի Օֆէլիա, ստանա-
ւորներս անհաջող են և անկարգ, բայց ես սիրում եմ քեզ. Մնաս-
քարեն:

Յաւկտեան քուկիդ, քանի ես կեանք ունիմ):

«Համելէտ»:

Ահա այս տուեց ինձ հնաղանդ աղջիկս և պատմեց ինձ նորա սիրու խոստավանութիւնը:

ԹԱԳԱԽՈՐ: Եւ ՕՓԵԼիան նորա սէրն ինչպէս ընդունեց:

ՊՈԼՅԱՆԻՈՒԽ: Դուքք ինչ կարծիք ունեք իմ մասին:

ԹԱԳԱՒԻՈՐ: Որ դու ինձ հաւատարիմ ես և աղճիւ

Պիշտոնինիւս: Ես խակ ապդ էի ուզում ապացուցանել ձեզ: Ի՞նչ
կը կարծէիք եթէ ևս աեսնելով սիրոց արծարծումը, (ալէտք է ասել,
որ ապդ ես նկատեցի առաջ՝ քան աղջիկս պատմեց ինձ): Ի՞նչ կ'կար-
ծէիք գուգ, Զերդ Մհծութիւն, կամ Նորին մհծութիւն, եթէ ես միան
լիշողութեանս մէջ պահէի լսածս և խուլ ու համր մնալի:—Բայց ոչ,
ես խակոն դիմեցի գործին և նախազգուշացրի աղջկանս ապսպիսի ճա-
ռով. „Խշան Համէտաը քո շրջանի մարդ չէ, չլինելու բան է ալդ“: Ես
հրամայեցի նորան Համէտի համար բոլոր դռները փակել. չընդունել
նորա միջնորդներին և նորա բնծաները: Աղջիկս կատարեց իմ հրա-
մանները և նա, իրքն մերժեալ, ընկաւ տիրութեան մէջ, կորցրեց մը-
տածութեան ընդունակութիւնը, լետով ինքնանաշչութիւնը և ալդ-
պէս՝ աստիճանաբար իջնելով՝ հասաւ ներկայ խելագարութեան:

ԹԱԳԱԽՈՅԻ: Եւ զու կարծում ես, թէ պատճառն այդ է:

ԹԱԳՈՒՀԻՒՆ. Շատ կարելի է և հաւանական:

ՊՈԼՈՆԻԱՆԻՍ: Գիտէք դուք, ես կը ցանկանամի իմանալ, որ լինէր
մի դիպուած, որ ես ասէի այս ապսպէս է¹, և իրաղապէս լինէր հա-
կառակը:

ԹԱԳԱԽՈՅԻ: Զեմ վրչում:

ՊՈԼՈՆԻԱՆԻՒՄ: (Ցոյց պաշտոնական գլուխքը և սեռերիցը:) Ըստամահցէք ուս ուս-

յանից, եթէ ասածս ճիշդ չ'լինի. Հանգամանքները հետքին հասցըին և ես կը դոնեմ ճշմարտութիւնը, թէպէտ սա երկրի կենարունում լինի թագնուած:

ԹԱԳԱԼԻՈՒ. Բաց ինչպէս կարող ենք ստուգել ճշմարտութիւնը:

ՊՈԼՈՆԻՈՒ. Դուք գիտէք, որ նա չորս ժամ շարունակ լինում է աս դա՞վիճում:

ԹԱԳՈՒՀԻ. Ճշմարիտ է:

ՊՈԼՈՆԻՈՒ. Նորա զբօսնելու ժամանակ ես աղջկաս կ'ուղարկեմ նորա մօտ. Մենք միասին աստեղ թագնուենք: Կիսեցէք նոցա տեսակցութիւնը և եթէ սիրուց չէ խելագարութիւնը, զրկեցէք ինձ իմ բոլոր արտօնութիւններից և սալքառան կարգեցէք ինձ:

ԹԱԳԱԼԻՈՒ. Փորձենք:

(Մասնաւ է Համեսդը փառքին գրայիլը ներկն հարդարութ)

ԹԱԳՈՒՀԻ. Նակացէք, խեղճը կարդալով այս կողմն է գալիս: Ո՞րքան ախուր է:

ՊՈԼՈՆԻՈՒ. Խնդրում եմ երկուադ էլ հեռացէք ակսաւղից, ես կը զբաղեմ հետը: (Թագուարը թագուակն և պալութեանները գնում են:)

ՏԵՍԻԼ Պ.

ՊՈԼՈՆԻՈՒ, ՀԱՄԼԵՏ:

ՊՈԼՈՆԻՈՒ. Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, սիրելի իշխան Համէտ:

ՀԱՄԼԵՏ: Փառք Աստուծոյ, լաւ է:

ՊՈԼՈՆԻՈՒ. Դուք ինձ ճանաչնում էք, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Կատարելապէս, դու ձկնորս ես:

ՊՈԼՈՆԻՈՒ. Ո՛չ իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ուրեմն ես կը ցանկանալի, որ դու նորա պէս աղնիւ մարդ լինէիր:

ՊՈԼՈՆԻՈՒ. Աղնիւ, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Այս, լինել աղնիւ մարդ—նշանակում է լինել ընտրեալ տասն հաղարից:

ՊՈԼՈՆԻՈՒ. Ճշմարիտ է, շատ ճշմարիտ է, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Եթէ ինքն արեգակն իւր աստուածութեամբ սատակած շան մարմնի մէջ որդունք է աճեցնում...դու աղջիկ ունիս:

ՊՈԼՈՆԻՈՒ. Ունեմ, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Չ'թողնես նորան, որ արեգակի հանդէպ զբօսնի: Պըտղաբերութիւնը չնորհաբաշխութիւն է, բաց ոչ աբաղիսին, որին կարող է ենթարկուել քո աղջիկը: Բարեկամ, պահպանիր նորան:

ՊՈԼՈՆԻՈՒ. Ի՞նչ կամիք դորանով ասել, (Մէ հողմ.) Միշտ խօսակցութիւնը դարձնում է աղջկաս վերաց: Առաջ ինձ չ'ճանաչեց, ասաց որ ես ձկնորս եմ: Զափաղանցութեան է հասել: Ես էլ երիտասարդութեան ժամանակ սիրուց շատ տաճջուել եմ.—համարեալ այնպէս էի, ինչպէս սա: Խօսեմ հետը: Այդ ինչ էք կարդում, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Բառեր, բառեր, բառեր:

ՊՈԼՈՆԻՈՒ. Բաց ինչ առարկալի մասին են խօսում:

ՀԱՄԼԵՏ: Ո՞մ հետ:

ՊՈԼՈՆԻՈՒ. Ես հարցնում եմ ինչ է այդ գրքի պարունակութիւնը:

ՀԱՄԼԵՏ: Զրպարտութիւն, բարդելո, Երևակայիք, խեղկատակի մէկն ասում է թէ՝ ծերերի մագերը սպիտակ են, նոցա երեսը կընձռնուի, նոցա աչքերից ձիթան խէժ է հոսում և թէ նոքա սրամտութեան մէծ պակասութիւն ունին, և ոտքերի թուլութիւն:—թէպէտ ալդ ամենին ես կատարեալ հաւասառմ եմ, բաց և աղնպէս, աղդպիսի բաներ գրել կարգ չէ, չի վագելի, որավիետն գու էլ կը ծերանայիք ինձ պէս, եթէ կարող լինէիր խեցգետնի պէս լետ լետ ման գալ:

ՊՈԼՈՆԻՈՒ. (Մէ հողմ.) Թէպէտ խելագարութիւն է, սական աստիճանաբար: (Բարձր) Բարեհաճեցէք, իշխան, պատսպարուել քամուց:

ՀԱՄԼԵՏ: Գերեզմանի մէջ:

ՊՈԼՈՆԻՈՒ. Ճշմարիտ որ այդ կերպ կարելի է ծածկուել քա-

մուց: (Աստիճն:) Որքան սրամիտ են սորա պատասխաները: Խելագարութիւնը շատ անդամ աւելի սրամիտ է, քան խելացիութիւնը: Գնամ աղջկաս և սորա ալցելութիւնը հոգամ: (Բարձր:) Վասահութիւն ունեմ, իշխան, խնդրել ձեզանից տալ ինձ արձակուրդ: Մնաք բարե: (Գնաւած է:)

ՀԱՄԼԵՏ: (Մի կողմէ:) Ո՞րքան ձանձրալի են ասս դառամնալ վմարները:

(Մոռնուած էն բողնոկուաց և Գիշենշաբերն:)

ՏԵՍԻԼ Պ.

ՀԱՄԼԵՏ, ՌՈԶԵՆԿՐԱՆՑ և ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Իշխան:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Ամենասիրելի իշխան:

ՀԱՄԼԵՏ: Իմ ամենաբարի ընկերներ: Ի՞նչպէս ես, Գիլլէնշտէրն: Ա՛ դու էլ ես ապսեղ Ռողէնկրանց: —Երկո՞ւքդ ի՞նչպէս էք:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Ինչպէս առհասարակ երկրիս անհան որդիքը: ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Բաղդատոր ենք և նորանով, որ չափազանց բաղդատոր չենք: Ֆօրտունափ գլխարկի կատարը չենք:

ՀԱՄԼԵՏ: Բայց ոչ էլ նորա կօշկի նրբանում:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Այս, ձշմարիս է, ոչ էլ ներբանում:

ՀԱՄԼԵՏ: Ուրեմն զոտկում, նորա բարեհաճութեանց կենդրոնում: ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Այս, մենք օգովում ենք Ֆօրտունափ թագուն հրապուրներով, ֆօրտունան հրապուրիչ է:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ նոր լուր, անսնենք:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Ոչինչ, բացի աս, որ աշխարհս աղնուացել է:

ՀԱՄԼԵՏ: Ահեղ զատաստանի օրը մօտեցել է ուրեմն, բայց ձեր նորութիւնը անմիտ բան է: Թող տուէք մանրամասնօրին հարցնել ձեզ. ի՞նչ մնդք էք գործել դուք, որ բաղդը ձեզ աս բանտն է ուղարկել:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Բանտը, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Այս, Դանիան բանտ է:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Ուրեմն բոլոր աշխարհն էլ բանտ է:

ՀԱՄԼԵՏ: Գերագոյն բանտ, բազմաթիւ բաժանմունքերով, մութ, խուլ պահարաններով. Դանիան նոցանից ամենավատթարպունն է:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Մենք նորա մասին այլ կարծիք ունինք:

ՀԱՄԼԵՏ: Ուրեմն նա քեզ համար բանտ չէ, որովհետեւ լաւ կամ վատ—աղպէս է՝ ըստ մեր կարծեաց նորա մասին: Ինձ համար նա բանտ է:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Գուցէ այն պատճառով, որ նա նեղ է ձեր փառասիրութեան համար:

ՀԱՄԼԵՏ: Ո՞հ, Աստուած, եթէ չար երազներս չ'լինէին, ես ընկույլի կեղեկի մէջ անսահման տարածութեան իշխան ու տէր կ'համարէի ինձ:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Բայց այդ երազները փառասիրութիւնն է, որովհետեւ փառասիրութեան ձշմարիս էութիւնը, երազի ստուեր է միան:

ՀԱՄԼԵՏ: Երազն էլ ինքն ըստ ինքեան ստուեր է միան:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Ճիշդ է, փառասիրութիւնը աղնպէս օդավին և անըմբունելի է, որ նորան ես ստուեր կ'համարեմ:

ՀԱՄԼԵՏ: Ուրեմն մեր աղքատները մարմիններ են, իսկ մեր թագաւորները և զովաբանեալ հերոսները—աղքատների ստուերներն են: Պէտք չէ արդեօք պալատը գնալ. ես ձշմարիս դասողութիւն անել չեմ կարող:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: { Ինչպէս կամիք, պատրաստ ենք ձեզ ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: { լուլու:

ՀԱՄԼԵՏ: Այդ մի ասէք: Ես չեմ կամենում խառնել ձեզ իմ ծառաների խմբի մէջ, որովհետեւ խոստովանւում եմ ձեզ, իբրև ազնիւմարդ, որ նոքա ինձ սարսափելի կերպով են ծառապում: Խօսենք ինչպէս բարեկամներ, ինչու էք եկել ելլիներ,

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Միաք ձեղ տեսնելու համար, իշխան, այլ նըւպատակ չունեինք:

ՀԱՄԼԵՏ: Ես աղքատ, աղքափեմ և գոհունակութեամբ, բաց դարձեալ չնորհակալ եմ ձեղանից և զգուշացնում եմ ձեզ, որ իմ չնորհակալութիւնս ձեզ կէս դահեկանի օգուտ չի տալ: Գուցէ ձեր լետնից ուղարկեցն, թէ դուք էք եկել ձեր յօժար կամքով: Օ՞ն, պատասխանեցէք: Պարզամիտ եղէք ինձ հետ: Դէն, խօսեցէք:

ԳԻԼԴԵՆՇՅՈՒՐ: Ի՞նչ խօսենք, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ որ կամիք, միան ճշմարտութիւն լինի: Ձեր իշտեից ուղարկել էին, ձեր աշքերի մէջ երեսում են խոստվանութեան պէս մի բան, որ չկարողացաւ թաքցնել ձեր խորամանկութիւնը: Ես դիտեմ բարի թագուորը և թագուհին ձեր կառակից ուղարկել էին:

ԹՈԶԵՆԿՐԱՆՅ: Ի՞նչո՞ւ համար իշխան:

ՀԱՄԼԵՏ: Իսկ այդ բանը դուք պէտք է պատմէք: Երդմացնում եմ ձեզ ընկերութեան իրաւամբ, երիտասարդութեան կապերով, միշտ հարազատ սիրով և այն բոլոր աւելի թանգարին վշատակներով, որով կարող է երդուեցնել ինձանից գերազանց մի ճարտասան: Աղնիւ և պարզամիտ եղէք ինձ հետ: Ուղարկել են ձեր իշտեից թէ ոչ:

ԹՈԶԵՆԿՐԱՆՅ: (Գլուխէշտէրն:.) Ի՞նչ կասես:

ՀԱՄԼԵՏ: (Հանուարով:) Բաւական է, ես հասկանում եմ: (Բորձու:) Եթէ դուք ինձ սիրում էք, մի թագցնէք ոչինչ:

ԳԻԼԴԵՆՇՅՈՒՐ: Ուղարկել էին, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ակմէ ես ձեզ պատմեմ թէ ինչո՞ւ համար՝ և կազմում այդպիսի կերպով հաւատարմութեան դաւաճանութիւնից: Չ'գիտեմ թէ ինչ պատճառով, քանի մի ժամանակ սորանից առաջ ես կորցրել եմ իմ բոլոր ուրախ բնաւորութիւնը, ձգել եմ իմ բոլոր պարապմուքները: Հոգիս այնքան տիսուր է, որ աշխարհ՝ այս շքեղ արարածը, ինձ անպատղ ծառ է երեսում, և երկինքը—այդ երկնակամարը—այդ մեծակառոց ասանիքը, որ ոսկեղին լուսերով փալում է—ինձ միան թունտոր գոլորշների խառնուրդներ է թվում: Ի՞նչ օրինակելի ստեղծագործութիւնն է մարդս, որքան բարեծնունդ է իւր խելքով: որպէս անսահման զանազան են նորա ընդունակութիւնները, որքան զմայլե-

լի, գեղեցիկ է նա դէմքով և շարժուածքներով, ինչպէս նա գործով նման է հրեշտակին, իսկ ըմբռնողութեամբ Աստծուն: Նա զարդ է տիեզերքի, ստեղծագործութեան թագը, բաց անուամնապնիւ ինձ համար նա կատարելագործեալ փոշի է: Մարդը ինձ չէ դուր գալիս: (Բորչենիշնց ծովուած է:) կանաչք անզամ: Թէպէտ դու,—նաև լով քո ժպտին—և կասկածում ես:

ԹՈԶԵՆԿՐԱՆՅ: Երբէք, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչու ժպտացիր դու, երբ ես ասացի թէ՝ մարդը ինձ դուր չէ գալիս:

ԹՈԶԵՆԿՐԱՆՅ: Ես մտածում էի, թէ որպիսի սառն ընդունելութիւն կ'ստանան այն զերասանները, որոնց մենք ճանապարհին պատահեցինք: Նոքա գալիս են ակսոել իրանց ծառալութիւնը ձեզ լայտնելու:

ՀԱՄԼԵՏ: Թագաւորի դեր ներկայացնողները բարե գան: Կը նուիրենք Նորին վսեմութեան պարտ ու պատշաճ լարգանք: Թափառական ասպեսը կերպակուր կ'գտնէ իւր սրի և նիզակի համար: Սիրահարուածը իւրուր չի հառաչիլ, ուրախացնողը հանդարտ կ'քաշացէ իւր գերը մինչև վերջը: Միմուը կ'ծիծաղացնէ իւր ծիծաղողներին և երրուուհին աղատորէն կ'պատնէ իւր միաքը, թէպէտ ուսանաւորները կ'կազան մի փոքր: Այդ ինչ զերասաններ են:

ԹՈԶԵՆԿՐԱՆՅ: Նոքա են՝ որոնք ձեզ այնքան զուարծութիւն պատճառեցինք, քաղաքի ողբերգականներն են:

ՀԱՄԼԵՏ: Ինչո՞ւ են նոքա թափառում: Մշտական բնակութիւնը աւելի արգիւնաւոր է թէ փառքի և թէ հասութի համար:

ԹՈԶԵՆԿՐԱՆՅ: Կարծում եմ որ զորա պատճառն են քանի մի նոր փոփոխութիւններ:

ՀԱՄԼԵՏ: Սիրում էին արդեօք նոցա այնպէս, ինչպէս այն ժամանակ, երբ քաղաքումն էին: Ցածախում էին նոցա նոցնպէս:

ԹՈԶԵՆԿՐԱՆՅ: Անքան էլ չէ: (Երթշարութիւն բեմից ուուրու:)

ԳԻԼԴԵՆՇՅՈՒՐ: Ահա և զերասանները:

ՀԱՄԼԵՏ: Պարոններ, ես հոգով չափ ուրախ եմ, որ ձեզ էլզի-

Նօրում տեսնում եմ, տուէք ձեր ձեռքերը: Հիւրերին ընդունում են գովասաճքներով և ծէսերով, թող տուէք ձեղ ևս ընդունել նոյնպէս միայն թէ ան դիտմամբ՝ որ ազապէս իմ վարմուհքս դերասանների հետ, (որը հաւատացնում եմ ձեղ, արտաքուստ շատ լաւ է) առաւել քաղաքաւարի կերեակ ձեղ, քան թէ ձեղ հետ: Դուք բարի էք եկեց: բայց իմ հօրեղբար—հայր՝ և հօրաքով—մակա սխալվում են:

ԳԻԼԴԵՆՇԵՐՆ: Ի՞նչ բանում:

ՀԱՄԼԵՏ: Ես խելազար եմ, երբ փչում է հիւսիս—արևմտեան քամին, իսկ հարաւայն քամու ժամանակ՝ ես կարող եմ էչն ու գարին միմանցից զանազանել: (Մանում է Փօչնիուս:)

ՊՈՂՈՆԻՈՒՍ: Բարի ողջոն պարոններ:

ՀԱՄԼԵՏ: Լսիր, Գիլդենշտէրն, և դու,—իւրաքանչիւր ականջի համար մի լսող: Այդ մեծ երեխան զեռ խաճարուրից չէ դուրս եկել:

ՌՈԶԵՆԿՐԱՆՑ: Կարելի է, որ նա կրկին անդամ մէջն է ընկել, ծերութիւնը ասում են երկրորդ երեխալութիւն է,

ՀԱՄԼԵՏ: Նախազուշակում եմ, որ նա եկել է զերասանների գալը հաղորդելու: Կտեսնէք: Այս ազապէս է, այդ երկուշաբթի առաւուն է պատահել:

ՊՈՂՈՆԻՈՒՍ: Մի նորութիւն ունեմ ձեղ հաղորդելու, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ես ևս մի նոր լուր ունեմ: Երբ Թոսցիուա Հռովմում՝ դերասան էր...

ՊՈՂՈՆԻՈՒՍ: Դերասաններն իսկ եկել են, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Աճաւասալի բան է:

ՊՈՂՈՆԻՈՒՍ: Պատուով երդիում եմ:

ՀԱՄԼԵՏ: Ուրեմն իւրաքանչիւրը իւր իշու վերաէ:

ՊՈՂՈՆԻՈՒՍ: Եւ այնպիսի դերասաններ են, որ աշխարհիս մէջ հազուագիւտ են: Լաւագոն են՝ թէ ողբերգութեանց համար, պատմական ներկալացումների համար, հովուերգութեանց, պատմական կատակների, պատմական հովուականների, ողբերգական հովուականների, ողբերգական պատմականների համար, ողբերգական կատակերգա-

կան—պատմական—հովուականների համար և անսահման բանաստեղծութեան, անբաժան գործողութեան համար: Նոցա Սենեկան առանձին ախրութիւն չի պատճառիլ, ինչպէս որ Պլաֆոր—ուրախութիւն: Թէ սերտած բաների մէջ և թէ անպատճառի մնախօսութեանց մէջ: ոչ ոք նոցա հետ չի հաւասարուիլ:

ՀԱՄԼԵՏ: Ո՞չ, Յեփիթաէ, դատաւոր Խորաէլացւոց, ո՞րպիսի գանձ ունէիր դու:

ՊՈՂՈՆԻՈՒՍ: Ո՞րպիսի գանձ, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ո՞րպիսի.

Միակ դուստր մ'ունէր

Ջոր չափազանց կ'սիրեմ:

ՊՈՂՈՆԻՈՒՍ: (Մէ հոդի:) Միշտ աղջկաս մասին է խօսում:

ՀԱՄԼԵՏ: Ճիշդ չէ ասածս, ծերունի Յեփիթաէ:

ՊՈՂՈՆԻՈՒՍ: Եթէ դուք ինձ Յեփիթաէ կանուանէք, իշխան, ևս ունեմ մի աղջիկ, որին չափազանց կ'սիրեմ:

ՀԱՄԼԵՏ: Ո՞չ. դա ասածիս չէ հետևում երբէք:

ՊՈՂՈՆԻՈՒՍ: Բայց ի՞նչ է նորանից հետևում:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ, ան որ նորան պատահեց այն՝ ինչոր ամենիս վիճակուած է...մնացորդը ինքդ կ'կարգան Զատկի երդերի մէջ:

(Մանում էն չոր իտ էկնէ բերանաներ:)

Բարի էք եկել, բարի: Ողջոն ձեղ. ուրախ եմ, որ ողջ և առողջ եմ տեսնում ձեղ: Ասա, վաղեմի բարեկամս, այն օրից որ ես քեզ վերջին անդամ տեսակ, երեսդ բաւական մազերով ծածկուել է և ես լուս ունեմ որ դու իմ մասին մօրուքիդ տակով չես փնթփնթաէ: Եւ դու, իմ գեղեցկուհի: Դու Վենետիկի մաշիկների չափ բարձրացել ես զէպի երկինք: Տաէ Աստուած որ ձախնդ միշտ զուարթ մնայ: Շատ և շատ ուրախ եմ ձեր զալուն: Ի՞նչպէս Ֆրանսիացւոց որսորդ, չարձակուենք առաջին որախ վերակ, իսկոն մէկ բան պէտքէ ներկալացնել: Յոց տուէք ձեր արուեստագիտութիւնը: Արտասաննեցէք մի սըրտագրաւ մնախօսութիւն:

Ա. ԴԵԲԱՍԱՆ: Ի՞նչ կը հրամաէք իշխան:

ՀԱՄԱԿԵՑ. Միանդամ ես լսել եմ մի մնախօսութիւն, որ դու
կարդացիր բեմի վերայ, նա լաջողութիւն չունեցաւ, ուրեմն ամբո-
խին գուր չեկաւ, ինչպէս մարդարիտը համանի անասուններին, բայց
ես, ինչպէս ուրիշները, որնց կարծիքը իմ կարծիքից աւելի հիմնա-
ւոր է, ողբերգութիւնը գերազանց գործ համարեցին։ Յիշում եմ մէկն
ասաց, որ նա անհամ է, ալմանի է, նախադասութիւնների մէջ չկատ
միտք, ուր հեղինակը կրքերը արտապատէ, բայց նա ասաց ևս, որ
այդ ձեմի հեղինակութիւնը առողջամիտ է, աւելի գեղեցիկ է, քան
զարդարուած։ Մի հասուած այստեղ ինձ շատ գուր եկաւ—այդ Դեղո-
նի ինձի հնարած պատմութիւնն է, ևս առաւել այն տեղը երբ պատ-
մում է Պրիամոսի սպանութիւնը, եթէ փշում ես սկսիր այնտեղից—
Սպասիր, սպասիր,...կատաղած Պիրիուսը իրեւ վագր Աֆրիկայի...
Զէ, սխալում եմ, բայց Պիրիուսով է սկսվում։

Կատաղած Պիրիուսը գրահաւորուած,
Ինչպէս այն գիշեր, երբ սև դիտմունքով
Չիու արգանդում հանդիսաւ էր պարկած։
Երեսի գծեր սասափիկ փոխելով,
Ոտքից մինչ գլուխ նա աշա ներկուած,
Ծնողաց, որդւոց, զատերց արիւնով։
Զկատանալով այդ արարքներից
Ուզում է փալել արքայասպանութիւնով։
Հրաշեաց դէմքով ընկած պարում է նա Պիրիուսին
Որ մահով խորտակէ իւր չար թշնամին։

Շարունակիր դու։
ՊՈԼՈՆԻՈՒՍ. Ասուած վկայ, իշխան, հիանալի կարդացիք,
գեղեցիկ առողանութեամբ և կիրքերով։

Ա. ԳԵՐԱՍԱՆ. Եւ դասւ նորան։
Պրիամի սուրը չէ համում Յունաց,
Պաշտամող զէնքը ծանր լինելով՝ ընկնում է ձեռաց։
Պիրիուսը կովում է Պրիամի հետ կատաղի կովով,
Բայց մեռած ընկնում մահուած հարուածով։

Իսկ Պիրիուս կանդ առնում շիոթուած դէմքով,
Անհաղանդ սուրը կախուեց օդի մէջ,
Թուլացած ինելքով և կամքով անշէջ.
Բայց որպէս զեփիւս փոխում մրրկով
Նոյնպէս Պիրիուս վառվեց վրէժով,
Էփիստ ոչ, երբէք սուր բարձրացնելով
Զէր զարկել խստագոյն, ինչպէս Պիրիուսը,
Որ սպանում էր դժբաղդ Պիրիուս...
Ո՛հ, ճակատագիր, ինչու չեն ընկնում
Զեսի հարուածից և չեն խորտակվում,
Քո անիւները դժողքի խորքում...
ՊՈԼՈՆԻՈՒՍ. Դա շատ երկար է։
ՀԱՄԱԿԵՑ Ինչպէս քո մօրուքը։ Վաս չէր լինի եթէ այդ երկուսն
էլ ուղարկել էիք սափրիչին։ Խնդրում եմ շարունակիր։ Սա միշտ
ննջում է, երբ ծաղրածու և կեղտոտ խօսքեր չէ լսում։ Շարունակիր
Հեկութի մասին։
Ա. ԳԵՐԱՍԱՆ. Բայց եթէ ո՛հ, եթէ մի ոմն,
Տեսնէր կիսամերկ թագուհուն...
ՊՈԼՈՆԻՈՒՍ. Կիսամերկ թագուհուն։
Ա. ԳԵՐԱՍԱՆ. Տատանվում էր նա լալական աչքերով,
Կարծես հանգցնում կրակ արցունքով.
Ծածկած գլուխը կտրտանքներով,
Որ զարդարում էր թանկաղին թագով։
Ա. Վաս դառն է վլճակ Հեկութի,
Երթոնքից հասում բառեր անէծքի։
Ծանր իւր բազգի, մատնութեան մասին,
Թափում էր անէծք Հեղինի գլխին...
Ո՛հ, եթէ Աստուածք տեսնել կամէին,
Ակն թշուառ կնոջ բոլոր չարչարանք,
Երբ Պիրիուսը մանրում էր զիակ,
Անշուշտ խղէին արտասուաց կապանք։

ՊՈԼԾՆԻՈՒՄ: Կակեցէք նորա գէմքին, ինչպէս փոխուեցաւ, նա լավս է, բաւական է խնդրեմ, բաւական:

ՀԱՄԼԵՑ: Վերջը դու մետով կասես: Յարգելի Պօլօնիուս, հոգացիր որ նոյա լաւ ընդունեն, նոքա մեր զարու հակելիք՝ և կարճ ժամանակագրութիւն են. իսկ քո կենդանութեան ժամանակը, նոյա քո մասին ունեցած վատ կարծիքը աւելի իրաւ կ'լինի, քան քո ամենավատթար տապանագիրը:

ՊՈԼԾՆԻՈՒՄ: Կ'հիւրասիրեմ իշխան, ըստ արժանո՞ն:

ՀԱՄԼԵՑ: Ո՛չ, աւելի պատուալ ընդունիր նոյա: Եթէ իւրաքանչիւրին մենք պատուենք նոյա արժանաւորութեանց չափ, այն ժամանակ շատերը պատակից չեն աղատուիլ: Ընդունիր նոյա քո պատուով լարմար: Որքան նորա փոքրի արժանի լինեն, այնքան առաւել է քո բարութիւնը:

ՊՈԼԾՆԻՈՒՄ: Երթանք պարուներ:

ՀԱՄԼԵՑ: Գնացէք նորա հետ, վաղը մի բան կ'ներկաւացնէք: (Պօլօնիուս և Ֆիոնի ու բառաններ գուած էն: Պատահաւով բեռք առաջն ուսունական մաս ինձ, բարեկամս, կարող էք դուք Հօնդագօի սպանութիւնը ներկաւացնել:

Ա. ԴԵՐԱՍԱՆ: Կարող ենք, իշխան:

ՀԱՄԼԵՑ: Ուրեմն վաղը կ'ներկաւացնէք: Եթէ ես մի տասներկու կամ տասնվեց տող բան զրեմ և խառնեմ ողբերգութեան մէջ, —կարող էք դուք այն ես սերտել:

Ա. ԴԵՐԱՍԱՆ: Կարող ենք, իշխան:

ՀԱՄԼԵՑ: Շատ լաւ, գնացէք նորա իւսելից, միան չը ծաղրեք մերաս: (Պէտքանը գուած է: Պէսի բառէնքանց և Գեւենշաբեն:) Իմ բարի ընկերներ, մնաք բարես կասեմ ձեզ՝ մինչեւ երեկու: Շատ ուրախ եմ տեսնել ձեզ ելզինօրում:

ՊՈԶԾՆԿԲԱՆՑ: Ամենասիրելի իշխան:

ՀԱՄԼԵՑ: Այս, ուրախ եմ, մնաք բարես: (Գեւենշաբեն և Բառէնքանց գուած էն:) Վերջապէս ես մենակ եմ: Ո՛չ, ինչ չարագործ և ատելի սորուկ եմ ես: Հիացք չէ արդեօք որ մի դերասան երեակագելով իւ-

րեան մի անձն իւր ցնորքով, այն աստիճան կարողացաւ իւր հոգին հնազանդեցնել երեակագութեանը, որ նորա երեսը զեղնում է ներքին ալեկոծութիւնից, աչքերը արտասուքով թրչվում են, գծագրութիւնը սարսափ է բերում, ձանը դողդոջուն և կցկառուր: Եւ այդ ամենը ում պատճառաւ, մի որեէ Հեկուբի պատճառաւ: իսկ Հեկուբը նորա ինչն է, կամ ինքն Հեկուբինը ինչն է, որ նա, նորա համար արտասպում է: Բաց ինչ կանէր նա, եթէ իւր կրքերը շարժելու այնպիսի առիթ ունենար, ինչպիսին ես. նա ամբողջ բեմը կը խեղչէր արտասուքով. սարսափելի ճառերով կը հարուածէր հանդիսականների լողութիւնը, կը գժվացնէր մեղաւորին, կը սարսափեցնէր անմեղին, կը շփոթեցնէր բան չխացողին, կը բթացնէր լողութիւնը, բաց և կը հիացնէր: Ես զանդաղ, անզգայ անպիտանն թուլանում եմ ինչպէս մի ողրունիլ ցնդարան՝ և չեմ կարողանում մի բառ անդամ ասել թագաւորի մասին, որին այնպիսի գարշելի կերպիւ զրկեցին տէրութիւնից և թանկագին կեանքից: Բաց ինչ... ես վախկնա եմ: Ո՞վ կը համարձակուի ինձ վատ անտանել ջախջախել գլուխս, քաշել ծնօտիս մաղերը և երեսիս զարնել, ստափօս բառը մեխել կուրծքիս մէջ: Ո՞վ կը համարձակէ: Բաց ես այդ անարգանքն էլ կը տանէի.—ես քաջութեամբ աղաւնի եմ, անպատճութեան համար ես մաղձ չ'ունեմ, աղասի աշխարհիս զիշատիչներին ես գարշելի սատակած զիսվ կը կերակրէի: Ո՞հ, արիւնարբու, անխիղձ, կեղծաւոր, տմարդի անբան: Զարմանալի քաջութիւն: Ես, սիրելի և սպանուած հօր որդի—որին երկինքը և դոփսքը կանչում են վրէժ առնելու համար, ինչպէս մի սոռնիկ կին, թեթեացնում եմ կուրծքս հանուանքներով: Ո՞հ, Համբէտ, Համբէտ, ամօթ է, ամօթ: Յառաջ, զէպի գործ: Ես լսել եմ որ յանցաւորները խոստովանգում են իւրեանց լանցանքները, երբ նոքա թատրոնում տեսնում են խելացի ներկայացումներ: Սպանութիւնը թէն չունի լեզու, բաց երբեմն խորհրդաւոր է և հասկանալի կերպիւ մէկնվում է: Ես կը հարկադրեմ զերասաններին, հօրեղբօրս առաջ հօրս սպանութեան պէս մի բան ներկայացնել. իսկ ես անդադար կը նայեմ նորա աչքերին՝ և կը թափանցեմ նորա հոգւով խորքերը. եթէ նա

շփոթուի, այն ժամանակ ես զիտեմ ճանապարհը: Տեսածս ուրուականը կարելի է սաստանաչ էր, սաստանան կարող է գրաւիչ կերպարանք ստանալ, նա իմ փոքրոգութիւնից և անզսպութիւնից օգտուելով կարող է խաբել, որ ձգէ ինձ լաւիտենական տանջանքի մէջ: Ո՛չ, ինձ պէտք են աւելի ծանրակշխո փաստեր: Ներկազացումով ես կ'որսամ թագաւորի խղճմտանքը: (Գնուած է:)

Վ.ԱՐԱԳՈՅԲ:



ԱՐԱՐՈՒԱ ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

(ՍԵՆԵԱԿ ԴՊԵԿՈՒՄ)

ՏԵՍԻԼ Ա.

ԹԱԳԱԽՈՐ, ԹԱԳՈՒՀԻ, ՊՈԼՈՆԻՈՒՄ, ՕՖԵԼԻԱ, ԲՈԶԵՆԿՐԱՆՑ և ԳԻՂԵՆՇԵՏԵՐՆ:

ԹԱԳԱԽՈՐ: Եւ դուք ոչ մի կերպով չը կարողացաք իմանալ՝ թէ ինչու համար է նա խելազարի դեր խաղում՝ և աղպիսով խանզարում իւր հոգւոյ խաղաղութիւնը:

ԲՈԶԵՆԿՐԱՆՑ: Նա խոստախնդում է, որ մտաւորապէս շփոթուած է, բայց պատճառը չէ լատնում:

ԳԻՂԵՆՇԵՏԵՐՆ: Եւ ոչինչ հնարք չենք գտնում նորանից մի բան իմանալ: Խելազարութեան խորամանկութեամբ նա մեր փորձերը, նորան հարցաքննելու նկատմամբ, բոլորապին հեռացրեց իրանից:

ԹԱԳՈՒՀԻ: Ի՞նչպէս ընդունեց նա ձեզ:

ԲՈԶԵՆԿՐԱՆՑ: Բարեկիրթ մարդուն պատշաճականութեամբ:

ԳԻՂԵՆՇԵՏԵՐՆ: Բայց հակառակ իւր արամազրութեան:

ԲՈԶԵՆԿՐԱՆՑ: Ժլատ էր պատասխանելու, բայց առաս հար-

ցեր տալու:

ԹԱԳՈՒՀԻ: Դուք առաջարկեցիք նորան գուարձութեան միջոցներ:

ԹՈՉԵՆԿԻԱՆՑ: Ճանապարհին մենք պատահեցանք դերասաների, որոնց մասին մենք հաղորդեցինք իշխանին: Նա ուրախացաւ: Նոքա, եթէ չեմ սխալվում, ապատեղ են՝ և ստացան նորանից հրաման մի բան ներկայացնելու այս երեկոյ:

ՊՈԼԾՆԻՈՒՄ: Այն, ուղիղ է, և նա ինձ լանձնեց խնդրել Ձերդ մեծութեանը, ացելել և լել այդ ներկայացմանը:

ԹԱԳԱՒԻՈՒ: Մեծ ուրախութեամբ, Նորա ալդպիսի հակումն դէպի զուարձութիւնները ուրախացնում է ինձ: Խնդրում եմ ձեզանից, բարեկամներ, աշխատեցէք զօրացնել նորա այդ ցանկութիւնը:

ԹՈՉԵՆԿԻԱՆՑ: Կաշխատենք, թագաւոր: (Գնում է Գէտէնշառէրն էւրում:)

ԹԱԳԱՒԻՈՒ: Սիրելի Հերտրուդա, որւ ես գնա ալստեղից: Մենք ծածկաբար կարգադրել ենք այնպէս, որ Համլէտը կը գալ ապատեղ՝ և իւր թէ պատահմամբ կը հանդիպէ Օֆէլիալին: Սորա հայրը և ես—օրինական լրտեսներ,—այնտեղ կը թագնուենք, մենք ինքններս անկատելի մնալով կը կարողանանք տեսնել նոցա հանդիպումը, և նորա վարմունքին նաեւով կարելի է ստուգել նորա հիւանդութեան պատճառը:

ԹԱԳԱՒԻԾԻ: Ես հեռանում եմ, կը ցանկամ՝ սիրելի Օֆէլիա, որ իսկապէս քո գեղեցկութիւնը լինի Համլէտի խելագարութեան պատճառը: Ան ժամանակ ես կարող կը լինեմ լուսալ, որ քո առաքինութիւնը վերադարձնէ նորան դէպի առաջուակ սովորական ճանապարհը:

ՕՖԷԼԻՈՒ: Ինձ ել ցանկալի է, թագուհի: (Թագուհին գնում է:)

ՊՈԼԾՆԻՈՒՄ: Օֆէլիա, զու ապատեղ մնայ: Մենք, Վեհափառ Տէր, կանգնենք մեր տեղը: (Օֆէլիային:) Կարգած այս գիրքը, որ այդ պարապմունքի ձեռվ դու արդարացնես քո միանակութիւնը: Դորա մասին մեզ շատ բամբասում են, չափնի է որ Աստուածապաշտութեան ձեռվ և Աստուածահամու գործերով մենք սատանափին անդամ մեղմացնում ենք:

ԹԱԳԱՒԻՈՒ: (Մէ իրաւունք) Ո՛հ, որքան ճշմարիս է, որքան խստօ-

րէն հարուածում են խղճմտանքս այդ բառերը: Պոռնիկ կնոջ ներկած երեսը այնքան զզուելի չէ, ինչպէս իմ գործը, իմ ներկած ճառախօսութեան հետ համեմատելով: Ո՛հ, ծանր լուծ է:

ՊՈԼԾՆԻՈՒՄ: Նա գալիս է, թագնուհնք, թագաւոր:

(Գնում է Ասգուտորի հէրուս: Օֆէլիան կորուալ հարում է բեմի վէրաց: Համարում է:)

ՀԱՄԼԻՅ: Լինել, թէ չը լինել—ահա այս է խնդիրը:—Ո՞րն է աւելի ազնիւ, տանել չարագործ բաղդի նետերը և հարուածները՝ թէ դիմագրել թշուառութեանց ովկեանոսի դէմ՝ և պատերազմելով վերջ տալ նոցա: Մեռնել, քնել, ոչ աւելի՝ և զիտենալ որ այն քնով մենք վերջացնում ենք բոլոր վշտերը և հազար մի բնական աղտեղութիւններ, որ ժառանգել է մեր մարմինը:—ամենացանկալի վախճան:—Մեռնել—քնել—քնել: Բաց եթէ այն քնի մէջ մեզ երազներ ացցելեն, —ահա արգելք: Որպիսի երազներ կարող են լինել մեռեալ քնի մէջ, երբ մենք մեզանից թափ կը տանք երկրագին բոլոր ունացնութիւնները: ահա ինչն է ընդմիջում մեր ապագայ ճանապարհը, ազապէս ովկ կը համբերէր ժամանակիս պատիմը և ծաղրը, իրաւանց անզօրութիւնը, իշխանասէրների ճնշումը, գոտողների անարգանքը, մերժած սիրոց տանջանքը, զատաւորաց ինքնակամութիւնը, երբ ինքը սրի մի հարուածով կարող ես այդ ամենից աղասուել: Ո՞վ անքալով և քրտինքով կը տանէր կեանքի ծանրութիւնները, եթէ կտա մահուան երկիւզը, այն անծանօթ աշխարհը, որտեղից ոչ ոք չէ վերադարձել, չը չփոթեցնէր մեր կամքը և չը հարկադրէր տանել կեանքի տառապանքները, փոխանակ նետուելու դէպի զագալը, դէպի անցասութիւնը: Այդպէս ուրեմն՝ խղճմտանքը մեզ դարձնում է վախկոտ: այդպէս հանդչում է մեր մէջ ուժեղ կամքի և վճռահասութեան արեգը, երբ մենք սկսում ենք խորհել, և մեծամնծ նշանակութիւն ունեցող նպատակները շնորհում են ճանապարհից: Ա՛, Օֆէլիա... (Ո՛հ նէժքում:) Ով հարո, վեշիր դու ինձ քո աղօթքների մէջ:

ՕՖԷԼԻՅ: (Մօդեհուալ հորան) Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Եասո չնորհակալ եմ, լաւ է, լաւ է:
ՕՖԵԼԻԱ: Իշխան, ես վաղուց կամենում էի վերադարձնել ձեզ,
ձեր ընծաները: Առեք այժմ:

ՀԱՄԼԵՏ: Երբէք, երբէք: Ես ձեզ ոչինչ չեմ ընծագել:
ՕՖԵԼԻԱ: Սիրելի իշխան, ձեզ լաւ լաւոնի է ինչ որ ընծագել
եք այն խօսքերի հետ ի միասին՝ որոնք լրեղէների արժեքը կրկնա-
պատկեցին: Փոքը անապացաւ, — իստ առէքնոցաւ: Ազնիւ սրափ հա-
մար թանկագին չէ ընծան այն մարդուց, որ մեզ չէ սիրում:

ՀԱՄԼԵՏ: Ա՛, ա՛, դու անարատ ես:

ՕՖԵԼԻԱ: Իշխան:

ՀԱՄԼԵՏ: Եւ գեղեցկուհի ես:

ՕՖԵԼԻԱ: Ի՞նչ կամիք ասել, իշխան.

ՀԱՄԼԵՏ: Աչ՛ որ եթէ դու անարատ ես և գեղեցկուհի, քո անա-
րատութիւնը ոչինչ գործ չը պէտքէ ունենաց քո գեղեցկութեան հետ:

ՕՖԵԼԻԱ: Գեղեցկութեան համար անարատութիւնից առաւել
վերադանց ընկերակից կարելի է գտնել:

ՀԱՄԼԵՏ: Աչ՛, լաւանի բան է: Բայց գեղեցկութիւնը, անարա-
տութիւնը, աւելի շուտով անպարկեցութեան կը հասցնէ, բան թէ
առաքինութեանը կարողանաց նմանացնել: Առաջ դա մի ցնորք էր,
բաց այժմ իրողութիւն: Երբեմն ես քեզ սիրում էի:

ՕՖԵԼԻԱ: Եւ խկապէս, իշխան, դուք ստիպեցիք հաւատալ
դորան:

ՀԱՄԼԵՏ: Բայց դու չը պիտի հաւատալիր, որովհետեւ առաքի-
նութիւնը երբէք չէ միանում մեզ հետ այնպէս, որ մեր մէջ հին
մեղքերի նշով չ'մնաք: Ես քեզ չեմ սիրել:

ՕՖԵԼԻԱ: Ուրիշն ես խարուած էի:

ՀԱՄԼԵՏ: Մաֆր կուսանոց: Ինչո՞ւ համար են պէտք ծնուել
մեղաւորներ աշխարհիս համար: Ես ինքս, բաւական աղճիւ մարդ,
կարող կը լինեմ գատապարտել ինձ անպիսի լանցանքների մէջ, որ
առաւել լաւ կը լինէր, եթէ մարտ ինձ չը ծնէր: Ես հպարտ եմ, վրէժ-
ինդիր, պատուամէլ՝ և բեռնաւորուած անքան պակասութիւններով

և մեղքերով, որ նոցա խելացս մէջ տեղաւորել չեմ կարող երեակա-
լութեանս մէջ նոցա կերպարանք տալ չեմ կարող և ժամանակ չու-
նեմ նոցա իրազործելու: Ինչո՞ւ ինձ նման անպիտանները սողում են
երկնքի և երկրի մէջ: Առաջինից մինչև լատինը—մենք ամենքս լա-
բրաներ ենք: Մեղանից դու ոչ ոքի չը հաւատաս: Մաֆր կուսանոց:
Ո՞ւր է հապո:

ՕՖԵԼԻԱ: Տան է, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Փակիք դուռը նորա վերակ, որ տանը միան լիմա-
րութիւն անէ, — մնաս բարե:

ՕՖԵԼԻԱ: Ողորմած Աստուած, օգնիք դու նորան:

ՀԱՄԼԵՏ: Եթէ դու ամուսնանաս, ահա քեզ իմ օժիտը—այս ա-
նէծքը, Եղիք դու անարատ իբրև սառուց, մաքուր՝ իբրև ձիմ, — դար-
ձեալ չես ազատուիլ զրպարտութիւնից: Մաֆր կուսանոց: մնաս բարե:
Իսկ եթէ դու անպատճառ կամենում ես ամուսնանալ, ամուսնացիք
լիմարի հետ, որովհետեւ խելացիները քաջ գիտեն թէ ինչպէս դուք
նոցա հրէշացնում էք: Նուսով կուսանոց մտիք և մնաս բարե:

ՕՖԵԼԻԱ: Փարատեցէք նորան՝ զօրութիւնք երկնից:

ՀԱՄԼԵՏ: Լսել եմ ձեր նկարչութեան մասին: բաւականին
լսած եմ: Աստուած տուել է ձեզ մի երես, դուք նորան ալակերպում
էք, Դուք թափառում էք, թռչկոտում և պարում: Աստուծոյ արարած-
ներին ծաղրում էք և հաճուական անուններ էք առլիս, ձևացնելով
թէ ալդ ամենը տգիտութիւնիցն է, բայց խկապէս թեթեամտութիւ-
նիցն է: Կորիք, ալդ բանն էր լսկ որ ինձ խելացարացրեց: Ես ասում
եմ որ ակտուել էլ ամուսնութիւն չի լինի: Նորք, որոնք արդէն ա-
մուսնացել են, բացի մէկից, թնդ ապրեն: մնացեալները կը մնան
այնպէս, ինչպէս կան: Գնա, գնա կուսանոց: (Գնաւա՞ծ է)

ՕՖԵԼԻԱ: Ո՞հ, որպիսի անզիւ հոգի հանգաւ սորա մէջ, գիտա-
կանի լեզու, թագաւորազնի աչք, սուր՝ ներոսի, գիտութեան լուս և
ծաղիկ, թագաւորութեան և խելքի օրինակ, գիտողութեան միակ ա-
ռարկավ: — բոլորը, բոլորը խորտակուեցան: Խակ ես ամենաչնչինս, դա-
տապարտուած եմ տեսնել, ինչպէս անկաւ բարձրագոյն խելքի զօ-
րութիւնը, երբ ես արդէն հաշակեցի նորա երգմանց նեկտարը: Թարմ

Կրիտասարդութեան գեղեցկութիւնը խորտակուեց, դարնան ծաղկվը փոթորկի մէջ թառամեց. Վայ ինձ, ինչ տեսաւ առաջ և ինչ եմ տեսնում այժմ: (Թագուար և Պօլանիուս Տպհուած էն:)

ԹԱԳԱԼԻՈՒՅ: Սէր,—օ-ոչ: Դա սիրով հիւանդութիւն չէ: Նորա բառերը թէե վայրենի են, բայց անխելք չեն: Նորա սրախ մէջ ընկել է տիսրութեան սերմը, որ կը զարգանաչ, կը հասնի և պտուղը սարսափելի կը լինի: Ուստի առ ձեռն ես այսպէս վճռեցի: Նա անցապազ կ'երթաւ Անդղիաւ տուրք պահանջելու: Կարելի է ծովալին ճանապարհորդութիւնը, նոր աշխարհի առարկաների զանազանութիւնը դուրս ձգէ նորա սրախց կասկածը, որոյ վերաէ միշտ մտածելով նա բոլորովին ապափոխուել է: Դու ինչպէս ես կարծում:

ՊՈԼՈՆԻՈՒՅ: Ա՞ռ, դա օգտաւէտ կը լինի, բայց ես դարձեալ համոզուած եմ որ նորա ախրութեան պատճառը դժբաղդ սէրն է: Ե՛, Օֆէլիա, դու կարիք չունես մեզ պատմելու Համելիսի քեզ հետ խօսածը.—մենք ամեն բան լսեցինք: Կարգատրեցէք ինչպէս ձեզ հաճելի է: Եթէ դուք լարմար կը տեսնէք, թող թագուհին ներկայացումից լսող առանձին խօսէ հետը՝ և ինդիէ լավտնել իւր վիշտը: — Իսկ ես, եթէ կամիք, կը տեղաւորում այնպէս՝ որ լսեմ խօսակցութիւնը, երբ նա իւր սիրաը կը բանաք: Թող նա գնաէ Անդղիաւ կամ բանաը, եթէ դուք նպատակաւար կը համարէք:

ԹԱԳԱԼԻՈՒՅ: Թող արդպէս լինի: Երեւելի մարդկանց խելազարութիւնը առանց վերահպեցութեան թողնել չի կարելի: (Գնաւած էն:)



ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(ԳԱԶԼԻՃ ԱՄԱՌԱՆՈՅՑՈՒՄ:)

ՏԵՍԻԼ Ա.

Մասնաւ չո ՀԱՄԼԵՏ և ԳԵՐԱՍԱՆՆԵՐ:

ՀԱՄԼԵՏ: Խնդրեմ կարդաց մենախօսութիւնը ինչպէս ես քեզ ցուց առախ, հեշտութեամբ և աղատ: Եթէ դու կը գոռաս, ինչպէս մեր գերասաններից մի քանիսը, դա անքան զուրեկան կը լինի, ինչպէս եթէ իմ ոտանաւորները կարդաւ մի մանրավաճառ: Ձեռներով աջ և ձախ շատ մի սղոցիր օղը, —եղիք չափաւոր: Քո կրքերի հեղեղի, փոթորկի և ապապէս ասել, մրրկի մէջ դու չափաւորութիւն պիտի պահպանես, որ զուրեկան լինի: Ես միշտ ձանձրանում եմ, երբ տեսնում եմ մի հասարակ և կեղծումով գերասան, որ կիրքը պատառոսում է մասերի, որպէս զի ամբոխի ականջները ծակոտի: Իսկ ամբոխը ընդհանրապէս ուրիշ բան չէ հասկանում, բայց եթէ մնջկատակներ և աղաղակ: Ալդպիսի գերասաններին ծեծել է հարկաւոր: Խնդրում եմ զգող եղիք ալր կողմանէ:

Ա. ԳԵՐԱՍԱՆՆ: Զերդ բարձրութիւն, կարող էք դորա մասին ապահով լինել:

ՀԱՄԼԵՏ: Բայց չը լինես շատ դանդաղ. քո սեպհական խոհեմութիւնը թող լինի քո առաջնորդը, շարժուածքը և բառերը միմանց համապատասխան պէտք է լինեն: Առանձին ուշադրութիւն դարձրու: Որ բնականութեան սահմանից չ'անցնես, որովհետեւ անբնականութիւնը հակառակ է թատրոնի գաղափարին, որոյ նպատակն էր, և միշտ կըլինի բարւոյ և չարի, ժամանակի և մարդկանց համար

Հայէլի: Եթէ նոցա ներկազացնես աւելի թողլ կամ խիստ կերպով, — անդէտներին դու կը ծիծաղեցնես, իսկ հասկացողներին անախորժ կ'թփակ. իսկ ձեզ համար հասկացողների կարծիքը գերազանց պիտի համարուի: Ես տեսել եմ աճապի դերասաններ, որոնց մինչև երկինք են բարձրացնում, բայց իսկապէս նոքա իրանց բառերով և շարժուածքներով նման չեն ոչ միայն քրիստոնէի, այլ և հրէաների, այլ և մարդկանց: Քայլում էին նոքա և մկկում, գոռում, գոչում աճապէս, որ կարծես նոցա ստեղծել է բնութեան մի արհեստաւոր, այն ևս անկաջող արհեստաւոր: Ազգապէս սարսափելի կերպով նոքա ներկացնում էին մարդկութիւնը:

Ա. ԳԵՐԱՍ. Մեր մէջ ազդ ամենը հազիւ կը տեսնէք, կը լուսամ:

ՀԱՄԼԻՑ: Զնջեցէք բոլորովին. եւ ծաղրածուների դերեր ներկապացնողները թող խօսեն միայն այն, ինչ որ գերի մէջ գրած է: Յիմար ամբոխին ծիծաղեցնելու դիտամբ, նոքա իրանք ծիծաղում են աճ ժամանակ, երբ հանդիսականները պէտքէ խորհեն ողբերգութեան մի նշանաւոր վայրկեանի վերակ: Դա ամօթ բան է և ներկացնողի ողորմելի փառաւորութեանը ապացուց է: Գնացէք պատրաստուեցէք:

(Պէտքառննէրը գնուամէն: Մարդուամէն Պօլէնիուս, Բոռէնիլունց և Վիլյունշունը): Հէ, ինչ կաէ, կամենում է թագաւորը տեսնել ողբերգութիւնը:

ՊՈԼԾՆԻՈՒՍ: Ան, և թագուհին, և առանց լետաձգութեան:

ՀԱՄԼԻՑ: Հրամափցէք դերասաններին շտապել:

(Պօլէնիուսը գնուամէն:)

Բարեհանեցէք և դուք երկուքդ օգնել նոցա:

ՐՈԶԵՆԿՐԱՆՑ: } Յօժարութեամբ, իշխան: (Գնուամէն:)
ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: } Գիլդանականական անդամներին:

ՀԱՄԼԻՑ: Է՛ս, Հօրացիօ: (Հօրացիօն մարդուամէն:)

ՀՕՐԱՑԻՕ: Ալատեղ եմ, իշխան և պատրաստ ձեզ ծառակելու:

ՀԱՄԼԻՑ: Հօրացիօ, դու իմ տեսած մարդիկներից ամենաազ-
երին ես:

ՀՕՐԱՑԻՕ: Իշխան:

ՀԱՄԼԻՑ: Ո՛չ, հաւասու ինձ, որ չոնեմ ինչ շողոքորդելու: Ի՞նչ կարող եմ սպասել քեզ պէս աղքատից: Քո լուսաւոր խելքն է քո բալոր հարստութիւնը, որ քեզ կերակրում է և հազցնում: Ինչու է հարկաւոր շողոքորդմէ: Թող մեղրոտ լեզուն իմար հարստութիւնը լիդէ և թող հնազանդ ծնկներ խոնարհեն որտեղ նոցա պարզեն և օգուտ են սպասում: Խօիր, այն օրից՝ երբ հոգիս խր ընտրողութեանց մէջ ինքն իշխան դառաւ, մարդկանց զանազանելու ընդունակութիւնը ստացաւ, ամենի միջից նա քեզ ընտրեց, որովհետեւ անքան շատ բան տանելով՝ գու կարծես ոչինչ չես տարել, հաւասար գոհունակութեամբ գու ընդունել ես բաղդի հարուածները և պարզմները և դու օրհնեալ ես: Քո խելքը և արիւնը աճապէս չնորհալի կերպի խառնուած են, որ դու բաղդի համար խողովակ չես դառել, որ հանես աճապիսի ձաներ, ինչ որ նորան համելի է: Տուր ինձ աճապիսի մարդ, որ չ'լինէր խր կրքերի ստրուկ, ես նորան կ'պատսպարէի հողւուս ամենասուրը խորքերի մէջ, ինչպէս քեզ եմ պատսպարել: Բաւական է դորա մասին, Թագաւորի ներկալութեամբը այս օր մէկ ողբերգութիւն կը ներկաւացնեն, անսարաններից մէկը հօրս մահուան նման է, ինչպէս ես քեզ պատմել եմ: Խնդրում եմ քեզ, ուշադրութեամբ նաևիր հօրեղբօրս վերակ, երբ կ'լինի ազդ տեսարանը: Եւ եթէ ացդեղ նմանապէս թագցրած մեղքը չ'երեակ, կը նշանակէ որ գարաստափի վերակ մեզ լայտնուած ուրուականը դժոխիքի բնակիչ էր՝ և իմ կասկածները Վուլկանի *) հրաբուփի զնդանից սեազոն են: Նաևիր ուրեմն հօրեղբօրս վերակ և ես կը բենեռեմ աչքերս նորաերեսին, վետո մենք կը խորհնենք մեր տեսածը:

ՀՕՐԱՑԻՕ: Պատրաստ եմ, իշխան, եթէ նա մի բան գողաճաւ ներկալուցաման ժամանակը և խանգարէ մեր զիւտը, — գողացածը ես կը վճարեմ: —

*) Ջ'անդամած է:

ՀԱՄԼԵՏ. Գալիս են, ես պէտք է աճհող ձեանամ, տեղդ բռնիրու
(Դանեայ ճաշ: Ապհուած էն Թագուար, Թագուակ, Պօլօնիուս, Օքելիս,
Բաղենիցան, Գելէնիշելն և այլն:)

ԹԱՐԱԿԱԽՈՐ. Մեր եղբօր որդի Համլէտի կենցաղավարութիւնը
Բնչպէս է:

ՀԱՄԼԵՏ. Ո՞հ, շատ լաւ է, կերակրվում եմ խամելիօնի սը-
նունդով և խոստամերով համեմած օդ եմ ծծում: Զեր թուշուններին
էլ աղպէս չէք կերակրում:

ԹԱՐԱԿԱԽՈՐ. Ես չեմ հասկանում քո պատասխանը Համլէտ.
Պոքա իմ բառերը չեն:

ՀԱՄԼԵՏ. Աքմ իմ էլ չեն: (Պօլօնիուսին:) Դուք պատմում էիք
թէ համալսարանում երբեմն ներկաւացրել էք:

ՊՈԼՕՆԻՈՒՍ. Այս, ձերդ բարձրութիւն. ես լաւ դերասանի համ-
բաւ ունեի:

ՀԱՄԼԵՏ. Ի՞նչ էիք ներկաւացնում:

ՊՈԼՕՆԻՈՒՍ. Ես՝ Յուլիոս կեսարին. ինձ կապիտոլիի մէջ ըս-
պանեցին... ինձ Բրուտոսը սպանեց:

ՀԱՄԼԵՏ. Նա ծաղրածուի պէս է վարվել, սպանելով Կապիտոլիի
հաւին: Դերասանները պատրաստ են:

ՊՈՋԵՆԿԻՐԱՆՅ. Պատրաստ են իշխան, ձեր հրամանոցը կը-
սպասեն:

ԹԱՐԱԿԱԽՈՐ. Ե՛կ ակտեղ, սիրելի Համլէտ, մօտ նստիր:

ՀԱՄԼԵՏ. Ո՞չ, անդին մարդիկս, ակտեղ մի մետաղ կատ, որ
ինձ առելի դէպի ինքն է ձգում:

ՊՈԼՕՆԻՈՒՍ. Ահա, լսում էք, Վեհափառ Տէր:

ՀԱՄԼԵՏ. Թողլ կ'առաք ինձ, գեղեցկուհի, ընկղմել ձեզ մօտ:

ՕՖԵԼԻԱ. Ոչ, իշխան:

ՀԱՄԼԵՏ. Կ'ուղեի ասել, թեքել գլուխս դէպի ձեր ծնկները:

ՕՖԵԼԻԱ. Համեցէք իշխան:

ՀԱՄԼԵՏ. Իսկ գուք ուրիշ բան կարծեցիք:

ՕՖԵԼԻԱ. Ես ոչինչ չը կարծեցի իշխան:

ՀԱՄԼԵՏ. Օրիորդի ոտքերի մօտ պառկելը գեղեցիկ միտքա չէ:
Օֆելիա. Ի՞նչ ասացիք իշխան:

ՀԱՄԼԵՏ. Ոչինչ:

Օֆելիա. Դուք ուրախ էք:

ՀԱՄԼԵՏ. Ո՞վ, Բա:

Օֆելիա. Այս, իշխան:

ՀԱՄԼԵՏ. Ո՞հ, ես ձեր միակ խեղկատակն եմ. Էհ, ինչ ա-
նեն մարդիկ որ չ'ուրախանան: Նախեցէք մօրս ինչպէս ուրախ է և
զուարթ, բայց հաղիւ երկու ժամ է անցել հօրս մահուանից լետոց:

Օֆելիա. Ո՛չ իշխան, արդէն չորս ամիս է:

ՀԱՄԼԵՏ. Շատ ժամանակ է անցել. ուրեմն թաղ սատանան
մանգաց առգի հագուստով, իսկ ես կ'զարդարուեմ. ոհ, Աստուած,
երկու ամիս է, որ նա մեռել է և նորան դեռ չեն մոռացել: Ուրեմն
կարելի է լուսալ որ մեծ մարդու վիշտակը կէս տարի էլ կարող է
մնալ: Բայց երդիկում եմ, որ նա պէտքէ եկեղեցի շնձ, եթէ չէ կա-
մունում ինչպէս անցեալ տարուակ ձինը, անվշտակ մնալ: (Երա-
ծշուակեւն:)

(Յետոց սկսվում է միմիքական ներկաւացումն: Մտնում են թա-
գաւորը և թագուհին: Թագաւորը համբուրում է նորան և հաւասար-
ական շարժումներ է անում: Թագաւորը բարձրացնում է նորան և
թեքում է իւր գլուխը նորա ուսերքի վերաց պատկում է երկար ա-
թոռի վերաց: Թագուհին տեսնելով, որ նա քնեց — հեռանում է: Նո-
րանից լատոց մտնում է մի ոմն, հանում է քնողի գլխից թագը որե
համբուրում է. լցնում է թոն թագաւորի ականջի մէջ և դնում է:
Թագուհին վերադառնալով, թագաւորին մեռած է տեսնում և սար-
սափելի շարժուածքներով լալտնում է իւր վիշտը: Թունաւորողը ու-
րիշ երկու անձանց հետ մտնում է և միւսների հետ ողբում է:
Մեռեալին տանում են: Թունաւորողը առաջարկում է թագուհուն
ընծաներ և իւր սէրը, սա ցոյց է տալիս իւր զզուանքը և անհամա-
ձանութիւնը, բայց լսող առաջարկութիւնը ընդունում է, լետոց նո-
քա գնում են:

ՕֆելիԱ: Այս ինչ է նշանակում իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ազատեղ եղեռնազործութիւն է վարագուրած: (Մարտուած և բերտառաներեց Տէկը)

Ահա ակա պարսնից կ'իմանանք. դերասանները ոչ մի բան չեն կարող թագցնել, — բոլորը կ'ասմանեն:

ՕֆելիԱ: Նա կը մեկնէ մեղ այդ ներկաւացման նշանակութիւնը:

ՀԱՄԼԵՏ: Այս, ինչպէս և ամեն ներկաւացմանները: Եթէ դուք չ'ամաչէք առաջարկել նորան մի բան, նա էլ չի ամաչիլ պատմել ձեզ նորա նշանակութիւնը:

ՕֆելիԱ: Լաւ չէ իշխան, լաւ չէ. առամել լաւ կ'լինի եթէ ևս ողբերգութիւնը լսեմ:

ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻՑ ՄԷԿԸ:

Մեր և ներկաւացման մասին:

Ներողամասութիւն կ'ինդրենք,

Հանդերձ խոնարհութեամբ խորին:

ՀԱՄԼԵՏ: Միան աղքամն: Դա ինչ է, ւառաջարան է թէ մատանու վերնագիրը:

ՕֆելիԱ: Շատ կարճ է:

ՀԱՄԼԵՏ: Ինչպէս կինարմատի սէրը: (Մարտուած էն բեմական թագուց և Թագուցէննի:

ԲԱՅ. Թ Ա. Գ Ա. Ի Ո Բ:

Նժողու Փիրոսի երեսոն անզամ,

Երկնից կապուակալ անհուն գաշտերում,

Արդ կասարեցին, լցուցին շրջան,

Ամառնապտուս բարակ եթերում,

Եւ երեսուն անզամ աստղ գիշերին,

Արդէն տասն երկու կատարեց ամիս.

Պատու առնելով միջակն ամպերի,

Նոյն ժամանակից երբ մեղ զուգակցեց,

Դաշինքն սիրու և Հիմէնէի:

ԲԱՅ. Թ Ա. Գ Ա Ի Զ Ի:

Երեսուն ամիս կը լրանակ կրկին,
Սական մնաք բնաւ մեր սիրու միջին,
Մի փափուսութիւն չենք տեսնիլ երբէք.
Սական իմ հոգին կասկածանաց մէջ,

Ցուժ մթագնում է թախիծ մթութեան,
Եւ խոռովու հոգւով տեսնեմ տիրութեամբ.
Որ ամուսինս մի գաղտնի ցաւով,
Ալէկոծուած է ամբողջ իւր հոգւով:

ԲԱՅ. Թ Ա. Գ Ա Ի Ո Բ:

Պիտի բաժանումնք և շուտ ով գիտէ,
Դու կրկին ապրիր իմ մահից չետէ,
Թող ինդութիւնը քեզ հետ բնակի,
Թող երկրորդ սէրը տաւ ողջ քո կեանքին,
Բարեբասասութիւն, երջանիկ օրեր:

ԲԱՅ. Թ Ա. Գ Ա Ի Զ Ի:

Թող երկնից ահեղ փազակ որոսներ,
Ինձ ոճրագործիա սոսկալի պատիւն,
Երբ ազ սիրու միջ ես բազդ որոնեմ,
Աւելի շուտով ես ինձ կ'սպանեմ:

Պատիժ չեմ զտնիլ
Աճապէս բաւական, որ հանէ վրէժու,
Երբ ձեր տեղ ազի կը տամ իմ սէրս:

ԲԱՅ. Թ Ա. Գ Ա Ի Ո Բ:

Խօսքերդ քաղցր են, անմեղ անկեղծիկ
Ես հաւասառմ եմ, բաց մեղ ով գիտէ,
Սուզ ժամանակի կորուստ և շարիք
Ինչ չեն խոսանառում մեղ ամուսնուհիք.
Եւ զու, ով ընկեր երջանիկ աւուրս,
Եթէ ես մեռնեմ...

Բեմ. Թ Ա. Գ Ո Ւ Հ Ի Շ:

Թռղ այն ժամանակ աչքերս չ'տեսնեն
Յերեկուաց լուսը, խաւրեն մթանան.
Թող չարչարանքը անդութ թռնանան
Զբկեն զիս ամեն թանկագին բանից,
Երբ սպու զգեստը կը հանեմ մարմնից,
Այլ ամուսնու հետ ես դէպի սեղան, պսակ մօտենամ:
ՀԱՄԼԵՑ: Հաւանում էք ողբերգութիւնը մարիկ:
ԹԱԳՈՒՀԻԿ: Թագուհին կարծեօք չափազանց խոստումներ ավեց:
ՀԱՄԼԵՑ: Օ՛, նա բոլորը կը կատարէ:
ԹԱԳՈՒՀԻՐ: Դու գիտես ողբերգութեան պարունակութիւնը:
Մի դուցէ նորա մէջ որեէ անպատշաճ բան լինի:

ՀԱՄԼԵՑ: Ո՛չ, ոչ. նոքա միան կատակում են, կատակելով
թունաւորում են: Ոչինչ անպատշաճ բան չկաց:
ԹԱԳՈՒՀԻՐ: Խոկ ողբերգութիւնը ինչպէս է անուանվում:
ՀԱՄԼԵՑ: Մկնորս — ալաբանօրէն: Ողբերգութիւնը ներկա-
յացնում է Վեննապում պատահած մի անցք, մի մարդասպանութիւն:
Դքսի անունն է Հօնդադօ, խոկ կնոջը Բաբախստա: Դուք իսկո՞ն
կը տեսնէք այդ չարագործութիւնը, բաց մեզ ինչ փո՞թ: Դա ձերդ
մեծութեան և ինձ չէ վերաբերում, —մեր խղճմանքը մաքուր է, —
փափոխ շունը կ'վախենաս: (Մասնաւ է Լուցիոն:)

Սա Լուցիանն է, թագաւորի եղբօր որդին:

ՕՖԵԼԻԱ: Դուք երևել մեկնիչ էք, իշխան:

ՀԱՄԼԵՑ: Օ՛, ես կարող կը լինեի միջնորդ լինել ձեր՝ և ձեր սի-
րահարի մէջ, եթէ դուք մտադիր լինեիք ազգալիսի մի կատակերգու-
թիւն խաղալ:

ՕՖԵԼԻԱ: Դուք սրախօս էք, իշխան:

ՀԱՄԼԵՑ: Երբ ուրախութիւնը կուշանակ, դուք հառաչանքներ
կ'արձակէք:

ՕՖԵԼԻԱ: Քանի գնում է — վատանում է:

ՀԱՄԼԵՑ: Չեր ամուսինների ընտրութեան նման: Ակսիր մար-

գասպան, սկսիր: Եւ սե ազուաւը կոկուալով դէպի վրէժինութիւն
է հրաւիլում:

Լ Ո Ւ Յ Ի Ա Ն

Բարեբաստիկ ժամ և ոչ թունը արդ՝
է արդէն պատրաստ.

Ինքս քաղեցի մահու խոտերից՝
մարգերի միջից.

Դժոխքի Հեկատն զան լնձ ցուց տուեց՝

Եւ նորանց կորստեան նա բանտարկեց:

Կախարդ թոջն, շատափիր գէշ կեանքը կորել,

Եւ սպանիր նորան գօդ թշնամի սրով:

(Եաւ լուսաւ է Եռյալ ժառանձն ականջն հէտ:)

ՀԱՄԼԵՑ: Նա թունաւորում է նորան պարտիզում, որ էափշտա-
կէ նորա գահը: Նորա անունն է Հօնդագօ, գորա վիպասանութիւնը
կաէ խտալացւոց լեզուով և գրած է գեղեցիկ ոճով: Դուք իսկո՞ն
կը տեսնէք, որ մարդասպանը կը լափշտակէ և նորա կնոջ սէրը:

(Թագուհի վեր է հւնու:)

ՕՖԵԼԻԱ: Թագաւորը վեր կացաւ:

ՀԱՄԼԵՑ: Ի՞նչպէս, կեզծ պատճառից մազքան լուզուել:

ԹԱԳՈՒՀԻԿ: Ի՞նչ պատճեց քեզ, իմ բարեկամ:

ՊՈԼՅՈՆԻՈՒՍ: Դաղարեցրէք ներկաչացումը:

ԹԱԳՈՒՀԻՐ: Լուս արէք, երթանք:

ՊՈԼՅՈՆԻՈՒՍ: Լուս արէք, լուս, լուս:

(Բայց Հայէն և Հօնդագօ բնույթ էնու:)

ՀԱՄԼԵՑ: Վիրաւորեցին նետով եղջերուն՝

Մինը վակում է, միւսը արշաւում,

Այսպէս է լինում այստեղ՝

Ամբողջ աշխարհում:

Բայց դորանով ես սրտիս ուզած գերասանական խմբի մէջ ըն-
դունելութիւն կը գանձէի, եթէ ունենալի գլխիս փոնջ փետուր՝ և մի
զոդ ստնաման իւր զարդարանքով:

ՀՕՐԱՑԻՕ: Բայց ոռձիկը կիսով միան։
ՀԱՄԼԵՏ: Ո՞չ, ամբողջապէս։ Դու գիտես, իմ սիրելի Դամօն, ո՞ր երբեմն Արամազդը զարդարում էր այս գահը։ Եւ ովէ նստել այժմ ան գահի վրա։—ամենակաստարելագոն կապիկ։ Ո՞հ, իմ բարի Հօրացիօ, այժմ ուրուականի իւրաքանչիւր բառը հազար ոսկի արժէ։ Ինձ համար։ Դու նկատեցիր։

ՀՕՐԱՑԻՕ: Ինչպէս չէ։
ՀԱՄԼԵՏ: Երբ խօսում էին թունաւորելու մասին։
ՀՕՐԱՑԻՕ: Աչքս անգամ չեմ թարթել։
ՀԱՄԼԵՏ: Հա, հա, հա... Երաժշտութիւն, օն երաժիշտներ։
Ո՞հ, եթէ մեր թագաւորը կատակերգութիւն չէ սիրում...
(Մասնաւում էն Բօղէնիշոնց և Գէլուէնշոնէնց)

Նշանակում է որ նա կատակերգութիւն չէ սիրում։
ԳիլԴենՇէրն։ Իշխան, թռվ կ'տաք երկու խօսք ասել ձեզ։
ՀԱՄԼԵՏ: Կամիք մի ամբողջ պատմութիւն։
ԳիլԴենՇէրն։ Նորին մեծութիւնը։
ՀԱՄԼԵՏ: Հէ, ինչ է պատահել նորան։
ԳիլԴենՇէրն։ Նա առանձնացաւ իւր սենեակը և շատ վրդոված է։

ՀԱՄԼԵՏ: Գինուց։
ԳիլԴենՇէրն։ Ո՞չ, մաղձից։
ՀԱՄԼԵՏ: Պէտք է որ դուք աւելի առողջ դասողութիւններ ունենակիք և գիմէիք բժշկին, որովհետեւ, եթէ ես նորա համար լուծողական զրեմ, ան ժամանակ նորա մաղձը աւելի կ'շարժուի։
ԳիլԴենՇէրն։ Կարդաւորեցէք իշխան ձեր խօսքերը և մի խորշէք ինձ արած յանձնարութիւնից։

ՀԱՄԼԵՏ: Խնդրում եմ—պատմեցէք։
ԳիլԴենՇէրն։ Ձեր մայրը՝ թագուհին չափազանց վշտացած ուղարկեց ինձ ձեղ մօտ։

ՀԱՄԼԵՏ: Բարի էք եկել։
ԳիլԴենՇէրն։ Ոչ, իշխան, այդ քաղաքավարութիւնը անտե-

ղի է, եթէ դուք կամենում էք տալ ինձ առողջամիտ պատասխան, ես կը կատարեմ ձեր մօր յանձնարարութիւնը, եթէ ոչ, — ներկցէք, — ես հեռանում եմ և գործս աւարտած կը համարեմ։

ՀԱՄԼԵՏ: Զեմ կարող։

ԳիլԴենՇէրն։ Ի՞նչ չէք կարող, իշխան։

ՀԱՄԼԵՏ: Տալ ձեզ առողջամիտ պատասխան։ իմ խելքս տկար է, Բայց այն պատասխանը որն կարող եմ տալ ձեզ, — աւելի լաւ է ասել — մօրու։ Ուրեմն առանց կատակի գործին դիմենք, դուք ասում էք մաքս...»

ԻՌՋԵՆԿԻՐԱՆՅ: Ասում է Ձեր վարմունքը զարմացրեց և խիստ հարուածեց նորան։

ՀԱՄԼԵՏ: Զարմանալի որդի, եթէ նա կարողացաւ զարմացնել իւր մօրը. բայց միթէ աղղպիսի մարդական զարմացմանը ոչինչ չէ հետեւում, — խօսեցէք։

ԻՌՋԵՆԿԻՐԱՆՅ: Նա կամենում է ձեր հանգստանալուց առաջ խօսել ձեզ հետ իւր սենեակում։

ՀԱՄԼԵՏ: Կամի տասն անգամ նա ինձ մայր լինի, զարձեալ հնազանդում եմ։ Ունէք ինձ ասելու մի ուրիշ բան։

ԻՌՋԵՆԿԻՐԱՆՅ: Երբեմն դուք ինձ կը սիրէիք, իշխան։

ՀԱՄԼԵՏ: Կը սիրեմ և այժմ, երդում եմ զողութեան այս զէնքերով։

ԻՌՋԵՆԿԻՐԱՆՅ: Իշխան, ինչ է ձեր տկարութեան պատճառը ձշմարիտ դուք ձեր սենիական ձեռքով շղթաներով կապում էք ձեր աղատութիւնը, թաղցնելով ձեր վիշտը ձեր բարեկամից։

ՀԱՄԼԵՏ: Փառքի ծարաւն է դա, սիրելիս։

ԻՌՋԵՆԿԻՐԱՆՅ: Այդ կարելի չէ, քանի որ ինքը թագաւորը նըշանակել է ձեզ Դանիակի թագաժառանդ։

ՀԱՄԼԵՏ: Աչնպէս է՝ բայց «մինչեւ կանաչը բուսնի» — հնացած առակ է։ (Մասնաւում է Երաժիշտը ուինչել Յեւհոնին)։

Ա՛, տուիք ինձ այդ սրինգը. երկու բառ. (Ծանսնաւում է Գէլտէնշոնէ-)

բնի մէ կարծէ: Ինչու էք դուք իմ շուրջս մանդալիս, կարծես կամենում
էք ինձ ողոգավթի մէջ ձգել:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Ո՞չ, իշխան, եթէ իմ աճանուիրութիւնը դէպի
ձեզ՝ վստահութիւն է, դա նշանակում է միան, որ ես ձեզ չափա-
զանց սիրում եմ:

ՀԱՄԼԵՏ: Լաւ չեմ հասկանում ասածներդ, բարեհաճեցէք այս
սրինգը ածել:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Չեմ կարող իշխան:

ՀԱՄԼԵՏ: Խնդրում եմ:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Հաւատացէք, չեմ կարող:

ՀԱՄԼԵՏ: Շատ կը պարտաւորացնէք:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Ես ածելու ոչ մի կերպը չըգիտեմ:

ՀԱՄԼԵՏ: Բաւական է. ածելը այնքան հեշտ է, որքան և որ-
տելը: Դուք մատներով միայն ծածկեցէք և բռնեցէք այս ծակերը,
փչեցէք նորա մէջ և նա կ'տաէ ձեզ՝ ձեր ցանկացած ձաները: Կա-
ցեցէք ահա նորա դիրքերը:

ԳԻԼԴԵՆՇՏԵՐՆ: Բայց և աճապէս ես նորանից ոչինչ երաժշտու
թիւն ստանալ չեմ կարող:

ՀԱՄԼԵՏ: Ո՞րպիսի չնչին արարած էք համարում դուք ինձ:
Դուք խաղացնել էք կամենում ինձ, կամենում էք թափանցել սըր-
տիս խորքերը, փորձում էք՝ սկսելով մի ստոր խաղից, մինչև ամե-
նաբարձրը, մինչդեռ այս սրնգի մէջ կան այնքան գեղեցիկ ձաներ,
— և դուք չեք կարողանում ստիպել նորան խօսել: Ասացէք, միթէ
դուք կարծում էք՝ ինձ առաւել դիւրին է խաղաղացնել քան այս
սրինգը: Անուանեցէք ինձ ինչպէս կամիք, դուք կարող էք ինձ նե-
ղացնել, բայց խաղալ ինձ հետ՝ չեք կարող: (Մոհում է Պօլօնիուս:)
Բարեւ:

ՊՕԼՕՆԻՈՒՍ: Իշխան, թագուհին կամենում է խօսել ձեզ հետ՝
և իսկոն:

ՀԱՄԼԵՏ: Տեսնում էք այս ամպը, իսկ և իսկ ծիծենակ է:

ՊՕԼՕՆԻՈՒՍ: Կատարեալ ծիծենակ է:

ՀԱՄԼԵՏ: Ինձ թվում է՝ որ նա ուզափ նման է:
ՊՕԼՕՆԻՈՒՍ: Մէջքը իսկ և իսկ ուղոփ նման է:

ՀԱՄԼԵՏ: Թէ կիսի նման է:

ՊՕԼՕՆԻՈՒՍ: Կատարեալապէս:

ՀԱՄԼԵՏ: Լաւ է, գնում եմ մօրս մօտ իսկոն: Սոցա հետ ևս
կը խենդանամ: Իսկոն կը գամ:

ՊՕԼՕՆԻՈՒՍ: Այդպէս էլ կը բատնեմ:

ՀԱՄԼԵՏ: Իսկոն ասելը գժուար չէ: Թողէք ինձ, իմ բարե-
կամներ: (Բուռը գնում էն:) Այժմ զիշերուաչ սքանչելագործութան
ժամանակն է: Դագաղները բաց են արել իրանց բերանները՝ և զը-
ժոխն ինքը մահաբեր գոլորշիք է վչում աշխարհիս վերաց: Այժմ
իսկ, ես կարող կը լինէի տաք արիւն ճաշակել և կատարել անպիսի
սարաափելի զոլոներ, որ ցերեկը կը դողար՝ այն տեսնելով... Բայց ա-
ռաջ գնամ մօրս մօտ: Ո՞չ, հանդարասուիր սիրտ իմ, մի մոռանար
քո բնաւորութիւնը. մի ձգիր ներոնի հոգին այս կուրծքի մէջ: Ոչ,
Համլետ, եղիր մարդկորէն խստափիրտ: սուրը թողի լինի բառերիդ
մէջ և ոչ գործերիդ, թողի լեզուդ և սիրտ կեղծաւոր լինեն, որքան
որ սոսկալի լինեն խօսքերը, գործով մի կատարիր նորան: (Գնում է:)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՌԴ

(ՍԵՆԵՑԿ ՆՈՅՆ ՏԵՂԸ:)

ՏԵՍԻԼ Ա.

ԹԱԳԱԽՈՐԾ, ՌՈՋԵՆԿԲԱՆՅ, ԳԻԼԴԵՆՇՏԵԲՆ: (ՄՐԿԱՆՔ ԷՆ.)

ԹԱԳԱԽՈՐԾ: Ես նորանից անբաւական եմ և երկիւղալի եմ համարում նորա խելագարութեանը աղատութիւն տալ: Պատրաստ եղք ճանապարհ ընկնելու, ևս խկոն կը ստորագրնմ ձեր յանձնարարութիւնները և ձեզ հետ նա միասին կերթակ Անդղիակ: Ես՝ իբրև թագաւոր, չը պէտք թով տամ՝ որ նորա խենդութիւնը ամենայն րոպէ ձախորդութիւններ սպառնակ:

ԳԻԼԴԵՆՇՏԵԲՆ: Մենք պատրաստ կը լինենք, Ձեր հոգացողութիւնը բազմութեան ապահովութեան մասին, որ կ'ապրեն Ձերդ մեծութեան չնորդիւ, օրինաւոր և սուրբէ:

ԹՈՋԵՆԿԲԱՆՅ: Եւ մասնաւոր մարդ նմանապէս պատրաստ է իւր կեանքի բոլոր զօրութեամք պաշտպանուել իւր կեանքը ամենայն չարիքից, ևս առաւել այնպիսի անձն, որից հազարաւորների կեանքն և հանգստութիւնն կախումն ունի: Թագաւորը միայն չէ մեռնում, նա քարշում է իւր հետ և իւր մերձաւորներին: Նա մի ահապին բարձրագոն լերան գլխին կանգնած անձիւ է, որոյ մասերին կպցրած են անթիւ փոքր առարկաներ,—անկաւ դա, կը խորտակուի ան ամենը, ինչ որ նորա հետ միացած էր: Թագաւորի հոգւոցին հետևում է և բովանդակ ազգի հեկեկանը:

ԹԱԳԱԽՈՐԾ: Շատապեցք խնդրեմ, մենք չթափանք կը դնենք ալդ երկիւղի վերակ, որ շատ աղատ չը թափառէ նա:

ԹՈԶ. և ԳԻԼԴ. կը շտապենք մենք: (ԳՆԱՆՔՆ: ՊԵԼՈՒԹԵԱՆ ՀԹԱՆԱԿ:)

ՊՈԼՈՆՆԵՐԻ: Ձերդ մեծութիւն, լշխանը խկոն կը դաէ իւր մօր մօտ՝ և ես ակատեղ կը թագնուեմ, որ լսեմ խօսակցութիւնը: Ամենայն բան կը լսեմ: Հաւատացէք որ մայրը նորան շատ կարգին կը խրատէ: Բայց՝ ինչպէս դուք ասացիք՝ և ասացիք շատ խելացի բան,—որ հարկաւոր է բացի մայրը, մի կողմանակի մարդ՝ որ լսէ նոցա խօսակցութիւնը: Մնաք բարե, Վեհափառ Տէր. կը ներկաւանամ Ձեզ պատմելու լսածաւ:

ԹԱԳԱԽՈՐԾ: Շնորհակալ եմ, սիրելի Պօլոնիուս: (ՊԵԼՈՒԹԵԱՆ ՀԹԱՆԱԿ:): Ո՞չ, գարշելի է իմ չարազործութիւնը. իմ մեղաց ծուխը համուռմ է մինչև երկինք: Յաւիտենական անէծքը եղբայրապանութեան տանջում է ինձ: Ձեմ կարող աղօթել, թէս ունեմ ցանկութիւն աղօթելու: Եղեռնապործութեան զօրութիւնը թուլացնում է կամքս՝ և ինչպէս մարդ, որ պարտաւոր է երկու պարտք վճարել, տատանվում եմ, չը գիտեմ որից սկսեմ: Եթէ եղբօրս արիւնը ծածկէր և թափանցէր այս անիծեալ ձեռքս, միթէ երկնքումը չը կաէ անքան անձրե, որ լուսակաէ և մաքրէ նորան ինչպէս ձիւն: Ինչու համար է սուրբ ողորմածութիւնը, եթէնա չիներիլ մեր մեղքերը: Ի՞նչու համար է աղօթքի կրկնակի զօրութիւնը, եթէ չը ներէ և չը պաշտպանէ նորան, որ ընկառ արդէն: Բարձրացնում աչքերս դէպի երկինքը, բանցանքն արդէն կատարուած է, Բայց, Աստուած իմ, ինչ աղօթք կարող է օգնել ինձ: Քաւեա Տէր, կատարած սպանութիւնը: Անկարելի է: Աինչե ալժմ ես տիրում եմ այն բոլորը ինչ որ վաստակել եմ այդ մեղքով, թագը, բարձրանքը և թագուհոն: Կարելի է ներել նորան, որ ժառանգում է իւր մեղաց պտուղը: Այս փշացած աշխարհում ոսկին աղատում է պատճից՝ և զրաւում է օրէնքը, — բայց անտեղ ալդպէս չէ: Ակատեղ մեր գործերը իրանք են ներկաւանում՝ և մենք հանդիպելով նոցա ձակաս առ ձակաս, պարտաւոր ևնք հաշիւ տալ: Ի՞նչ է մնում ինձ անելու: Փորձեմ ինչ կը լինի. եթէ ես զղջամ... բայց ինչ կը լինի, քանի որ ես զղջալ չեմ կարող: Ո՞չ, սոսկալի զրութիւն: Կուրծքս սեէ, ինչպէս մահը, հոգիս կուզէ աղատուել, բայց առելի կաշկանդուած է շղթաներով: Օգնեցէք ինձ, հրեշտակներ երկնից: Փորձեմ, չոգեցէք

ծնկներ, երկաթեալ սիրա, մեղմացիր ինչպէս երեխալի սիրա, գուցէ
ամեն բան լաւ անցնի: (Չոքում է: Մոհում է Հայէդ և Տէրէցած
ոռու Յեւէն կանգնում է յէպելց:)

ՀԱՄԼԵՏ: Յարմար միջոց է, նա աղօթում է. ակմ ևս կարող
եմ վերջացնել: Եթէ ակմ կատարեմ, նա երկինք կ'երթաց՝ և այդ կը
լինի վրէժիսնդրութիւն. մտածենք: Այս անպիտանը սպանեց հօրս և
դորա համար ևս նորա միակ որդին՝ ուղարկում եմ այս անբանին դէ-
պի երկինքը: Դա պարզէ, վարձարութիւն է և ոչ թէ վրէժ: Նա
սպանեց հօրս, երբ նա անհոգ քնի մէջ էր, անպատճառ էր. նորա
մեղաց գարնանակին աճման ժամանակը: Ի՞նչ է ակմ նորա զրու-
թիւնը, Աստուած գիտէ. կարծում եմ որ ծանր է նորա վիճակը: Կա-
րող եմ սպանել սորան, երբ սա աղօթքի միջոցով պատրաստվում է
անցնել զէպի լաւիտենականութիւն: Ո՛չ, ո՞չ, դարձիր իմ սուր, որո-
նիր աւելի սարսափելի վայրկեանում: Սպանիր սորան, երբ սա քնած
կը լինի, կամ թղթախաղութեան ժամանակը և կամ պղծեալ անկող-
նու մէջ, ուր ոչինչ հոգեշան սրբութիւն չը կաէ.—որ նա սրնթաց
դժոխքը իջնէ սև և անիծեալ հոգով, ինչպէս ինքն դժոխքը: Մայս
սպասում է: Ապրիր կրկին, բայց դու արդէն մեռած ես: (Գնում է:)

ԹԱԳԱՒԻՌԻ: (Վերէնալով) Բառերս բարձրանում են՝ իսկ մաքերս
մնում են երկրի վերալ: Բառերը առանց խմատի երկինք չեն հաս-
նում: (Գնում է:)

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՈՐԴ:

(ԹԱԳՈՒԻՌՈՒ ՍԵՆԵԱԿ:)

ՏԵՍԻԼ Ա.

ԹԱԳՈՒԻՌԻ, ՊՈԼՈՆԻՈՒՄ, ԷԿԱԿ ՀԱՄԼԵՏ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: Խսկոն կը գաւ, խստիւ խօսեցէք նորա հետ, ասացէք
որ նորա վարմոնքը անտանելի է, որ ձերդ մեծութիւնը ստիպուած
էք մեղմացնել թագաւորի բարկութիւնը և այնպէս պաշտպանել նո-
րան: Ես աջառեղ կը թագնուեմ:

ԹԱԳՈՒԻՌԻ: Անհոգ կացէք, կարող էք ապահով լինել: Հեռացէք,
լուսմ եմ, նա զալիս է: (Պուանիուս ճոնում է վարչուցի յէպեւ: Մոհում է
Հայէդ:)

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ էք կամենում, մայրիկ:—

ԹԱԳՈՒԻՌԻ: Դու չափազանց անարգեցիր հօրդ:

ՀԱՄԼԵՏ: Դուք չափազանց անարգեցիք հօրս, մայրիկ:

ԹԱԳՈՒԻՌԻ: Բաւական է որդի, դու ինելազարի լեզուով ես պա-
տասխանում:

ՀԱՄԼԵՏ: Բաւական է մայրիկ, դուք մեղաց լեզուով էք խօսում:
ԹԱԳՈՒԻՌԻ: Դա ինչ է նշանակում:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ էք կամենում:

ԹԱԳՈՒԻՌԻ: Դու մոռացել ես, ես ով եմ:

ՀԱՄԼԵՏ: Օ՛, ոչ, երգվում եմ Աստծով. դուք թագուհի էք, ձեր
ստումնու եղօր կինը՝ և եթէ ալգակս չէ,—իմ մայր:

ԹԱԳՈՒԻՌԻ: Եթէ ալգակս է, թնդ ուրիշները քեզ հետ խօսեն:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ, սպասեցէք, դուք ապահովից չէք երթալ, մինչև
ես ձեզ չը ցոց տամ հակելին, որ դուք ձեր հոգին ախտեղ տեսնէք:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ի՞նչ ես կամենում, կուզես ինձ սպանել: Ե՞ս օգ-
նեցէք:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: (Վարդառյալ յերեկո:) Օդնեցէք Ե՞ս:

ՀԱՄԼԵՏ: Ա՛, մուկն է: (Հանում է սուրբ, եփում է որովհարութիւն:) Մեռած է, մեռած, զրաւ կը դնեմ:

ՊՈԼՈՆԻՈՒՄ: (Նոյն պէտք) Ո՛հ, սպանեցին: (Ընկում է և մեռանում:)

ԹԱԳՈՒՀԻՆ: Վաս ինձ, այդ ինչ արեցիր:

ՀԱՄԼԵՏ: Չը գիտեմ, ինչ կաէ, թագաւորն է: (Քաշում է Պօլոնիումի գործե վերայիշում:)

ԹԱԳՈՒՀԻՆ: Ի՞նչ արիւնահեղ և անմիտ գործ է:

ՀԱՄԼԵՏ: Արիւնահեղ,—այն, վատ գործ է անքան, որքան վատ է, մայր իմ, սպանել թագաւորին և լեռու ամուսնանալ նորա եղբօր հետ:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ի՞նչպէս թէ սպանել թագաւորին:

ՀԱՄԼԵՏ: Այս, ես ալդպէս ասացի: (Դէպէ Պօլոնիում:) Ե՛հ, դու ողոր-
մելի վամար, մնաս բարե, ես քեզ ուրիշի փոխարէն ընդունեցի, որ
քեզանից առաւել բարձր է: Տեսնում ես որ չափաղանց եռանդը, ա-
ռանց վտանգի չէ: (Թագուհուան:) Դաղարեցրէք կոտրատել ձեր մատ-
ները: Հանդարառուեցէք,—նստեցէք և թողէք որ ես մեղմացնեմ ձեր
սիրտը, եթէ ճա դեռ անքան չէ քարացել, որ մարդկակին կիրքը
նորան անմատչելի լինի:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ի՞նչ է իմ լանցանքը, որ դու համարձակվում ևս
ալդպէս վագրենի կերպիւ լարձակվել ինձ վերավ:

ՀԱՄԼԵՏ: Այն է որ, հոգեկան մաքրութեան պարկեշտութիւնը
դու արաստառուեցիր. առաքինութիւնը կեղծաւորութիւն անուանեցիր,
սիրու ճակատից դու վարդ քաղեցիր և նորա անարատ գեղեցկութեան
փոխարէն ակժմ հիւանդութիւն է ծաղկում: Քո շրթունքը մայր իմ,
պասկի սեղանի առաջ տաւած խոստունքները ստեցին՝ ինչպէս թըդ-
թախաղի երգումն: Ո՛հ, քո վարքը ամուսնութեան ծիսի ոգին ոչըն-
չացրեց և լոկ բառ դարձրեց: Կարմրումէ երկնքի ճակատը, նոչպէս
և երկիրը. այդ բարդ զանգուածը տխուր է, ինչպէս ահեղ դառաս-
տանի առաջ:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ո՛հ, վաս ինձ, այդ ինչ գործ է, որ ազգքան բարձր
աղաղակում է և կացակներ է կանչում:

ՀԱՄԼԵՏ: Նայիր ալսուեղ: Ահա երկու պատկեր, երկու եղբարց
պատկեր: Տես, որքան գեղեցիկ է այս. Հիակերիօնի գանգուր մազերը,
Արամազդի ճակատը, Մարսի համեցքը, ահարկու և հասմարզական:
Սա արարած էր ամբողջութեամբ, որոց վերակ աստուածներից իւրա-
քանչիւրը դրոշմել էր իւր կնիքը՝ ի հաւասառութիւն այսարհին, որ
սա մարդ էր: Սա քո ամուսինն էր: Յետու նայիր սորան, այս էլ
քո ներկայ ամուսինն է, ակս ժանդոս փողը, որ գողացաւ իւր եղբօր
կեանքը: Ո՞նես միթէ դու աչքեր: Լեռնային գեղեցիկ դաշտի բարձ-
րութիւնը ինչպէս կարողացար փոխարինել հոտած ճահիճների հետ:
Ո՞նես դու աչքեր—ոչ. դու չես կարող սէրը պատճառ բերել. քո
հասակում հանգչում է սէրը, սիրոյ հուրը, նա խելքին է հնապան-
դում. բայց ինչ խելք թելազրեց, սորան թողնելով՝ սորան անցնել:
Խելքից դու զուրկ չես, որովհետեւ մտածում ես, բայց մտածութիւնդ
շփոթուած է, որովհետեւ խելազարութիւնն անգամ անքան չէր սիս-
լեցնիլ, որ ալդպիսի աննման զանազանութեանց մէջ ընտրութիւնը
դժուար լինէր: Ո՞րպիսի սև սատանակ ձգեց քեզ այդ աչքակապու-
թեան խաղի մէջ: Աչքն առանց ձեռքի, ձեռքն առանց աչքի և ա-
կանջի, առողջ զատողութեան ամենափոքր մասնիկը անգամ ալդ-
պէս սխալուել չէր կարող: Ո՛հ, ամօթ, ուր է քո ամօթխածութիւնը:
Խորամանկ դժուար, եթէ դու կարող ես ապստամբել պառաւ կնոջ
ոսկերաց մէջ, ինչու երիտասարդութեան առաքինութիւնը չը պէտքէ
ինչպէս մոմ հալլի խոր սեփական կրակի դէմ:

ԹԱԳՈՒՀԻՆ: Լոյիր Համլէտ: Իմ աչքերը դու դէպի հոգւոս խոր-
քերը զարձրիր: Ես տեսնում եմ այն բժերը, նրա սև գոնը անքան
արմատացել է, որ մաքրել նորան անկարելի է:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ, միթէ հնարէ խալտառակ անկողնու մէջ, նստել
նորա գրկի մէջ, սիրել և կեղծաւորուել արեան պղծութեան բնի մէջ:

ԹԱԳՈՒՀԻՆ: Լոյիր, քո խօսքերը սրի պէս խոցում են իմ լսո-
դութիւնը: Լոյիր, սիրելի Համլէտ:

ՀԱՄԼԵՏ: Մարդասպան և չարագործ. քո առաջին ամուսնու տասներորդ մասն անդամ չ'արժէր: Թափաւոր ծաղրածու, թափաւորութեան գող, որ ծածուկ գողացաւ թագը և զրապանը դրեց:—

ԹԱԳՈՒՀԻՆ: Բաւական է: (Մոհամատ է ուրուտիշնէ:)

ՀԱՄԼԵՏ: Խեղասակ և կարկասաններից կաղմած թափաւոր... Պահապան հրեշտակներ, ձեր թեերով պաշտպանեցէք և ծածկեցէք ինձ: Ի՞նչ կ'ուզես հրաշալի պատկեր:

ԹԱԳՈՒՀԻՆ: Վայ ինձ, նա խելագարուեց:

ՀԱՄԼԵՏ: Նախատելու ես եկել դու քո դանդաղ որդուն, որ նա չը հետեւեց իւր բարկութեան և կրքերին և հրամանդ չը կատարեց: Ասմ:

ՈՒՐՈՒԱԿԱՆ: Չը մոռանաս... Ես եկել եմ զարթեցնել քո մէջ հանգած վճռահասութիւնը: Նայիր, մայրդ սարսափում է: Կանգնիր նորա՝ և նորա հոգեկան պատերազմի մէջ: Երեակալութիւնը թուլ բը-նաւորութեանց մէջ զօրեղ է: Խօսիր նորա հետ:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ է պատահել ձեղ մայրիկ:

ԹԱԳՈՒՀԻՆ: Աւաղ, քեզ ինչ է պատահել, որ դու աչքերդ դարձրել ես գէպի դատարկ տարածութիւնը. խօսում ես անմարմին օղի հետ: Աչքերդ աճապէս վայրինի փալում են, մազերդ կանգնում են զլախտ վերակ: Ո՞չ, սիրելի որդի, հիւանդութեան բոցը դու հանգցու համբերութեամբ: Ո՞ւր ես դու նալում:—

ՀԱՄԼԵՏ: Նորա վերակ: Տես, որքան դեղնած է. քարերը կը հասկանալին նորա ցաւերը, նորա ծանր անարգանքը: Ո՞չ, մի նայիր ինձ վերակ ալզպիսի վշտալի հավեացքալ, դու կը թուլացնես իմ վրձուահասութիւնը և փոխանակ արինի ես արտասուքի: մէջ կը թաթախիմ ինձ:—

ԹԱԳՈՒՀԻՆ: Ո՞ւմ հետ ես խօսում:

ՀԱՄԼԵՏ: Դու այնտեղ ոչինչ չես անսնում:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ոչինչ, բաց ինչ որ կատահսնում եմ:

ՀԱՄԼԵՏ: Եւ ոչինչ չը լսեցիր:—

ԹԱԳՈՒՀԻՆ: Ոչ մի բառ:—

ՀԱՄԼԵՏ: Տես, հազրս, նոյն հագուստով, ինչպէս կենդանի ժամանակը,—հեռանում է: Տես զնում է. զոնիցն է զնում:—

(Ուրուտիշնը գնում է:)

ԹԱԳՈՒՀԻՆ: Այդ բոլորը միան ցնորք է, ուղեղի հւանդութիւն:

ՀԱՄԼԵՏ: Հիւանդութիւն է: Արիւնա անսպէս խաղաղ է հսում, ինչպէս քոնը: Խօսքերս ցնորք չեն, կամիս կրկնեմ, փորձիր ինձ:— Աւանեղ իմ խելագարութիւնը չէ որ խօսումէ, այլ քո վարմունքը:— Խոստովանիր դու երկնքի առաջ, զղացիր քո կատարած մեղքերը և աղօթքով պապակառում փրկիր քեզ: բայց ներիր իմ վարմունքը, որովհետեւ մեր վասթար և ապականեալ ժամանակին՝ ինքն առաքինութիւնը պարաւոր է ներողութիւն ինղերել լանցանքից, որ սա թող տաէ նորան բարի գործ կատարել:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ո՞չ, Համբէտ, դու սիրս պատառեցիր:

ՀԱՄԼԵՏ: Զգիր նորա վաս մասը և մաքուր մնացիր միւս մասով: Մնաս բարեւ: Թո՞ղ չը լինի էլ քո մէջ առաքինութիւնը, գոնեաչ ձեացիր առաքինի: Սովորութիւնը դեի պէս ոչնչացնում է մեր հոգւու մէջ չարն ու բարին որոշելու ընդունակութիւնը: Պահպանիր քեզ ալս գիշերը, միւս գիշերը քեզ գիւրին կը լինի զսպողութիւնը, որովհետեւ սովորութիւնը փոփոխաւմ է մարդու բնաւորութիւնը, չաղթում է սատանալին և ջնջում է թշնամուն: Կրկին մնաս բարեւ նիթէ դու կամիս օրհնեալ լինել օլհնիր ինձ: (Պէտք Պօջնիուսը:) Խղճում եմ քեզ Պօլօնիուս. երկինքը կամեցաւ որ ես քեզ պատմեմ և ոչ թէ դու ինձ: Ես կը տանեմ սորան և սորա մահուան պատասխանատուն ինքս կը լինեմ: Բարի գիշերը Ես պէտքէ խիստ լինեմ, որ բարի կարողանամ լինել: Սա չարագործութեան սկիզբն է, վերջը աւելի սարսափելի կը լինի: Երկու բառ:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ես ինչ պէտքէ անեմ:

ՀԱՄԼԵՏ: Երբէք չ'ասես այն ինչ որ քեզ ասացի: Թո՞ղ այդ քուուած թափաւորը իւր անկողնի մէջ քեզ քաշէ, խաղակ քո շրթունքների հետ. թո՞ղ իւր կեղսու համբովներով և գգուանքներով սպիտէ քեզ խոստովանել՝ որ ես խելագար չեմ, այլ ձևանում եմ այնպէս:— Վատ

Հէր լինի աւղակէս ասել նորան: Ի՞նչպէս կարելի է որ քեզ նման գեղեցիկ, խոհեմ, պարկեշտ և խելացի թագուհին՝ ծածկէր նորանից իւրեան համար մեծ նշանակութիւն ունեցող մի հանդամանք: Խելքի և խորհրդին հակառակ, դու բաց արա կառւրի վանդակը, թնդ գուրս նորա միջից թուչունները, փորձի համար ինքո մտիր վանդակը, բարձրացիր կտուրը կապիկի պէս, որ այնտեղից ընկնելով պարանոցդ ջախջախես:

ԹԱԳՈՒՀԻ: Հաւատամ ինձ, որ մի բառ արտասանել չեմ կարող:
ՀԱՄԼԵՑ: Դու գիտես անտարակոց՝ որ պէտքէ գնամ Անդլիա:
ԹԱԳՈՒՀԻ: Ես մոռացել էի, — այս, աւղակէս է վճռուած:

ՀԱՄԼԵՑ: Հրամանը պատրաստ է և կնքուած, լանձնած է իմ դասընկերներին: Ես նոցա հաւատում եմ ինչպէս սատանաներին: Նոքա պէտքէ իմ հանապարհը մաքրեն, իբրև կարապետներ, պէտքէ տանեն ինձ դէպի մատնութեան որոգաւթը. թնդ տանեն: Ծիծաղելի կը լինի, եթէ նոցա՝ իւրեանց զէնքերով ինձ համար փորած փուերի մէջ ես մի կանգուն աւելի խորը թաղեմ: Ո՞հ, որքան բերկրավի է լինում, երբ հանապարհ վերապ երկու խորամանկ զօրութիւնք միմեանց հետ մաքառում են: Այժմ այս պարոնին պէտքէ շալակեմ և միւս սենեակը տանեմ: Մնաս բարե մաքիկ, բարի զիշեր: Ո՞րքան խաղաղ, ծածկամիտ և խեղճ է հիմազ ասս խորհրդականը, որ իւր ողջ կեանքում ամենապարհ շաղակրատ էր: Գնանք, հարկաւոր է քեզ հետ ես հաշիս մերջացնել: Գիշեր բարի, մաքիկ: (Գնում էն զանուան կողմէց: Հաճէոք դասնուած է Պօլօնիուսին:)

ՎԱՐԱԳՈՅԻ:

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

(ՍԵՆԵԱԿ ԱՄԱՐՄՆՈՅԻՄ)

ՏԵՍԻԼ Ա.

ԹԱԳՈՒՀԻՐ, ԹԱԳՈՒՀԻ, ՐՈԶԵՆԿՐԱՆՑ և ԳԻԼԴԵՆՇԵՐԻՆ.

ԹԱԳՈՒՀԻՐ, Քո խորը հոգոցները անշուշտ գաղտնի պատճառ պէտք է ունենան: Աւելորդ չէր լինի, եթէ մենք ևս գիտենավնք: Ո՞ւր է որդիդ:

ԹԱԳՈՒՀԻ: (Բռնէներուց և Գլուխչշուրէն:) Գնացէք առժամանակ: Ո՞հ, իմ բարեկամ, ինչ եմ տեսել ես այս զիշեր:

ԹԱԳՈՒՀԻՐ, Ի՞նչ կաց Հերտուողա. Համլէտը ինչ է անում:

ԹԱԳՈՒՀԻ: Կատաղում է ինչպէս ծովի փոթորիկ: Վալքենի կատաղութեան ժամանակ նա վարագորի լետեից լսեց մի շոյ և «մուկը, մուկը» ձանելով, նա հանեց իւր սուրը և չը տեսնելով ծերուկին, սպանեց նորան:

ԹԱԳՈՒՀԻՐ, Ո՞հ, ինչ սարսափելի գործ: Միենանը ինձ կարող էր պատահել, եթէ ես այնտեղ գտնվէի: Նորա աղատ մնալը, մեզ և ըոլորեցունց համար վասնգաւոր է: Ի՞նչպէս մենք բացատրմէք ազդարինանեղ գործը: Մեղ նմանապէս կը մեղաղըն, որ մենք նախատես չեղանք և խելագարին չը սանձեցինք և չը հեռացընք մարդկանցից—հասարակութիւնից: Մեր սէրը զէպի Համլէտ՝ կուրացրեց մեղ, ես չը կամեցատ հասկանալ, ինչ որ հարկաւորն էր՝ և դարչելի հիւանդութիւնը թագցրի ուրիշների հաջեացքից, մինչև որ նա միանդամակն զարգացաւ: Ո՞ւր գնաց նա:

ԹԱԳՈՒՀԻՆ: Ուր որ տարաւ սպանուածին: Աս անգամ նորա խելազարութիւնը պարզ երևցաւ, ինչպէս ոսկին կոպիտ հանքի մէջ: Նա իւր կատարածի վերակ դառն արտասուք է թափում:

ԹԱԳՈՒՀԻՆ: Գնանք, Հերարուղա. առաջ քան արեգակը կը ծագէ լեռների գագաթների վերաւ, նա նաւի վերաւ կը լինի: ՄԵՆՔ պէտքէ մեր բոլոր իշխանութիւնը և հնարագիտութիւնը գործ դնենք, որ նորա վաս գործը մի կերպ ծածկենք և մեղմացնենք: Է՛տ, Գիլլէն շտերն. (Պողէննոցն և Գիլլէննոցն ճառաւ էն:) Բարեկամներ, վեր առեք ձեզ մէկին օդնական և շտապեցեք: Խելագարութեան ըսպէին Համլէտը սպանեց Պոլոնիուսին և դուրս տարաւ իւր մօդ սենեակից: Գաեք, իշխանին խօսեցէք հետը քաղցրութեամբ, իսկ զիակը տարէք մատուռը: (Պողէննոցն և Գիլլէննոցն ճառաւ էն:) Գնանք Հերարուղա, գնանք: Հրաւիրենք մեր իմաստուն բարեկամներին, տասնենք նոցա մեր զիտաւորութիւնը՝ թէ ինչ կամինք անելու: Արդէն չարախօսութեան սուր ձանը թող անցնէ մեր մօտից առանց մեզ վեսելու: գնանք: Հոգիս երկիւղով և շփոթմունքներով լի է:



ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(ՄԻ ԱՅԼ ՍԵՆԵԱԿ ԱՄԱՌԱՆՑՈՒՄ)

ՏԵՍԻԼ Ա.

ՀԱՄԼԵՏ (Տպառաւ է:) Յետու ԲՈԶԵՆԿՐԱՆՅ և ԳԻԼԳԵՆՇԵՑՔԻՆ

ՀԱՄԼԵՏ: Ինչպէս հարկն էր թաղցրի:

ԲՈԶԵՆԿ. և ԳԻԼԳ. (Բողոք բառու:) Իշխան Համլէտ, իշխան Համլէտ:

ՀԱՄԼԵՏ: Հանդարս, ինչ աղմուկ է, ով է կանչում Համլէտին: Ահա նոքա գալիս են: (Պողէննոցն և Գիլլէննոցն ճառաւ էն:)

ԲՈԶԵՆԿՐԱՆՅ: Ի՞նչ արկիք զին, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Յանձնեցի հողին, որին նա աղպական էր:

ԲՈԶԵՆԿՐԱՆՅ: Ասացէք որտեղ է, որ մենք կարողանանք նորան մատուռը տանել:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ, ո՛չ, մի հաւատաք: —

ԲՈԶԵՆԿՐԱՆՅ: Ի՞նչին չը հաւատանք: —

ՀԱՄԼԵՏ: Որ ես կարողանալով պահպանել ձեր գաղտնիքը, չեմ կարող պահպանել իմու բացի այդ՝ ինչ կարող է պատասխանել թագաւորի որդին՝ սպոնդի հարցին:

ԲՈԶԵՆԿՐԱՆՅ: Դուք ինձ սպոնդ էք համարում:

ՀԱՄԼԵՏ: Այն, սպոնդ՝ որ ծծումէ թագաւորի ողորմածութիւնը, պարզեները և հրամանները, Բաց աղպակիս արբանեակները պիտանացու են թագաւորի համար վերջը, նա ինչպէս կապիկը՝ լաւ պատառը իւր թշերի մէջ պահում է, որ վերջը կլանէ նորանց: — Ձեր սպոնդը երբ նորան հարկաւոր լինի, — նա կը սեղմէ ձեզ և զուք կը կին կը չորանաք: —

ԲՈԶԵՆԿՐԱՆՅ: Ես ձեզ չեմ հասկանում:

ՀԱՄԼԵՏ: Շատ ուրախ եմ, սուր իսոսքը քնում է վիմարի ա-
կանջի մէջ:

ՐՈԶԵՆԿՐԱՆՅ: Դուք պէտք է ասէք մեզ, իշխան, թէ ուր է
դին՝ և պէտքէ զաք մեղ հետ իմիասին նորին միծութեան մօտ:

ՀԱՄԼԵՏ: Դին թագաւորի մօտ է, իսկ թագաւորը նորա մօտ
է. թագաւորը մի բան է...

ՐՈԶԵՆԿՐԱՆՅ: Մի բան...

ՀԱՄԼԵՏ: Կամ ոչինչ է, գնանք նորա մօտ: (Գնուած էն:)



ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

(ԱՅԻ ՍԵՆԵԱԿ ԱՄԱՌԱՆՅՈՒՄ)

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԹԱԳԱԼԻՈՐ, ԹԱԳՈՒՀԻ (Տպնուած էն պաշտամանների հետո:) Ցեսու ՐՈԶԵՆ-

ԿՐԱՆՅ, ՀԱՄԼԵՏ և ԳԻԼԴԵՆՇԵՐԻՆ:

ԹԱԳԱԼԻՈՐ: Ես հրամակեցի որ գտնեն իշխանին և զին: Նորա
աղասութիւնը երկիւղալի է: Օրինաց խստութեամբ ես նորա հետ
վարվել չեմ կարող: Յիմար ամբոխը սիրում է նորան, իսկ ամբոխը
սիրում է աչքերով և ոչ թէ մտածելով: աբովիսի զիպուածում մար-
դիկ կը տեսնեն միայն պատիժը, բայց լանցանքը չեն տեսնիլ: Որպէս
զի խաղաղ կերպիւ անցնէ Համլէտի ճանապահնորդութիւնը ժողովրդի
աչքում, պէտք է ցոյց տալ որ դա վաղուց կարացած մեր վճռահա-
տութիւնն է: Ծալրահեղ հիւանդութիւնները բժշկութեան ծալրահեղ
միջոցներ կը պահանջեն: (Տպնուած է Բողէնկուանց:) Հէ ինչ կա՞:

ՐՈԶԵՆԿՐԱՆՅ: Մենք չը կարողացանք իմանալ թէ՝ որտեղ է
թաքցրել մեռեալին:

ԹԱԳԱԼԻՈՐ: Իսկ ինքն ուր է:—

ՐՈԶԵՆԿՐԱՆՅ: Պահապանների հսկողութեան ներքոյ այս հարևան
սենեակումն է՝ և ձեր հրամանին է սպասում:

ԹԱԳԱԼԻՈՐ: Բերէք նորան ափսանդ:

ՐՈԶԵՆԿՐԱՆՅ: Դիլդմնշերն, կանչեցեք իշխանին: (Համլէտ և
Գիլտենշտերն Տպնուած էն:)

ԹԱԳԱԼԻՈՐ: Համլէտ, ուր է Պօլօնիուսը:

ՀԱՄԼԵՏ: Ընթրիքի վերակ է:

ԹԱԳԱԼԻՈՐ: Ի՞նչպէս թէ ընթրիքի վերակ է:

ՀԱՄԼԵՏ: Միան թէ նա չէ ուսում, այլ նորան են ուսում:
Համադամ խորտիկներ վաճելող որդերի հասարակութիւնը նոր է նո-

րան ձեռք դարձում: Որպէս բոլոր ուստիվքների միանման թաղաւորն է: Զանազան անասուններին մենք կերակրում ենք, որ լեսոյ մեղ կերակրենք. իսկ մեղ՝ կերակրում ենք որդերի համար:—Պարարտ թագաւորը և նիհար աղքատը՝ միմնուն սեղանի կերակուրներ են. դորանով ամեն բան վերջանում է:

ԹԱԳԱՒԻՈՐ: Աւազ:

ՀԱՄԼԵՏ: Կարելի է ձուկ որսալ այն ճճիով, որ կերել է թագաւորին և ուստեղ այն ձուկը, որ կերել է նորն ճիճուխն:

ԹԱԳԱՒԻՈՐ: Ի՞նչ ես ուզում ասել դորանով:

ՀԱՄԼԵՏ: Ես կամննում եմ ցոյց տալ ձեզ թէ՝ ինչպէս կարող է թագաւորը վեհափառորէն ճեմնել աղքատի աղիքների մէջ:

ԹԱԳԱՒԻՈՐ: Ո՞ւր է Փօլոնիուսը:

ՀԱՄԼԵՏ: Երկնքումն է: Ուզարկեցէք ստուգելու, եթէ ձեր պահապանը նորան անտեղ չի գտնիլ, դուք լնքներդ մի աշլ տեղ որոնեցէք նորան: Բաց ես հաւասարնում ձեզ, որ եթէ դուք մի ամսուաց միջոցում նորան չը գտնէք, ձեր քիթը կը հստոտի նորան, երբ բարձրանալիս կը լինէք նախասնեակի սանդուղտներով:

ԹԱԳԱՒԻՈՐ: (Պալատականներին:) Գնացէք, գտէք նորան:

ՀԱՄԼԵՏ: Չի փախչիլ, կը սպասէ ձեր գնալուն:

ԹԱԳԱՒԻՈՐ: Փո հանգստութիւնը և ապահովութիւնը, որու մասին մենք միշտ հոգում ենք՝ և քո կատարած գործը, որու մասին մենք շատ վշտանում ենք, պահանջում է որ առանց լիտաճգութեան հեռանաս ակտաղից. ուստի պատրաստ եղիր: Նաւը ընունաւուած է, բամին լաջողակ է և ճանապարհորդակիցները քեզ սպասում են: Անգլիա գնալուդ համար ամենայն բան պատրաստ է:

ՀԱՄԼԵՏ: Անգլիա:

ԹԱԳԱՒԻՈՐ: Այն, Համելէտ:

ՀԱՄԼԵՏ: Բարի:

ԹԱԳՈՒՆԴԻ: Ինքդ համոզուած ես որ մեր դիտաւորութիւնները բարի են:

ՀԱՄԼԵՏ: Ես Քերովթէին եմ տեսնում, որ տեսնում է Զեր բարի

դիտաւորութիւնները: Ի՞նչ փոքի, կ'երթանք Անգլիա, միաք բարե սիրելի մայրիկու:

ԹԱԳԱՒԻՈՐ: Քեզ սիրող հայրդ, Համելէտ:

ՀԱՄԼԵՏ: Մայր իմ. հայր և մայր, ամուսին և կին.— Ամուսին և կին՝ և երկոքեան եղիցին ի մի մարմին. ուրեմն մնաք բարե մայր իմ. երթանք Անգլիա:—(Գնուած է:)

ԹԱԳԱՒԻՈՐ: Շտապեցէք նորա լեռեից. աշխատեցէք շուտով նորան նաւի վերաէ նստացնել առանց լետաճգութեան: Այս զիշեր նա պէտքէ ճանապարհ ընկնի, ամեն բան պատրաստ է: Խնդրեմ շտապեցէք: (Պազէնկունց և Գլուխնշուէրն գնուած էն:) Եւ դու, Անգլիա, դու կը գնահատես մեր բարեկամութիւնը, քանի որ մեր ամենակարողութիւնը սովորեցէլ է քեզ այն գնահատելու, քանի որ դեռ ցաւում են դանիակի սրերի քեզ տուած վէրքերը և դու չես արհամարհի մեր թագաւորական հրամանը, որտեղ պարզօրէն գրած է, «սպանել Համելէտին, սպանել առանց լիտաճգութեան»: Մեռցրն նորան, Անգլիա: Ի՞նչպէս մահացու թոքնը մաշտում է ինձ: Դու կը բժշկես ինձ: Մինչև որ չը իմանամ թէ այդ կատարուած է, ոչինչ բան ինձ չի ուրախացնիլ: (Գնուած է:)



ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՈՐԴ

(ԴԱՇՏ ԴԱՆԻԱՅՈՒՄ)

ՏԵՍԻԼ Ա.

ՖՈՐՏԵՆԲՐԱՍԸ (Տառամաշատ է պարզ և հոգած) ՅԵՊԱՅ. ՀԱՄԼԵՏ, ԲՈԶԵՆԿՐԱՆՅ և
ԳԻԼԴԵՆՇԵՏԵՐՆ:

ՖՈՐՏԵՆԲՐԱՍ: Գնդապետ, բայսնեցէք Դանիալի թաղաւորին իմ
ողջոնը և ասացէք որ Ֆօրտենբրասը կամենում է ուղեցոցներ ու-
նենալ, որ անցնէ Դանիալի երկրով. Դուք գիտէք արդէն որտեղ
կարող էք մեղ գտնել. Եթէ նորին մեծութիւնը կամենում է խօսել
ինձ հետ՝ ես ինքս անձամբ կը մատուցանեմ իմ բարզանքը. Այդպէս
բայսնեցէք նորան:

ԳԻԼԴԱՊԵՏ: Բոլորը կը կատարեմ:

ՖՈՐՏԵՆԲՐԱԸ: Յառաջ, Տէր ընդ մեզ: (Գնաւամ է պարզ հոգած)

ՀԱՄԼԵՏ: ԲՈԶԵՆԿՐԱՆՅ և ԳԻԼԴԵՆՇԵՏԵՐՆ (Ե այլ Տառամաշատ է):

ՀԱՄԼԵՏ: Գնդապետ, այս ինչ զօրքեր հն:

ԳԻԼԴԱՊԵՏ: Նորվեգացւոց գնդերը:

ՀԱՄԼԵՏ: Կարող եմ իմանալ թէ ուր են գնում նոքա:

ԳԻԼԴԱՊԵՏ: Լեհացւոց դէմ:

ՀԱՄԼԵՏ: Ո՞գ է նոցա զլինաւոր զօրապետը:

ԳԻԼԴԱՊԵՏ: Նորվեգիալի ծերուժի կակսեր եղբօր որդին, Ֆօր-
տենբրասը:

ՀԱՄԼԵՏ: Բոլոր Լեհաստանն է նուաճման նպաստակը թէ՝ միան
սահմանակից տեղերը:

ԳԻԼԴԱՊԵՏ: Ձեզ ասեմ ճշմարիտը՝ առանց աւելորդաբանու-
թեան, մենք կամենում ենք նուաճել անպիսի մի անկիւն, որ բացի
իւր անութը մեղ ոչինչ չի տալ, երեք ոսկի չ'արժէ նա՝ և ոչինչ հա-
սոցթ չի տալ ոչ մեղ՝ և ոչ Լեհացւոց:

ՀԱՄԼԵՏ: Ուրեմն Լեհաստանը նորան չի էլ պաշտպանիլ:

ԳԻԼԴԱՊԵՏ: Ինչու չէ, այն տեղն արդէն զօրքերով պատել է նա:

ՀԱՄԼԵՏ: Երկու հաղար զինուոր՝ և քսան հաղար ոսկի չեն կա-

րողանում վճռել այդպիսի մի չնչին վէճը. Այս խաղաղութեան և
բարօրութեան խոցը, որ այրում է ի ներքուստ, արտաքուստ
մահուան ոչ մի նշան չէ ցոց տալիս. Շատ չնորհակալ եմ:
ԳՆԴԱՊԵՏ: Աստուած ձեզ պահապան:

ՐՈԶԵՆԿՐԱՆՅ: Խշան, կամիք շարունակել ճանապարհոր-
դութիւնը:

ՀԱՄԼԵՏ: Դուք գնացէք, ես իսկոն կը համեմ ձեզ. (Պաշտե-
յանց և մեռները գնուած չեն) Ինչպէս ամենայն բան ինձ մեղադրում է և
զրգուում իմ վրէժինդրութիւնս: Ի՞նչ է մարդս, եթէ նորա զիսաւոր
բարիքը և պարապմունքները միախն ուտել, խմել ու քնելն է: Ա-
նասուն է և ոչ աւելի: Մեզ այսպիսի ընդարձակ իմաստութեամբ և
մտաւոր զօրութեամբ ստեղծողը, որով մինք անցեալն և ապագան
գուշակում ենք, չէ պարզեցել մեղ այդ ընդունակութիւնները, որ սո-
քա անօգոստ բորբոսնեն մեր հոգւոց մէջ: Զը գիտեմ անասնական
մուացում է թէ վախկու մտածութիւնը վախճանի մասին.—մտածու-
թիւն որուերեք մասն վախկուութիւն է, մէկը միան խմաստութիւն.—
ստիպում է ինձ մինչև ամօր կրկնել.—կատարիր և կատարիր այն
որու կատարելու համար ես ունեմ առիթ, ցանկութիւն, զօրութիւն և
միջոց:—Աշխարհին մեծամեծ օրինակները առաջիս կանգնած են: Օ-
րինակ՝ այս բազմաթիւ և ամենակարող զօրքը և նոցա երիտասարդ,
քնքոց և ծազկափթիթ զօրավարը: Ողերուած Աստուածալին փա-
ռասիրութեամբ, նա ծիծազում է անկատ պատերազմի հետեանքի
վերաց և ենթարկում է կեանքը մահուած և երկիւղի մի ձուի կճեպի
համար: Խակական մեծ մարդը նա է, որ առանց մեծ նպատակի ոտքի
չէ կանգնում, բաց միենան ժամանակ պատրաստ է կոռւել և մի
շնորհ համար, երբ զորանով շոշափած է նորա պատիւը: Խսկ ես,
սպանեցին հօրս, պղծեցին մօրս, արիւնս և միտքս թելադրուած են.—
այս ամենը քնած է իմ մէջ և չէ ինձ արթնացնում: Ամօթով նաքում
եմ, որ քսան հաղար զօրք զէպի մաս են զիմում, փառքի ցնորքից
մղուած, քնում են զերեղմաններում, ինչպէս բանակում: Եւ ինչու
համար,—մի կտոր հողի համար, ուր՝ տեղ չկատ պատերազմելու և որ
սպանուածների զերեղմանատան համար բաւական չէ: Ո՞հ, ալպուհետ
մուաղղութիւններս կամ արխանեղ կը լինեն, կամ ոչինչ: (Գնաւամէ:)

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(ԷԼՉԻՆԻՕՐ, ՍԵՆԵԱԿ ՊԱԼԱՏՈՒՄ:)

ՏԵՍԻԼ Ը.

ԹԱԳՈՒՀԻՒ, ՀՕՐԱՑԻ և ՊԱԼԱՏՈՒՄ: (ՄՊԻՆՆԵՄ Է:)

ԹԱԳՈՒՀԻՒ: Ես չեմ կամնում խօսել նորա հետ:

ՀՕՐԱՑԻ: Անպէս արտասուելով և վրդոված խնդրում է որ անկարելի է չը խղճալ նորան:

ԹԱԳՈՒՀԻՒ: Ի՞նչ է նորա կամեցածը:

ՊԱԼԱՏՈՒՄ: Նա իւր հօր մասին է խօսում: Լսել է որ աշխարհը խորամանկ է: Լաց է լինում, ծեծում է իւր կուրծքը, ոչինչ բանից վրդովում է, խօսեցածի կէսը անխման է, խօսքերի մէջ կազ չը կաէ, անպէս որ լսողներին առիթ է տալիս զանազան եղբակացութիւններ անելու: Նորա ձեռքերի և զլիսի շարժուածքը ակամակ սախում էն ինձ կարծել, որ նոցա մէջ կաէ մի անորոշ, մի սարսափելի բան:

ՀՕՐԱՑԻ: Վաստ չէր լինի, եթէ դուք հետը խօսէիք, որովհետեւ չարամիտ մարդկանց դա խախապէս կարող է առիթ տալ երկիւզալի եղբակացութիւններ անելու:

ԹԱԳՈՒՀԻՒ: Թողէք զակ: (ՀՅԱԳԻՆ ԳՆՈՒՄ Է:) Հոգիս ցաւում է,— աղպէս է մեղաց յատկութիւնը.—ամեն բան ընդունում է իրին մի ձախորդութիւն: Մեղքը անքան կասկածոս է, որ գաւաճանութիւնից կասկածելով, ինքն իրան է գաւաճանում: (Օֆէլոն լելու գործուածուած է, Հօրոցին հէպեռում է նորոն:)

ՕՖԵԼՈՆ: Ո՞ւր է Դանիակի գեղեցիկ թագուհին:

ԹԱԳՈՒՀԻՒ: Ի՞նչ է պատահել քիզ, Օֆէլիա:

ՕՖԵԼՈՆ: (Արքում է):

Ճանաչում էք հողւոս սիրելոցն

Ճերմակ վետրոց մէջ ուժեղ, դիւցազուն.

Նա էր արփ և մի քաջ սրոփ տէր:

ԹԱԳՈՒՀԻՒ: Ախ, խեղա Օֆէլիա, այդ ինչ ես երգում:

ՕՖԵԼՈՆ: Ես ինչ եմ երգում, հապա լսեցէք իմ երգը: (Արքում է:)

Մեռաւ, մեռաւ ո՞հ իմ հալը,

Մեռաւ և արդէն թաղուեցաւ.

Ծաղիկ ծածկեց իւր տապանը,

Շիրիմ վակեց դամբարանը,

ԹԱԳՈՒՀԻՒ: Անդին Օֆէլիա:

ՕՖԵԼՈՆ: Ոչ, ոչ. լսեցէք իմ երգին: (Արքում է, ճպնում է թագումանը):

Նա ննջեց 'ի քուն հանգստեան

Եւ արտասունքներ ինչպէս եղեամ՝

Զովացրին նրան:

ԹԱԳՈՒՀԻՒ: Ո՞հ, նակիր սիրելիս:

ԹԱԳՈՒՀԻՈՐ: Ի՞նչպէս է քո առողջութիւնը, Օֆէլիա:

ՕՖԵԼՈՆ: Լաւ է, Աստուած ձեղ վարձատրէ: Ասում են որ բուն՝ հացթուխի աղջիկ է եղել: Աստուած իմ, մենք գիտենք թէ մենք ինչ ենք, բայց չը գիտենք թէ ինչ կը լինենք: Աստուած, ձեր սեղանին լիութիւն տայ:

ԹԱԳՈՒՀԻՈՐ: Խեղճ, միտքը հօր վերակ է:

ՕՖԵԼՈՆ: Խնդրեմ չը խօսենք այդ մասին: Խակ եթէ հարցնեն այդ ինչ է նշանակում, ապապէս պատասխանեցէք: (Արքում է:)

Սիրելիս, պայծառ առաւօտ,

Գալապազի եկել եմ,

Եղիր զու ուրախ Վաղենալին

Նակիր լուսանցքի տակին:

Խակ նա հագնուեցաւ շուտով,

Փակեց գաները մեղմիկ.

Խորան լաւէտ սիրել անել նա երգուեց.

Բայց լսող խախեց, թողեց:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Բաւական է 0Փէլիա:

ՕՖԵԼԻԱ: Ճշմարիտ՝ երգելու հարկ չը կաւ, ևս իսկոն կը վեր-
ջացնեմ: (Արդում է:)

Մի հաւատան դու նորան.

Սիրականդ վաս աճգութ է,
կը ծիծաղէ քեզ վերաց:
Տարփածուին օրիորդն ասաց,
Արդեօք մոռացար քո երդմանց.
Զի՞ հաւատար ես երգէք,
Որ ապագէս ինձ մոռանաս:
Տարփածուն ծաղրով ասաց,
իմ երդմունքը չեմ մոռացած:
Միթէ աղջիկը չը գիտէ,
Որ հանաք, ևս հանաք էի աճում:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Վաղմաց ալդ դրութեան մէջ է:

ՕՖԵԼԻԱ: Յոց ունիմ որ ամեն բան լաւ կը լինի: Հարկաւոր է
համբերութիւն ունենալ: Միշտ ուղում եմ լաց լինել, երբ մասածում
եմ որ նորան դրել են պաղ զետնի մէջ: Եղբայրս կ'իմանաց բոլորը՝
և ես չնորհակալ եմ ձեր բարի խորհրդի համար: Բերէք ինձ իմ
կառքս, բարի գիշեր զշառվիք, բարի գիշեր: (Փախչում է:)

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Գնան նորա իտեկից, Հօրացիօ, պահպանեցէք նորան
ինդրում: (Հօրացիօն գնում է:) Ո՛հ, դա սրափ անտանելի վշտի թոցն է,
բոլորը հօր մահուան պատճառովն է: Ո՛հ, Հերտրուդա, նկատիր որ
դժբաղդութիւնը գալիս է ոչ թէ առանձնապէս, ալ մէկը միւսի լե-
տեկից: Առաջ նորա հօր մահը, իտոյ քո որդին, իւր աքսորանքի
ճշմարիտ պատճառութը: Ժողովուրդը խուսկութեան մէջ է և երկիւղ է
սպառնում բարի Պօլօնիուսի մահուան պատճառաւ, որին մէնք անդու-
շաբար ծածուկ թողեցինք: Խղճուկ 0Փէլիան խելագարութեան մէջ
է, վերջապէս ամենից երկիւղալին այն է՝ որ Լաէրտը դաղանի վե-
րապարձել է Փրանսիակից, սննդում է իւր դարմացքը և պատապա-
րում է իրան ամպերի մէջ: Աղքատ չէ, նա և լուսեաներով, որոնք

լցնում են նորա ականջները թունաւոր պատմութիւններով, նորա հօր
մահուան մասին և նա՝ գործին անտեղեակ՝ չի դլանալ մեղադրել մեզ:
Այս ամենը, սիրելի Հերտրուդա, մահացու մեղքեր են տալիս ինձ:
(Արժուի բնից դուրս:)

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Աստուած իմ, ալս ինչ աղմուկ է դուրսը:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Է՛տ, ուր են պահապանները. ասացէք որ դոները
պահպանեն: (Մահում է շրապով պալապականը:)
Ի՞նչ է պասաւել:

ՊԱԼԱՏԱԿՈՒՅԻՆ: Ազատեցէք ձեղ՝ արքավ, ինչպէս զարհուրելի
ովկիանոսը պատառելով եղերը, անպէս սրնթաց չէ կլանում դաշ-
տերը, ինչպէս երիտասարդ Լաէրտը խուռն ամբոխի հետ բաղթահա-
րում է ձեր ծառաներին: Ամբոխը նորան թագաւոր է անուանում,
կարծես աշխարհքը ալսօր է ստեղծուած. հութեան սովորութիւննե-
րը,—բառերի ացդ պաշտպան սիւները—մոռացվում են: Գուռում են
«ընտրում ենք Լաէրտին, Լաէրտ եղիր թագաւոր»: Գլխարկներ, ձեռ-
քեր և աղաղակներ մինչեւ երկինք են բարձրանում:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Ինչպէս ուրախ հաչում են, սուս հետքը տեսնելով:
Ո՛հ, Դանիակի վասթար շներ, շեղվեցաք ճանապարհից դեպի հակա-
ռակ կողմը:— (Արժուի սուսպիսանում է:)

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Գուռը կոտրել են:

(Մահում է պնդուարուած Լաէրտը Դանիակաց հետ:)

ԼԱԷՐՏԸ: (Բեմի յետեկից:) Ո՞ւր է թագաւորը: Բարեկամներ, դուք
մնացէք զրան մօտ:

ԳԱՆԻՒՅԻՔԻՔ: (Բեմի դուրս:) Ներս թողէք մեզ:

ԼԱԷՐՏԸ: Ո՛չ, խնդրում եմ իմ կողմանէ ապահով եղէք:

ԳԱՆԻՒՅԻՔԻՔ: Լաւ, լաւ, կ'երթանք: (Արժու գնում է:)

ԼԱԷՐՏԸ: Շնորհակալ եմ, պարոններ:—Գոները պահպանեցէք:
Ատելի թագաւոր, տուր ինձ իմ հօրու:—

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Հանդարասուիր, սիրելի Լաէրտ:

ԼԱԷՐՏԸ: Արեանս հանդարասած իւրաքանչիւր կաթիլը ինձ ապօ-
րենի զաւակ կը ցոց տայ, ամօթով կը ծածկէ հօրս պատիւը, մօրս
հակատին պոռնկութեան կնիք կը դրոշմէ:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Ի՞նչն է դրդում քեզ, Լաէրտ, դէպի աղդպիսի սարսափելի ապստամբութիւն: Թող նորան, Հերտուղա, մի վախինալ իմ անձին համար, թագաւորը պատապարուած է անպիսի սրբութեամբ, որ ոչ մի դաւաճանութիւն թուլ չի տալ կատարելու իւր սև մտադրութիւնը: Ասա, Լաէրտ, ինչն է քեզ կրակում: Մի իսանդարիք Հերտուղա: Խօսիր Լաէրտ:

ԼԱԷՐՏ: Ո՞ւր է հայրս: —

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Նորան սպանել են:

ԹԱԳՈՒԽԻՅԻ: Բայց սա չէ սպանողը:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Թող հարցմունքներ տակ՝ որքան կը ցանկաչ:

ԼԱԷՐՏ: Ի՞նչ պատճառաւ նորան սպանեցին, Ես թուլ չեմ տալ, որ ինձ վիմարացնեն: Թող դժոխքը իջնէ հպատակի հնազանդութիւնը, սեագող սատանան տանէ իմ երդումներս, խղճմտանքը, խոնարհութիւնը, թող անդունքը իջնեն: Կաւիտենական տանջանքի դատապարտութիւնից ես չեմ երկնչիլ: Ես ան դրութեանը հասակ, որ սառնարութեամբ եմ նախում ապա՝ և ան աշխարհին: Ի՞նչ կամի թող լինի, ես միան հօրա վրէժը կուզեմ, ես վրէժխնդրութեան ծառաւ եմ:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Եւ ով է քեզ խանդարողը:

ԼԱԷՐՏ: Միայն իմ կամքը. ամբողջ աշխարհն չէ կարող ինձ խանդարել: Ես կարող եմ վարք միջոցներով մեծամեծ գործեր կատարել:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Լսիր Լաէրտ, դու կամիս իմանալ ինչպէս մեռաւ հայրդ, ասա ինձ. միթէ դու կամիս անխտիր և բարեկամներիդ և թշնամուդ գոհել քո վրէժին:

ԼԱԷՐՏ: Միմիան թշնամուն:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Ուրեմն կամիս ճանաչել նոցա:

ԼԱԷՐՏ: Ո՞հ, բարեկամներիս զիրկս կ'առնեմ և ինչպէս ձկնորս թոշուն՝ արիւնովս կը լազեցնեմ նոցա:

ԹԱԳԱԼԻՈՒՅԻՆ: Ահա, տեսնում եմ որ դու խօսում ես ինչպէս բարի որդի և կատարեալ աղնուական: Իմ անմեղութիւնս՝ և որ ես վշտացայ հօրդ մահուան մասին—ալդ դու ապնպէս պարզ կը տեսնես, ինչպէս արեգական լուս:

ԳԱՆԻԱՑԻՔԻ: (Բէ՛՛՛ ԴՌԱ՛՛՛) Ներս թողէք նորան:

ԼԱԷՐՏ: Սկս ինչ է, ալս ինչ աղմուկ է: (Մակաւ է 0 ժէլիտ իւլուգուռուած և պաշտինան պարագուռուած իւրաքանչունվ և ծաղկիներով:) Ո՞հ, բոց երկնից, չորացրու իմ ուղեղու Զերմ արտասահնք, կուրացրէք աչքերս: Քո խելազարութեան փոխարէն կը վճարեն ինձ անպիսի հաւասար կշռով, որ իմ լցրած բաժակը կը պարպէ: Ո՞հ, գարնան վարդ, կոս գեղեցկութեան, իմ բարի քոց, սիրելի Օֆէլիա: Աստուած իմ, միթէ երիտասարդ կոչսի խելքը անպէս թուլ է, ինչպէս ծերունու կեանքը: Ո՞հ, որքան նուրբ է բնութիւնը սիրոց զգացման մէջ: Նա իւր ընտիր պարզեց, թանկապին խելքը՝ սովագում է զոհել 'ի վշատակ սիրելի անձի:

ՕՖԷԼԻԱ: (Ելքուած է:) Գոց երեսով նորան դրին խոր գելեղման, նոքա ժողովեցան բարձր լերան վերան,

Առատ հոսէին արցունք ջերմահոս լորդահոս, երբ ծերունուն անսանդ թաղեցին:

ԼԱԷՐՏ: Եթէ առողջ դատողութեամբ դու վրէժխնդրութիւն լորդորէիր, ամբան ազգու չէին լինի քո խօսքերը:

ՕՖԷԼԻԱ: Պէտքէ դուք երգէք 'ի գերեզման, 'ի գերեզման կանչեցէք նորան»: Ինչ լարմար է ալս եղանակը երգին: Սա ան կառավարիչն է, որ փախցրեց իւր պարոնի աղջկան:

ԼԱԷՐՏ: Այդ վիմարութիւնը՝ խմասութիւնից նշանաւոր է:

ՕՖԷԼԻԱ: Սա ծաղկի է, 'ի վշատակ անմոռացութեան: Զը մոռանաս իմ ընկեր: Իսկ սա անթառամ է, սա հարազատութիւն է նշանակում:

ԼԱԷՐՏ: Խելազարութեան մէջ խրասում է սէր և հարազատութիւն:

ՕՖԷԼԻԱ: (Բակաւութին:) Ահա ձեզ: (Բակաւուհուն:) Աէ ձեզ օշինդր, դա դառն է, ինչպէս դառն է լինում զլջումը: Ես կամինում էի և վարդեր տալ ձեզ, բայց նոքա բոլորը թառամեցան ան օրից, երբ հայր մեռաւ: Ասում են թէ նա հանդիսա վախճանուեց: (Ելքուած է:)

Նա չի դարնաէ, նա չի դարնաէ.
Նորան կրկին մենք չենք տեսնելու.
Ոհ, նա մեռաւ և թաղեցաւ,
Մենք նորան կրկին ալ չենք տեսնելու,
Հոգմը փշում է լերան վերաջ,
Ուր թաղեցին ծերունուն՝
Երեք նոճի, երեք ցարամի տնկեցին,
Որք լալիս են, որք լալիս են՝ որպէս խմ վշտեր,
Եւ ցաւեր միշտ հեծեն:

ԼԱՅԻՑ: Տիւրութիւնը, վիշտը, չարչարանքը և դժոխքը, բոլորը
նա գեղեցկութեան դարձրեց:

ՕՅԵԼԻՑ: Եւ բոլոր քրիստոնեաց հոգիք: Սա է իմ աղօթքը: Տէր
ընդ մեղ: (Գնուած է պարէւրէ)

ԹԱԳԱՒԻՈՒ: Լաէրտ, ես պէտք է քեզ բացարութիւն տամ.
մի մերժիր իմ իրաւունքը: Գնա և ժողովիր քո իմաստագոյն բարե-
կամներիդ, թող նոքա լսեն և դատեն մեղ: Եթէ նոքա ուղղակի կամ
կողմնակի, ինձ մեղաւոր գտնեն,—քո բաւականութեան համար ևս
կը տամ քեզ իմ թաղաւորութիւնը, թազը կեանքը և ամենալն բան,
ինչ որս իմն է. իսկ եթէ ոչ, —նուիրէ ինձ համբերութիւն և ես քեզ
հետ ի միասին որոնեմ քեզ բաւարարութեան միջոց:

ԼԱՅԻՑ: Թող ազգպէս լինի: Նորա մահուան կերպը, գաղոնի
թաղումը,—ոչ հանդէս, ոչ սուր, ոչ զրահ չեղան նորա ոսկորների
վերակ, ոչինչ սովորական լարգանք և հանդիսականութիւն,—ազդ ամենը
բարձրածան աղաղում է որ ես պէտք է հաշիւ պահանջնեմ:

ԹԱԳԱՒԻՈՒ: Եւ քեզ ազդ կը տան: Թող վրէժինդրութեան սուրդ
հարուածէ մարդասալանին: Գնանք ինձ հետ: (Գնուած են:)



ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

(ԱՅԼ ՍԵՆԵԱԿ ՆՈՅՆ ՏԵՂ.)

ՏԵՍԻԼ Ա.

(ՀՕՐԱՑԻՕ (ՄՊԻՆՈՎ է ՏԱՄԱԿ ՀԵՊ):) ՅԵՄՈՒ ՆԱԽԱՍԻՆԵՐ:

ՀՕՐԱՑԻՕ: Ո՞վ է կամենում ինձ հետ խօսել:

ԾԱՌԱՅՅ: Մի քանի նաւաստիներ, ասում են նամակ ունեն ձեզ
լահճնելու:

ՀՕՐԱՑԻՕ: Թող զան: (Ծառաւ գնուած է:) Զը գիտեմ բովանդակ
աշխարհի մէջ, բացի Համլէտը, ով ինձ բարե կ'ուղարկէ: (ՄՊԻՆՈՎ էն
հասաւողիներ:)

Ա. ՆԱԽԱՍԻ: Ասուուած ձեզ օրհնէ:

ՀՕՐԱՑԻՕ: Եւ ձեղ:

Ա. ՆԱԽԱՍԻ: Եւ կ'օրհնէ եթէ կամի: Ահա ձեղ նամակ Անդ-
ղիս զնացող զեսպանից,—եթէ զուք Հօրացիօն էք, ինչպէս մեղ
ասացին:

ՀՕՐԱՑԻՕ: (Կարտուս է.) «Երբ կարդաս, Հօրացիօ, այս թղթերը,
նաւաստիներին մի կերպ միջոց տուր տեսնել թագաւորին, որու
անուամբ նոքա նամակ ունեն: Հազիւ երկու օր մենք անցրինք
ծովի վերակ,—մեղ վերակ լարձակվեցան ծովալին աւաղակներ: Մեր
նաւը շատ դանդաղ էր և մենք ակամայ պէտքէ քաջութիւն գոր-
ծէինք: Կոռուի ժամանակը ես անցատ աւաղակների նաւի վերակ և
նոքա իսկոն իտ քաշուեցան՝ և ես միան գերի ընկակ: Նոքա ինձ
հետ վարվեցան իրբե աղնիւ բարեկամներ, բայց նոքա լաւ գիտէին
թէ ինչ կ'անեն: Հարկաւոր է նոցա վարձատրել: Աշխատիր ուղար-
կած նամակներա լանձնել թաղաւորին և շտապիր ինձ մօտ, ինչպէս
դու կը փախչէիր մահից: Ես ականջիոդ աճնպիսի խօսքեր կասեմ որ

կը սասանես: Բայց նոքա ամելի թեթև են, քան նոցա պարունակութիւնը: Նաւաստիները քեզ կ'ուղերեն ինձ մօտ: Ռողենկրանց և Գիլդէնշտերն շարունակում են իւրեանց ճանապարհորդութիւնը դէպի Անդրիա: Նոցա մասին ես շատ բան ունեմ քեզ պատմելու: Մնաս բարեւ: Յաւիտեան

ՔՊ Համելտ:

(Նուստադիներն:) Գնանք, դուք կը լանձնէք նամակները և շուտով կ'երթանք միասին նորա մօտ, ով որ ձեզ ուղարկել է: (Գնում էն:)

ՎԱՐԱԳՈՅԲ:

ՀԵՂԱԿԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

(ԱՅ. ՍԵՆԵԸԿ ՆՈՅՆ ՏԵՂ:)

ՏԵՍԻԼ Ա.

ԹԱԳԱՒՈՐ և ԼԱԷՐԾ (ՄՊԻՆԵՐ ԷՆ:) Յետող ՀԱՄԲԱԽԱԲԵՐ:

ԹԱԳԱՒՈՐ: Աէժմ, Լաէրտ, դու ստիպուած ես համաձայնեւ, որ ես մեղաւոր չեմ: Ինձ, իրեւ քո բարեկամի՝ դու պէտք է սեղմես քո կուրծքին: Դու լսեցիր, որ այն անձը, որ սպանեց քո հօրը, սպառնում էր և ինձ,

ԼԱԷՐԾ: Այն, այդ պարզ է: Միմիան ասացէք ինձ, ինչ պատճուաւ դուք չը դադարեցրիք այդ եղունագործութիւնը և նորա առաջը չ'առաք: Զեր գահի մեծութիւնը, բանականութիւնը և ձեր հանդսութիւնը,—վերջապէս ամեն բան՝ ազդպէս էր պահանջում:

ԹԱԳԱՒՈՐ: Երկու լարգելի պատճառաւ, որոնք քեզ չնշին կերեան, բայց ինձ համար շատ նշանաւոր են: Թագուհին, նորա մայրը, նորանով է միացն ապրում: Իսկ ես միացել եմ Հերտուղարի հետ հողով և մարմնով, ինչպէս աստղը փալում է միան իւր շրջանում: Նա է իմ գոյութիւնը: Երկրորդ պատճառն է, որ ամբոխը նորան անսահման սիրում է և նորան մաքրում ամենայն բանցանքներից, շղթաներից նա առաքինութիւն է ստեղծում: Իմ աղեղը շատ թեթև է փոթորկի համար, որ նորան իմ կուրծքը կը ցցէր և ոչ թէ նորա կուրծքը:

ԼԱԷՐԾ: Իսկ ես հօրս կորցրի, քուրս անկուսալի խելագարութեան մէջ է: Քոյրս՝ որու գեղեցկութեան և առաքինութեան ոչ ոք չէր հաւասար: Համբերիր, կը գաւ վրէմինդրութեան ժամը:

ԹԱԳԱՒՈՐ: Բայց դա չը պէտքէ խանգարէ քո հանդսութիւնը: Չը կարծես որ ես անքան թուլ եմ, որ թողնեմ երկիւղը բռնէ և քաշ քաշէ մօրուքս և այդ ես կաստկ համարեմ: Շուտով դու առա-

ւել բան կը լսես: Ես սիրում էի հօրդ, նմանապէս և սիրում եմ ինձ, կը լուսամ որ ասածիցս դու կարող ես եղակացնել: (Մարտ է համբառքներ:) Ի՞նչ նոր բան:

ՀԱՅՐԱԿԱՆԻՒԹԵՐ: Նամակ Համլէտից, Վեհափառ Տէր, մէկը Զերդ մեծութեան, միւսը թագուհուն:

ԹԱԳԱՒԻՈՐ: Համլէտից.—ով բերեց նամակները:

ՀԱՅՐԱԿԱՆԻՒԹԵՐ: Ասում են՝ նաւաստիները: Ես ինքս նոցա չեմ տեսել: Նամակները կլալիքն տուեց ինձ՝ և նա ստացաւ նաւաստիներից:

ԹԱԳԱՒԻՈՐ: Լաէրտ, կը կարգամ, լսիր: (Համլէտի բառներ:) Դու գնա: (Լամբառմ է:) «Մեծ և Ամենակարող Գիտելի լինի ձեզ, որ ես մերկ իջած եմ ձեր տէրութեան սահմաններում: Վաղը ես թովառութիւն կը խողում ձեր թագաւորական աշացը ներկայանալու և ներողութիւն խնդրելու՝ աղաչելով կը պատմեմ ձեզ իմ չանկարծակի և զարմանալի վերադարձիս պատճառը»:

(Համլէտ:)

ԼԱՅԲԸ: Նորա ձեռքը դուք ճանաչում էք:

ԹԱԳԱՒԻՈՐ: Ձեռքը Համլէտինն է: «Մերկ», վետով աւելցրած է «միանակ»: Կարող ես դու, լաէրտ, խորհուրդ տալ ինձ:

ԼԱՅԲԸ: Ես ոչինչ չեմ հասկանում այդ բանից: Բայց թող գալ: Նա հոգուս վերքերը կը բժշկէ: Ես նորա ճակատին՝ նորան մարդասպան կ'անուանեմ:

ԹԱԳԱՒԻՈՐ: Ո՞հ, եթէ ազգպէս է, լաէրտ... բայց արդեօք ազգպէս է. ազգապէս չի էլ լինիլ: Դու կամիս իմ խորհուրդները ընդունել:

ԼԱՅԲԸ: Կամիմ, թագաւոր, եթէ դուք հաշտուել չէք հարկադրիլ:

ԹԱԳԱՒԻՈՐ: Փո անձնական խաղաղութեան համար, վերդառնալով Համլէտը՝ չի կամենալ կրկին զնալ իրան նշանակեալ տեղը: Ես մտածել եմ նորա համար մի խաղ, որ նորան անշուշտ դէպի կորուսը կը տանէ: Նորա մահը ոչինչ դասապարատվիւն չի լարուցանիլ, նորա մալլը անզամ կ'արդարացնէ և պատահմունք կ'անուան է այն:

ԼԱՅԲԸ: Վեհափառու Տէր, ես առաւել գօժարութեամբ կը հետեւեմ ձեր խորհրդին, եթէ դուք այդ գործի համար ինձ միջոց ընտրէք:

ԹԱԳԱՒԻՈՐ: Եւ դու ինքդ կը լինես: Փո ճանապարհորդութեան ժամանակ՝ քեզ շատ էին գովում և առաւել քո մի չնորհքը—որով դու շատ հռչակուած ես: Համլէտը միշտ այդ ժամանակ ներկայ էր գոնվում: Փո ընդունակութիւններից միան մէկն էր շարժում Համլէտի նախանձը:

ԼԱՅԲԸ: Ազդ որն է:

ԹԱԳԱՒԻՈՐ: Նա երիտասարդութեան զլխարկի չնչին ժապաւէնն է, բայց և ամենահարկաւորը: Նքեզ հագուստը նոհնպէս կարևոր է ալսուել երիտասարդին, ինչպէս տաք հազուստը ծերերին, որ տալիս է նոցա տաքութիւն և փառահեղութիւն: Երկու ամիս սորանից առաջ, ալսուել ես մէկ նորմանդացի ազնուական տեսակ, տեսել եմ և ֆրանսիացիներին, որոնք լաւ ձիաւորներ են՝ բայց սա մի հրաշագործ էր: Կարծես նա կպած էր իւր ձլու վերաց: Նոքա երկուու կարծես մի մարմին էին:

ԼԱՅԲԸ: Նա նորմանդացի էր:

ԹԱԳԱՒԻՈՐ: Ազն:

ԼԱՅԲԸ: Դա անպատճառ կամօրն է:

ԹԱԳԱՒԻՈՐ: Ի՞սկ նա է:

ԼԱՅԲԸ: Ես նորան ճանաչում եմ, նա իւր ազգի անդին գործն է:

ԹԱԳԱՒԻՈՐ: Երբ նա պատմում էր քո չնորհքը, թէ ինչպէս դու հնարագիտութեամբ մենամարտում ես, ևս առաւել սրով, նա ասում էր որ դու հրաշքներ ես անում: Նա երգվում էր՝ որ նորա հայրենակից մենամարտողները դուրս գալով քո դէմ՝ կորցնում էին իւրեանց ճարպիկութիւնը և ոչժը: Նորա պատմութիւնը նախանձի թոյն ձգեց Համլէտի սրոտի մէջ, որ անդադար իմադրում էր շուտով քեզ ալսուել վերադարձնել, որպէս զի՞ նա կարողանալ քեզ հետ մնամարտել: Ասածիցս...

ԼԱՅԲԸ: Ձեր ասածից ինչ է հետևում:

ԹԱԳԱԼԻՈՐ: Դուքս հօրը սիրում էիր Լաէրտ. թէ քո վիշտը
միան ձեւ է, կերպարանք է առանց սրտի:

ԼԱԷՐՏ: Ի՞նչ նպատակ ունէ ձեր հարցը:

ԹԱԳԱԼԻՈՐ: Ոչ թէ ան պատճառաւ, որ քո սէրը ինձ կամկա-
ծելի է թւում, այլ գիտեմ, որ սէրը ժամանակի ծնունդ է և ժամա-
նակը օրինակ է և փորձ: Նա սիրու կրակը և կալծը մեղմացնում է,
սիրու բոցի մէջ պատրոզը ալզում է: Ոչ մի բան չափանան պի-
տանացու չէ լինում, զօրութեան առաւելութիւնը կեանքն է ոչըն-
չացնում: Երբ կամենում ես մի բան կատարել, կատարիր քանի որ
ունես կամքիդ համաձայնութիւնը: Կամքը փոխուսական է, նա թու-
լանում է: Հաղար խրատների աղղեցութեան ներքու քնել կարելի է
և մի պատահմունք կամ ուժին հարուած քեզ վայր կը ձգէ, այն
ժամանակ ինչ կը տաէ քեզ՝ քո պատրաստականութիւնը: — Խօսենք
մեր գործի մասին: Համլէտը վերադարնում է: Ինչ կանես դու՝ որ ա-
պացուցես թէ զու գործով ես հօրդ զաւակը և ոչ թէ խօսքով:

ԼԱԷՐՏ: Ես նորան կը խեղզեմ և՛ եկեղեցու մէջ:

ԹԱԳԱԼԻՈՐ: Յատնի բան է, ոչ մի տեղ մարդասպանին չեն կա-
րող պաշտպանել. վրէժինդրութիւնը սահման չունի: Բայց դորա հա-
մար, սիրելի Լաէրտ, զու տանդ նստիր: Համլէտը վերադարնալով
կը իմանաէ և քո ալստեղ լինելը: Մենք կը սկսենք մեր գովասանու-
թիւնները քո մասին՝ և ֆրանխացւոց պատմտները մենք կը զար-
դարենք. վերջապէս մենք կը լորդունք ձեր մէջ մենամարտութիւն:
Նա իբրև անհոգ, մեծահոգի, — պարզասիրտ, չի զննիլ սուրը և զու
հեշտութեամբ կարող կը լինես ընտրել սրած սուր՝ և ընտիր հարու-
ածով զու նորան կը վարձատիս հօրդ մահուան համար:

ԼԱԷՐՏ: Ես կը վարձատիս: Դորա համար ես իմ սուրս կ'օծեմ
անգամ: Մի բժշկից ես քիչ թոյն եմ գնել, որ եթէ նորա մէջ թա-
թախեմ սրիս բերանը, նորա ամենափոքրիկ վէրքը մահաբեր կը լի-
նի, թէկուզ բոլոր ալեղերքի սպիզանիքը գործածի նորա բժշկու-
թեան համար: Կը թաթախեմ սրիս ծազը նորա մէջ և եթէ հարկ
լինի՝ թեթև վէրք կը տամ նորան և կը մեռնի:

ԹԱԳԱԼԻՈՐ: Պէտք է լաւ մտածել Նթէ մենք լաւ չը խաղանք
մեր դերը, և մեր գաղտնի նպատակը հասկացուի, լաւ կը լինի եթէ
մենք չ'սկսենք: Մենք պէտք է մի ալ հնարք ի պաշար ունենանք,
եթէ առաջինը չը չաջողուի, երկրորդը մեզ օգնի: Համբերիր... մտա-
ծենք: Զեր մենամարտութեան մասին՝ մենք գրաւական կը տանք...
Գտանք: Երբ մենամարտութեան մասին՝ մենք գրաւական կը տանք...
Գտանք: Երբ կոռու ժամանակ ձեզ ծարաւը կը նեղէ և Համլէտը կու-
գենաւ խմել, ևս նորա համար անպիսի մի խմելիք կը պատրաս-
տեմ որով բաւական է որ նա թաթախէ իւր շրթունքները, որ մեռնի.
Բայց հանգարա, այն ինչ ազմուկ է: (Մասնաւ կ թաթախէն:) Ի՞նչ կաէ,
Հերտորուդա:

ԹԱԳՈՒՆԴԻ: Քայլ առ քայլ՝ մէկ զժբաղդութեանը հետեւում է
միւսը: Լաէ՛րտ, քոյրդ ջրի մէջ խեղզուել է:

ԼԱԷՐՏ: Աստուած իմ, խեղզուել է, որանք:

ԹԱԳՈՒՆԴԻ: Ակստեղ կաէ մի ուռենու ծառ, որ թեքուած է ջրի
վերակ. նորա տակը 0ֆէլիան զանազան ծաղկներից պսակ էր գոր-
ծում: 0ֆէլիան բարձրանում է ծառի վերաց որ ճիւկերի վերակ
գարսէ պսակները, ճիւզը կոտրվում է և նա իւր պսակներով ընկ-
նում է ջրի մէջ: Նորա հագուստը՝ լան փոփում է ջրի երեսին և
ջուրը տանում է նորան: Դժբաղդը լողալիս է եղել և երգելիս, մին-
չև որ հագուստը թրջուելով ծանրանում է և քարշում նորան դէպի
լատակը, Ասպինուկ լուեցին կեանքն ու երգերը:

ԼԱԷՐՏ: Ուրեմն նա մեռաւ:

ԹԱԳՈՒՆԴԻ: Աքն, մեռաւ:

ԼԱԷՐՏ: Բաւական ջուր կաէ քո վերակ անբազդ 0ֆէլիա, ար-
տասուր էլ հարկաւոր չեն, բայց բնութիւնը իւրեանը կը պահանջէ: Թնդ
թափին արտասուրքս, էնտու ևս կ'արիանամ: Ումէի ես շատ հը-
րեղէն բառեր, նորա կը որտուակին, եթէ այս վիմարտութիւնը չը խան-
գարէր: (Գնաւած էն:)

ԹԱԳԱԼԻՈՐ: Գնանք նորա վասնից, Հերտորուդա՝, որպիսի դժու-
արութեամբ ես սանձահարեցի նորա կատաղութիւնը և ինչպէս վա-
խինում եմ որ նա կրկին չը կատաղի: Գնանք, գնանք նորա վասնից:
(Գնաւած էն:)

ԱՅՐԱԳՈՒՅԻ:

ԱՐԱՐ. ՀԻՒԳԵ ԲՈՅԹ

(ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ)

ՏԵՍԻԼ Ա.

(ՄՐԿԱՆ ԷՆ ԵՐԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐՆԵՐ Ը ՔԱՂԻՆԵՐ ՅԵՒՔԵՐԻՆ:)

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Միթէ նորան քրիստոնէական հանդէսով կը թաղեն, քանի որ նա ինքն իրան զիտմամբ փրկութիւն որոնեց:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ասած է քեզ՝ որ կարևի է: Դէ՛, շտապով փորիր գերեզմանը: Քննութիւն եղաւ և վճռեցին քրիստոնէական թաղումն:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Բայց այդ կարևի է եթէ նա խեղդուեցաւ իւր պաշտպանութեան համար:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ազդպէս էլ դատեցին:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ներեցէք: Երեխ այդ բանը ու offenden. ու է պատահել: Անկարելի բան է: Այսաեղ այսպէս պէտքէ կարծեւ, եթէ ես խեղդվում եմ, կը նշանակի որ ես ջուրն եմ մտնում, եթէ ես մտայ ջրի մէջ, նշանակում է որ ես կամեցաւ խեղդուել: Ուրեմն՝ նշանակում է որ նա զիտմամբ խեղդուեց:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ցիմար բան ես խօսում եղբայր:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ոչ, ներիք: Ահա այսաեղ ջուրն է, այսաեղ էլ մարդը: Մարդը մտնումէ ջրի մէջ և խեղդվում է. ինչ գուրս եկաւ: Նորա կամքն է, կ'ուզէ կը խեղդուի, չի ուզի՞ չի խեղդուի. բայց վերջապէս նա կորաւ. հասկանում ես: Բայց եթէ ջուրը նորա վերաէ լարձակուի և ծածկէ նորան, կը նշանակի որ ինքն իւրեան չէ խեղդել:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Օրէնքումն էլ է ալդպէս դրուած:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ազդպէս էլ դրուած է:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Բայց ձշմարիտն ասել,—եթէ նա աղնուականի աղջիկ չը լինէր, նորան քրիստոնէակի պէս չէին թաղում:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ուզիղ է ասածդդ, ցաւն էլ ազդ է որ անուանի մարդկանց համար մինչեւ անգամ մեռնելը ու խեղդուելն էլ ձեռնոտու է: Դէ՛, թիւկներ:—Ազգեպանները և գերեզմանափորները ամենից նախնի աղնուականներ են, Ազգամի արհեստն է:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Միթէ Ազգամն էլ աղնուական էր:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Առաջնակարգ աղնուական:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Հանաք ես անում:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ի՞նչ հանաք, Ես քեզ մի ուրիշ հարց կը տամ, եթէ չիս կարող պատասխաննել, խոստովանութիր...

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Տուր:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Քարտաշից, նաւեր շինողից և հիւմներից, ովք է առաւել ամուր շինում:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Կախաղան շինողը: Կախաղանը իւր բը-նակիչներից ամենից երկար է ապրում:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Վատ չէ: Կախաղանը բարեգործութիւն է անում, այնպէս չէ: Նա լաւութիւն է անում նոցա, որոնք իրանք վատ են վարժում: Իսկ զու վատութիւն արեցիր ասելով թէ՛ կախա-ղանը ամենից ամուր է: Ուրեմն նշանակումէ որ՝ կախաղանը կարող կը լինէր քեզ լաւութիւն անել: Կրկին անգամ պատասխաննիր:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Դու հարցնում ես թէ՛ քարտաշից, նաւ շինողից և հիւմներից ովք է առաւել ամուր շինում:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Այս, պատասխաննիր և վերջացրու:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Որ մեռնես—կ'ասեմ:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ապա՞:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Չէ, չը գիտեմ:

(Համեմուս և Հօրոցի երեսամ են հետուից:)

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ի՞նչ ես զլուխդ ցաւացնում: Եւր չի վազ

տաէ ինչքան կ'ուզես ծեծիր նորան։ Եթէ մէկ անդամ էլ քեզ նոյն
հարցը տան, դու պատասխանիր գերեզման փորսողը։ Նորա շինու-
թիւնները մնում են մինչև վերջին դատաստան։ Վազիր, մի չարեք
խմելիք բեր։ (Երկուր Գերեզմանիուր Գնում է, ուստի փորսում է և երգում։)

Ես մի ժամանակ լաւ տղաւ էի,

Կը Մջէի գիշեր ցերեկ.

Ես շատ զուարթ և ուրախ էի,

Կ'անցկացնէի գիշեր ցերեկ։

ՀԱՄԼԵՏ. Միթէ այդ անպիտանը չէ հասկանում իւր արածը՝
որ երգելով գերեզման է փորում։

ՀՕՐԱՅԻՒԹ. Սովորութիւնը սառնասիրա է արել նորան։

ՀԱՄԼԵՏ. Այս, որքան քիչ է մշակուած ձեռքը, այնքան նուրբ
է նորա զգալութիւնը։

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ. (Երկում է.)

Բաց երբ եկաւ ծերութիւնը,

Սառցուց բոլոր իմ արիւնը.

Փախաւ ինձնից ուրախութիւն,

Կ'ասես ձեռքով սրբեց սէրը։

(Դուքս է Յեռում Տարբուռ Գոնէ.)

ՀԱՄԼԵՏ. Այս գանգը մի ժամանակ լեզու ունէր, նա ևս կա-
րող էր երգել։ Իսկ այս անպիտանը նորան գետնին շպատեց։ Կար-
ծես կաէն եղբայրասպանի գլուխը լինի։ Կարելի է որ սա մի քա-
ղաքագետի գլուխ է, որ Աստծոն անդամ կուզէր խարել, —այնպէս չէ։
ՀՕՐԱՅԻՒԹ. Կարելի բան է։

ՀԱՄԼԵՏ. Կամ մի պալատականի գլուխ է, որ առանց դժուա-
րութեան կասէր. «Բարի լոս, Զերդ բարձրութիւն, թուլ տուէք ինձ
ցանկալ ձեղ բաղդաւորութիւն»։ Սա կարող է լինել՝ այս ինչ մեծ
մարդու գլուխ, որ կը զովաբանէր այն ինչ բարձրաստիճան պարոնի
ձիուն, որովհետեւ ցանկանում էր այն պարզե ստանալ։ Այնպէս չէ։

ՀՕՐԱՅԻՒԹ. Շատ կարելի է։

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ. (Երկում է.)

Էլ ինչ պէտքէ թաղման լապտեր,

Վեց տախտակից շինած տախտակ.

Պատանք և խաչ, սուզի երգեր,

Ամենայն ինչ կը մեռնի խաղաղ։

(Դուքս է Յեռում կրկն Տէ Գոնէ.)

ՀԱՄԼԵՏ. Դարձեալ գլուխ, ինչու սա չը պէտքէ մի դատաւորի
գլուխ լինի։ Ո՞ւր են քո կաշառակերութիւնքը, սուս մեղաղբանքը
և աղտօսութիւնները։ Ի՞նչու ես համբերում, որ այն ուամիկը ցեխոստ
թիակով ջախջախէ գլուխող, ինչու դու նորան դատի չես կանչում։
Հըմ... այս կտրիճը գոյցէ մի ժամանակ կալուածատէր էր, որ հողեր
կառնէր և կը ծախէր։ Ո՞ւր են հիմաց քո մուրհամինները, կալուածա-
գրերը և վաշխերը։ Միթէ աղդքան կարողութեամբ նա միան մի կը-
առը հող գնեց, որ երկու կտոր թիթեամբ ծածկել կարելի է։ Նորա հա-
րցստութեան թղթերը հազիւ այս արկղի մէջ կը տեղաւորուէին և
իրեն էլ տեղ չէր մնալ։

ՀՕՐԱՅԻՒԹ. Մի քայլ անդամ։

ՀԱՄԼԵՏ. Մագաղաթը ոչխարի կաշուց է։

ՀՕՐԱՅԻՒԹ. Այս, և արջառի։

ՀԱՄԼԵՏ. Ոչխար և արջառ են նորքա, որոնք մագաղաթի մէջ
ապահավութիւն են տեսնում, կ'ուզեմ խօսել այդ պարոնի հետ։ Է՛տ,
այդ գերեզմանն ումն է։

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ. Ի՞մն է պարոն։ (Երկում է.)

Պատանք և խաչ, սուզ ու դաղաղ,

Ամենայն ինչ կը մեռնի խաղաղ։

ՀԱՄԼԵՏ. Հասկանում եմ որ քոնն է, որովհետեւ դու նորա մէջն
ես։ Ո՞ւմը պէտքէ թաղեն ալիտեղ։

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ. Ո՞չ մի մարդու։

ՀԱՄԼԵՏ. Լաւ, որ կինարմատի։

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ. Ոչ ոքի։

ՀԱՄԼԵՏ. Ո՞ւմը վերջապէս։

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ. Նորան, որ մի ժամանակ կինարմատ էր
և լիտոց մեռաւ։ Սատուած փրկէ նորա հողին։

ՀԱՄԼԵՏ: Յիմար չէ, հարկաւոր է նորա հետ զդուշութեամբ
խօսել, վաղժոց է որ դու գերեզման փորող ես:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Տարուաէ բոլոր օրերից՝ այն օրուանից
երբ թագաւոր Համլէտը ֆօրաինքրասին յաղթեց:

ՀԱՄԼԵՏ: Քմնի տարի սորանից առաջ:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Իբր թէ դուք չը գիտէք, Ամեն յիմարը
այդ գիտէ: Այն օրը՝ երբ ծնաւ երիտասարդ Համլէտը, որ խելքից
եղաւ և Անդղիա ուղարկեցին նորան:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչու համար նորան Անդղիա ուղարկեցին:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ի՞նչու համար, նորա համար որ նա ցը-
նորուեց: Այնուղ նա կը խելօքանատ, խկեթէ չը խելօքանատ փոխթ չէ:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ պատճառաւ:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Որովհեան նորան այնտեղ չեն նկատի,
ալյնուղ ամենքն էլ նորա պէս խելագարներ են:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչպէս նա խելագարուեց:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Ասում են՝ շատ տարօրինակ կերպով:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչպէս տարօրինակ:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Այնպէս՝ խելագարուեց ու պլծաւ:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ բանի վերաէ խելագարուեց:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Դանիակի հողի վերաէ: Ահա երեսուն
տարի է որ ես գերեզմաններ եմ փորում:

ՀԱՄԼԵՏ: Մարդուս մարմինը որքան ժամանակ կարող է գետնի
տակ առանց նեխուելու մնալ:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Եթէ կենդանի ժամանակը չէ նեխուել,
(ինչ որ մեր օրերում շատ է պատահում) կը մնայ ութ կամ ինը
տարի: Դաբաղը ինը տարի կը մնայ:

ՀԱՄԼԵՏ: Ինչունա ամենից շատ երկար ժամանակ է պահպանվում:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Որովհեան նորա գործը այնպէս պնդաց-
նում է, որ ջուրը նորան չէ թափանցում. խսկ ջուրը անպիտան մար-
մինների սարսափելի թշնամին է: Ահա այս գլուխը քան և երեք
տարի մնաց գետնի տակ:

ՀԱՄԼԵՏ: Ո՞ւմն է այս:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Դատարկագլուխ յիմարի մէկինն է: Ի՞նչ
էք կարծում, ումն է:

ՀԱՄԼԵՏ: Զը զիտեմ:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Գևախնը մտնէ անիրաւը. մի օր նա մի
շիշ թենոսի գինի ածեց զվախ: Սա նօրիկի գլուխն է, որ մեր թա-
գաւորի ծաղրածուն էր:

ՀԱՄԼԵՏ: Սա... (Առաջարկ գոնեցը)

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ: Հէնց սա:

ՀԱՄԼԵՏ: Խեղձ եօրիկ: Ես ճանաչում էի սորան, Հօրացիօ: Չա-
փազանց սրախոս և ծաղրածու մարդ էր սա: Հազար անգամ սա ինձ
ման է ածել իւր ուսերի վերաէ, խսկ այժմ—որքան զզուելի է, սիրա
խառնում է: Այսուղ կալին շրթունք, որ ես չատ անդամ կը համ-
բուրէի: Ուր են քո սրախօսութիւնները, կատակները, երգերը, որոնք
մինչև ուշագնացութիւն կը ծիծաղացնէին բոլորին: Ամենը կորած է:
Գնա այժմ մի գեղեցկուհու առանձնասեհեակը և սսան նորան, որ
եթէ նա մի մատի չափ անգամ ներկէ իւր երեսը, դարձհալ սորա
նման կը լինի: և կը ստիպի նորան ծիծաղել: Ասա ինձ, Հօրացիօ...

ՀՕՐԱՑԻՕ: Ի՞նչ կը հրամակէք, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչպէս ես կարծում, Ազէքսանդր Մակեդոնացին էլ
ասպէս էր հողի մէջ:

ՀՕՐԱՑԻՕ: Խսկ և խսկ ալդպէս:

ՀԱՄԼԵՏ: Եւ այսպէս գարշելի հոտ ունէր. ֆի՛: (Գուռմէ գոնեցը)

ՀՕՐԱՑԻՕ: Այն:

ՀԱՄԼԵՏ: Մինչև որ աստիճան ստոր վիճակի մենք կարող ենք
հասնել: Հետեմլով մեր երեսակացութեան թէրութեանցը. ինչու չը պէտ-
քէ կարծել, որ Ազէքսանդրի աղնիւ փոշին գործածուած է պատիր
շինելու համար:

ՀՕՐԱՑԻՕ: Ազգակիւ հետևողութիւնը խակութիւնից շատ հեռու
կը լինէր:

ՀԱՄԼԵՏ: Երբէք: Ազգակիւ եղբակացութեան կարելի է հասնել

ամենախոհնեմ կերպիւ: Օրինակ՝ Աղքասանդրի մոռաւ, Աղքասանդրին թաղեցին, Աղքասանդր հող դառաւ, հողից շինեցին ցելս, իսկ ցիսով պատեր ծեփեցին: Բայց այս կողմը կանգնենք, թագաւորը դալս է: (Թաղաւոր հանդէս, աշխանայ, և այլն, Դագառն Քջ Օքէլնայի Տարմիլը, և ուստի լուսը սուգի սուգունը բարերուն, Թագաւորը, Թագուհին և պատուինները:) Թագուհին և պալատականները: Սոքա ումն ևն լուզարկաւորում և ակսպէս համեստ կերպիւ: Երևում է որ մեռնողը նշանաւոր անձ է և լուսահատ կերպով վերջացրել է իւր կեանքը: Մի կողմը կանդենք և նախենք: (Յէս էն կանգնում:)

ՀԱՅԻՑ: Էլ ինչ ծէս պէտք է կատարուի:

ՀԱՄԼԵՑ: Սա Լաէրտն է, աղնիւ երիտասարդ:

ՀԱՅԻՑ: Էլ ինչ ծէս կատարենու: Խջեցրէք դագաղը 'ի գերեզման: Թնդ նորա կուսական և գեղեցիկ մարմնուց ծաղկէ անուշահու մանիչակ: Իսկ քեզ, խստասիրու քահանակ, ես կասեմ որ հրեշտակները կ'օրհնեն քրօջս: Իսկ դու կը գոռաս դժոխքում:

ՀԱՄԼԵՑ: Ի՞նչ, Օքէլնա:

ԹԱԳՈՒՀԻՒ: (Զգում է Ճառէիւ Շագառն Քերոյ:) Ծաղկներ ծաղկին: Մնաս բարեւ. կը լուսալի Համլէտի կին ահսնել քեզ, ծաղկներով կը լուսալի զարդարել քեզ և ոչ թէ քո դագաղը, ալ քո հարսանեաց անկողինը:

ՀԱՅԻՑ: Ո՞հ, թնդ եռապատիկ վիշտը՝ երեք տասն անգամ հարուածէ այն մարդու անիծեալ գլուխը, որի չարագործութիւնը զրկեց քեզ քո լուսաւոր խելքից: Դեռ մի թափէք հող նորա վերադի թողէք վերջին անգամ ես նորան գրկեմ: (Մարտում է Գէրէդանի Քջ) Աէժմ հողով ծածկեցէք մեռեալին և կենդանուն՝ մինչև կը դիզին մէկմէկի վերակ սարեր, աւելի բարձր քան Պելիօն, մինչև նորա դագաթը երկինք կը հասեէ:

ՀԱՄԼԵՑ: (Մօքէհաւակ) Ո՞վ է համարձակվում լաւունել այստեղ իւր սարսափելի վիշտը: Լուսին և աստղեր դադարեցնելով իւրեանց դնացքը՝ կանգնեն ուշադրութեամբ և սարսափելով լսեն: Ես եմ այդ Համլէտը, իշխան Դանիակի:

ՀԱՅԻՑ: Սատանի բաժին լինի քո հոգին: (Յոր Յակուտամ է Համլէտի վրոյ:)

ՀԱՄԼԵՑ: Վաստ ես աղօթում: Հեռացրու ձեռքերու, ես կրակու մարդ չեմ, բայց իմ մէջ կամ մի երկիւղալի բան. զդուզ եղիր,—հեռացրու ձեռքերու:

ԹԱԳԱԼՈՒՐ: Բաժանեցէք նոցա:

ԹԱԳՈՒՀԻՒ: Համլէտ, Համլէտ:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ: Պարոննակը:

ՀՕՐԱՅԻՒ: Եշան, հանդարասուեցէք: (Երա Պաժանում էն:)

ՀԱՄԼԵՑ: Ո՞չ, ես չեմ դադարի մրցել Լաէրտի հետ այդ մասին մինչև լաւիտեան աչքերս չը խփուեն:

ԹԱԳՈՒՀԻՒ: Ինչի մասին, իմ Համլէտ:

ՀԱՄԼԵՑ: Ես սիրում էի Օքէլնաին և քառասուն հաղար եղացրների միացած սէրը չի հաւասարուի իմ սիրոց հետ: Ասա, ինչ ես կամենում դու կատարել լանուն նորա:

ԹԱԳԱԼՈՒՐ: Լաէրտ, նա խենթ է:

ԹԱԳՈՒՀԻՒ: Ի սէր Աստուծու, թողէք նորան:

ՀԱՄԼԵՑ: Ասա, ինչ ես պատրաստ անելու: Լաց լինել, կոռմել, պատ պահել, անձդ չարչարել, կատաղել կուղես. սուր, թողն կը խմեն՝ կամ կոկորդիլաներ կուտես: Ես ես կանեմ միենունը: Դու այստեղ տնալու ես եկել, կարծում ես գերազանցել ինձ, մտնելով գերեզմանի մէջ և հրաւիրելով որ քեզ կենդանի թաղեն,—այդ ամենը ես ևս պատրաստ եմ անելու: Դու լեռներու պէս կը հպարտանաս. Թնդ միշտոն բլուրներ թափեն մեր զլիմին, որ նոցա գագաթը հրացն աշխարհին հասնի: և Սսան նորա մօս աւազի չափ երեակ: Ճառախօսութեան մէջ ես գեղանից պակաս չեմ:

ԹԱԳՈՒՀԻՒ: Ալդ բոլորը հիւանդութեան նշաններ են, Համլէտը շուտով կը հանգստանակ:

ՀԱՄԼԵՑ: Ի՞նչն է քեզ ստիպում ացդպէս վարուել ինձ հետ: Ես միշտ սիրել եմ քեզ: Թնդ ինքը Հերքովէսը անէ, ինչ կամի, —այնու-

ամենայնիւ կատուն էլի կը մլաւա՛ և շոնը խոր հերթին կը հա-
շա՞ւ: (Գնուած է:)

ԹԱԳԱՒՈՐ: Բարի Հօրացիօ, խնդրում եմ գնա նորա վետելից:
(Հօրացիօ գնուած է:) Լաէրտ, երեկուած խօսակցութիւնը թող զօրաց-
նէ քո համբերութիւնը: Հերարուղամ, ունեցիր հսկողութիւն որպուտ
վերակ: Կենդանի արձանով կը զարդարովի ակա գերեզմանը, կը զակ և
մեր հանդսութեան ժամը, բայց առ ացմ համբերութիւն: (Գնուած է:)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

(ԴԱՇԻՃ ՊԱԼԱՏՈՒՄ)

ՏԵՍԻԼ Ա.

ՀԱՄԼԵՏ ԵՒ ՀՕՐԱՑԻՅՈ.

ՀԱՄԼԵՏ: Այս, Հօրացիօ, ես խաբեցի նոյս և խաբանեցի կո-
րուստս, գարձնելով նորան չարագործների գլխի վերակ: Խելագա-
րուած ձևացնելով ինձ, ես հեշտութեամբ լափշտակեցի, կարդացի և
կեղծեցի թագաւորական հրամանագիրը: Բարեբաղդաբար ես ունեի
հանգուցեալ հօրս կնիքը, որով և կնքեցի: Կամիս իմանալ ինչ էր
պարունակում ադր հրամանագիրը:

ՀՕՐԱՑԻՅՈ: Կը ցանկավի, իշխան...

ՀԱՄԼԵՏ: Հրաման,—առանց վետածգութեան՝ գլխատել ինձ: Զը
զարմանաս, բարեկամ: Ի վարձատրութիւն Ծողենկրանցին և Գեղէն-
շտերնին՝ ես փոխադարձաբար զրեցի,—նոյս գլխատել, երբ նոքա
Անգղիացւոց երկիր հասնեն: Թող տեսնեն նոքա, թէ որքան վանդա-
ւոր է կանգնել երկու սրերի մէջ, երբ կատաղի կոխ սկսվել է
զօրաւոր մարդկանց մէջ:

ՀՕՐԱՑԻՅՈ: Նա թագաւոր չէ—չարագնրծ է:

ՀԱՄԼԵՏ: Նորա մասին խնդիրն արդէն վճռված է: Հօրս սպա-
նողը, զահ գողացողը և մօրս անառակօրէն զամթակղեցնողը, որ
նենգութեամբ զիտաւորվեց խորտակել ինձ—պէտք է մեռնի:—խղճը-
տանքս կը հրամաէ ինձ մահուան պատիժ տալ նորան: Յանցանք
կը լինի խնակել նորան երկիր խաղուակելու համար:

ՀՕՐԱՑԻՅՈ: Նա շոտով կը զուշակէ ձեր մտաղրութիւնը,

ՀԱՄԼԵՏ: Նա միջոց չի ունենակ գուշակելու, —նորա բոպէները
հաշուած են: Բայց խղճմտանքս տանջում է ինձ, որ Լաէրտին ա-

Նարդեցի: Ես ինձ մոռացաւ: Ես պարտաւոր էի լարդել նորա վիշտը: Նորա վիճակը նման է իմ վիճակին:

ՀՕՐԱՅԻՒԹ: Մարդիկ են գալիս իշխան, հանդարտ ի սեր Առառուծոյ: (Մաս 5 է Օսրեկը:)

ՕՍՐԻԿ: Ամենապահառափայլ իշխան, իմս խոնարհագոյն չնորհաւորութիւն ձեր վերաղարձման առթիւ ի Դանիա:

ՀԱՄԼԵՏ: Եռանդագին չնորհակալութիւն: Հօրացիօ, դու ճանաչում ես այս բղեպին:

ՀՕՐԱՅԻՒԹ: Ո՛չ, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Աւելի լաւ քեզ համար.—Նորան ճանաչելը իսկ լանցանք է: Նա հարուստ է. թող անասունը անասուններին տիրապետէ և փոխանակ ախոռը մանելու, նստէ թագաւորական սեղանի շուրջը. բայց և անպէս այս թութակը ունէ իւր իշխանութեան ներքոյ անչափ ցեխ, որ գետին է անուանում:

ՕՍՐԻԿ: Ամենապահառափայլ իշխան, եթէ աղաս ժամանակ ունէք լսել, ինչ որ պատիւ կ'ունենամ ձեզ հաղորդելու:

ՀԱՄԼԵՏ: Ամենամեծ ուշադրութեամբ:—Միմիան դործագրեք ձեր զիմարկը ինչի համար որ նա լորինած է. զրէք նորան ձեր զմբի վերա:

ՕՍՐԻԿ: Ամենախոնարհաբար չնորհակալ եմ.—չոդ է:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ, շատ ցուրտ է. քամին հիւսիսիցն է:

ՕՍՐԻԿ: Այս իշխան, սաստիկ ցուրտ է:

ՀԱՄԼԵՏ: Իսկ ինձ կը թվակ որ սաստիկ տապ է և չոդ:

ՕՍՐԻԿ: Չափազանց իշխան. անպէս տաք է, որ ասել չեմ կարող: Իշխան, թագաւորը լանձնեց ինձ հաղորդել ձեզ, որ նա...

ՀԱՄԼԵՏ: Ծածկեցէք վերջապէս ձեր զլուխը:

ՕՍՐԻԿ: Հաւասացէք իշխան, որ անպէս լաւ եմ և դուք չափազանց բարի էք: Ձեզ անշուշտ լաւանի է որ լաէրտ վերաղարձաւ ֆրանսիակից և երդում եմ որ երխասարդներից կատարելագոյնն է:

ՀԱՄԼԵՏ: Ինձ շատ լաւանի է որ ձեր պերճախօսութեան քսակը լիքն է ուկէ զրամներով, բայց նոցա դուք մի մանրացնեք հասարակ զրամների:

ՕՍՐԻԿ: Իշխան, ձեզ անշուշտ պէտք է լաւանի լինի որ... ՀԱՄԼԵՏ: Թողնենք ինչ որ ինձ լաւանի է, կամ լաւանի չէ, քանի ինչումն է:

ՕՍՐԻԿ: Ձեզ անշուշտ պէտքէ լաւանի լինի, որ լաէրտը գերազանցում է...

ՀԱՄԼԵՏ: Բայց ես որսոեղից կարող եմ իմանալ որ նա գերազանցում է, ասացէք խողբեմ:

ՕՍՐԻԿ: Ես կամնաւմ էի ասել՝ որ նա գերազանցում է սրերով մինամարտութեան արհեստով:

ՀԱՄԼԵՏ: Ի՞նչ է հետեւում այդ բանից:

ՕՍՐԻԿ: Թագաւորը զրաւական գրեց վեց արարական ձի, լաէրտը իւր կողմից ինչպէս լսել եմ, վեց ֆրանսիացւոց սուր, իւր պատկանելքով: Թագաւորը պնդում է թէ տասներկու հարուածից լաէրտ կը տանի միան երեք, իսկ գուք իննը: Վէճը անքան սաստկացաւ, որ թագաւորը հրամակեց ինձ իմանալ—կամնաւմ էք արդեօք՝ և բրը կը բարեհամէք ժամանակ նշանակել փորձի համար:

ՀԱՄԼԵՏ: (Մաս էլուա) Իսկ եթէ ես չը համաձայնեմ:

ՕՍՐԻԿ: Գրաւականները անպէս կը մնան:

ՀԱՄԼԵՏ: Ինչու անպէս կը մնան: Ասացէք թագաւորին որ ես համաձայն եմ: Թող բերեն սրերը և ես կ'աշխատեմ վաստակել նորին մեծութեան համար երեք սուր և երեք դաշուն:

ՕՍՐԻԿ: Անդպէս էլ կը հրամակէք ասել:

ՀԱՄԼԵՏ: Անդպէս լաւանի բան է, միան զարդարեցէք իմաստը ձեր պերճախօսութեան ծաղիկներով:

ՕՍՐԻԿ: Եւ ձեզ համելի է իշխան, անկապաղ սկսել վճռի կատարումն:

ՀԱՄԼԵՏ: Կամի՞ այս բոսկէլու:

ՕՍՐԻԿ: Թագաւորը, թագուհին և բոլոր պալատը կը շտապէն տեսնել աղջքան զրաւիչ տեսարանը:

ՀԱՄԼԵՏ: Շատ ուրախ եմ:

ՕՍՐԻԿ: Նորին Վեհափառութիւնը կը ինդրէ ձեղանից, ամե-

Նից առաջ կաէրտին ասել քանի մի հաշտութեամ խօսքեր:
ՀԱՄԼԵՏ: Աղ էլ կը կատարեմ:
ՕՍՐԻԿ: Յանձնում եմ ինձ՝ ձեր խնամատարութեանը: (Գնումէ.)
ՀՕՐԱՑԻՕ: Իշխան, ես վախում եմ—դուք տանու կը տաք գրաւականը:

ՀԱՄԼԵՏ: Չեմ կարծում, առոր դործածել ես լաւ դիտեմ, բայց չօրացիօ, դու չես կարող երևակացել... ես աճապէս ախուր եմ, աճապէս տիտուր... բայց թողնենք աղ ամենը:

ՀՕՐԱՑԻՕ: Էլ ինչ կարիք կա, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Դատարկ բան է: Նախազգացումներ միմիացն կանաց կարող նն վախեցնել:

ՀՕՐԱՑԻՕ: Եթէ ձեր հոգին մի բան վկայում է, մի արհամարէք աղ հոգեկան նախազգուշութիւնը: Ես կը լատնեմ, որ դուք արամադրուած չեք:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ, դա վիմարութիւն է: Բոլոր նախազգացմունքներին մենք նախատես կը լինենք: Առանց նախախնամութեան կամքի մանզուկն անդամ չի խորտակվի: Եթէ ակտմ չը լինի, կը լինի ապագայում—ապագայում չը լինի—կը լինի ակտմ: Պէտք է պատրաստ լինել,—սա է բոլորը: Եթէ ոչ որ չը գիտէ ինչ է պատահելու մեզ... Թողնենք ամենան բան լինի աճապէս, ինչպէս նորան սահմանուած է: (Մոռջում է:)

ՏԵՍԻԼ Բ.

ԹԱԳԱՒՈՐ, ԹԱԳՈՒՀԻ, ԼԱՅԻՏ, ՕՍՐԻԿ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ, կանակք և աղ մարդիկ, պահապաններ: Հանդիսական մարշ:

ԹԱԳԱՒՈՐ: Համլէտ, ահա կաէրտի ձեռքը՝ ընդունիր նորան մեր ձեռքից: (Միացնուած է նոցա յետելը:)

ՀԱՄԼԵՏ: Ներիր ինձ կաէրտ, ես մեղաւոր եմ, բայց ես ներողութիւն եմ ինդրում և դու իբրև աղնիւ մարդ, կը ներես ինձ: Բոլոր պալատականներին լաւոնի է և դու լած կը լինեմ՝ որ ես ծանր տկարութեամբ չարչարվում եմ, իմ վարմունքը, որ աճապան-

անողորմ անարգեց քո բնութիւնը, քո սիրաը, քո պատիւը, նա—բարարարում եմ ես, խելագարութիւն էր: Համլէտը անարգէ կաէրտին, ոչ, անկարելի է: Համլէտը իւր հոգւոց մէջ բաժանուած ինքն իւրեան չէ ճանաչում, անարգում է կաէրտին—նա Համլէտ: Նա չէր որ քեզ անարգեց—նորա խելագարութիւնը: Եթէ ազպէս է, Համլէտը ինքը չափազանց անարգուած է, որովհետեւ խելագարութիւնը նորա թշնամութիւնն է: Ահա բոլոր պալատականներ, նոցա ներկայութեամբ ես մերժում եմ վաս դիտաւորութիւնը և աղնիւ սրտի համար ես արդար եմ: Ես տան կտուրի վերալից նետս ձգեցի—նա եղբօրս խոցեց: ԼԱՅԻՏ: Բաւական է, իշխան. թող դատեն մեզ. թող վճռեն անարգանքը, բայց ես պատրաստ եմ մոռանալ նորան, բարեկամութեան և չարգանքի ողջոնով ես հանդիպում եմ ձեր պատրաստիութեան՝ մեր թշնամութեան դադարեցնելու նկատմամբ:

ՀԱՄԼԵՏ: Բաւական է: Տուէք մեզ սրեր, ես պատրաստ եմ:

ԼԱՅԻՏ: Եւ ես:

ՀԱՄԼԵՏ: Ինչպէս պայծառ աստղ մոռթ գիշերում կը փակէ քո արհեստագիտութիւնն իմ անդիտութեան առաջ:

ԼԱՅԻՏ: Կատակռում էք, իշխան:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ:

ԹԱԳԱՒՈՐ: Տուէք նորանց սրեր: Քեզ լաւոնի է Համլէտ, գրաւականը:

ՀԱՄԼԵՏ: Ազն, ապն: Դուք տանու կը տաք, աղ էլ ինձ լաւոնի է: (Նուա ջոկուա էն ոբէց)

ԹԱԳԱՒՈՐ: Դրէք ախտեղ, սեղանիս վերակ բաժաներ: Եւ եթէ Համլէտը տակ առաջին կամ երկրորդ հարուած, կամ պատասխանէ երրորդին, ամենան պարիսպներից թող որոտան թնդանօթներ, թագաւորը կը խմէ Համլէտի կենաց և կը ձգէ նորա բաժակի մէջ գոհար, բոլոր գոհարներից ամենաթանկաղինը, որք Դանիակի երեք թագաւորների երեք թագերն են զարդարուած: Տուէք ինձ բաժակներ: Թող փողեր և երջիւրներ համբաւեն թնդանօթներին, թնդանօթները երկնքին երկինքը երկրին, որ թագաւորը խմում է Համ-

լէտի կենաց: Ակսեթէք: (Բաժանէրը բնուած էն սեղանի վեշայ, Տէի ճէջ լոյն է լափուած:)

ՀԱՄԼԵՏ: Պատրաստ է: (Ասնուած է սուրը և բարնուած բէռի լուգա-
սուրը, Լակուրը փոխուած է սուրը:)

ԹԱԳԱՒՈՐ: Հարուածները ուշադրութեամբ զիտեցէք և իսկոն
ինձ լայտեցէք, վաստակի լոյսը մեզ չի խաբիլ: (Հայէկուը և Լակուը
մէնայքուած էն:)

ՀԱՄԼԵՏ: (Դարձուածները) Հարուած:
ԼԱՅԻՌ: Ո՛չ:

ՀԱՄԼԵՏ: Դատաւորներ ասացէք:
ՕՍՐԻԿ և ՄԻՒՍՆԵՐԸ: Ան, հարուած, անվիճելի հարուած:

ԼԱՅԻՌ: Թո՞ղ այդպէս լինի—շարունակենք:
ԹԱԳԱՒՈՐ: Համբերեցէք, ես խմում եմ Համլէտի կենացը: (Փո-
քը և լոնդոնուէ հարուածները:) Համլէտ, վեր առ բաժակը: (Տուլու է հո-
րոն բոժոնը:)

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ, առաջ գործը վերջացնենք: (Մէնայքուած էն, լու-
գա-սուրը բնուած է բոժոնի վերայ: Ահա, կրկն հարուած:
ԼԱՅԻՌ: Ան, խոստովանուամ եմ:

ԹԱԳԱՒՈՐ: Ցաղթութիւնը իմն է, Համլէտ:

ԹԱԳՈՒՀՅԻ: Քո կենացն եմ խմում, իմ որդեակ: (Ասնուած է բոժոնը:)
ԹԱԳԱՒՈՐ: Ոչ, ոչ ինդրում եմ մի խմիր:

ԹԱԳՈՒՀՅԻ: Իմ որդու կենացը: (Խօնաւ է:)
ԹԱԳԱՒՈՐ: (Մէ կողմէ:) Նա կորաւ, բաժակի մէջ թուն կար:

ԹԱԳՈՒՀՅԻ: Բաժանենք առ բաժակը, իմ Համլէտ:

ՀԱՄԼԵՏ: Ենորհակալ եմ, առաջ վերջացնենք:
ԼԱՅԻՌ: Համլէտին հարուած:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ: (Մէնայքուած էն պատցած:) Ինձ թվում է որ զու-
կատակ ես անում, Լակրա, խաղ ես անում և ոչ թէ մինամարտում:

ԼԱՅԻՌ: Ե՞ս եմ կատակում, կը տեսնենք: (Նո վերաբուած է
Հայէկուն:)

ԶՈՒՑԻԾԻ: Այս ինչ է, իշխանը վիրաւորժած է: (Հայէկուը բնուրը է

իւրած սուրը Լակուրի յեւծից և յիւրած է իւրեանը, Լակուր հարազութեածը սո-
նուած է Հայէկուը սուրը, Հայէկուը վերցնուած է Լակուրինը. Անամարդուած էն:)

ԹԱԳԱՒՈՐ: Կանդ առէք, բաւական է, բաժանեցէք նոցա: (Թո-
գուակին ուշութեածուած է:)

ՕՍՐԻԿ, Ի՞նչ պատահեց թագուհուն:

ԹԱԳԱՒՈՐ: Նա երեխ վախեցաւ:

ԼԱՅԻՌ: Սա ինչ է, ես վիրաւորուած եմ: Համլէտը իմ սրովս էր
կովում. ես խորտակվեցաւ: (Շիռլինուած էն. Լակուը հողիւ չոնդնոնչ է սորէի
վերայ:)

ՀԱՄԼԵՏ: Մայր իմ, զու իմ մասին վախեցար:

ԹԱԳԱՒՈՐ: Ո՛չ, թուն, թուն կար բաժակի մէջ. թուն—ո՛չ, իմ
սիրելի որդեակ: (Մէնուած է:)

ՀԱՄԼԵՏ: Չարագործութիւն, կողպեցէք դռները, ոչ ոքին մի
դուրս թողնէք, որոնեցէք չարագործին:

ԼԱՅԻՌ: (Ընկուած է:) Նա քո առաջդ է Համլէտ: Դու սպանուած
ես, Համլէտ. քո մէջ կէս ժամ կեանք չէ մնացել, դաւաճանութեան
սուրը քո ձեռքին է: Գարշելի եղեռնագործութիւնը ինձ վերաէ դար-
ձաւ: Տես, ես ընկաէ և էլ չեմ վերկենաց: Մայր նմանապէս թունա-
ւորված է... աւելի զօրութիւն չունեմ... թագաւորը, թագաւորն է
բոլորի պատճառը:

ՀԱՄԼԵՏ: Թուն. թուն ուրեմն թունը իւրեանը կատարի: (Ծանուած
է սորէ լուգութեան:)

ՕՍՐԻԿ և ՄԻՒՍՆԵՐԸ: Դաւաճանութիւն:

ՀԱՄԼԵՏ: Խմիր աս թունը, գարշելի անիծեալ եղեռնագործ:
Գնա մօրս եւսից: (Թագուածը նէնուած է:)

ԼԱՅԻՌ: Ներիր ինձ Համլէտ քո մահը, ինչպէս ես ներում եմ
քեզ հօրս մահը: (Մէնուած է:)

ՀԱՄԼԵՏ: Հանդիսա հանդչիր... Մահ, ահա նա, Հօրացնօ... իսկ
դուք, չարագործութեան համր վկաներ, դրալով նայում էք ասս
արինհեղութեանը, գունաթափել էք... ոհ, եթէ ես ժամանակ ունե-
նալի... ես կը պատմէի ձեզ... անողորմ մահը... Հօրացիօ, զու կ'ար-
դարացնես ինձ մարդկանց առաջ:

ՀՕՐԱՑԻՕ: Բաժակի մէջ մնացորդ կայ՝ և նա իմու է:

ՀԱՄԼԵՏ: Ո՛չ ո՛չ, զու պէտք է ապրես, զու պէտք է արդարացնես Համլէտի անունը: Դու նոցա կը պատմես սարսափելի գործերը և կը փրկես Համլէտի անունը պարսաւանքից: (Մեռնում է:)

ՀՕՐԱՑԻՕ: Եւ սպառվեցաւ դիւցազն սիրոտ: Դասք հրեշտակաց սորան ձեր երանութեան մէջ դասեցէք, որ երանելի կեանքի էր արժանի: (Երածշաբաթիւն:)

ՎԱՐԱԳՈՅԻ:



ՎՐԻՊԱԿՆԵՐԻ:

ԵՐԵՎԱՆ:	ՏՐԵՎԱՆ:	ԱԼԵՎԱՆ:	ՈՒՂԵՎ:
37	31	Դ արկել	Էլն ուղարկել
41	31	Կը հաղորդմ	Կը հաղորդեմ
46	31	Դիլտենշերն	Դիլտէնշտերն
48	1	աղքատ եմ	աղքատ եմ
"	24	բնաւորողիւնը	բնաւորութիւնը
69	18	սոսկալի	սոսկալի

ՈՒՂԱԾԱՐԱԳԻ

Նույնական միավոր	Համար	Տարբերակ	Տարբերակ
Արքական միավոր	18	76	
Կայսերական միավոր	18	11	
Առաջապետական միավոր	18	31	
Կայունական միավոր	18	6	
Վահագանական միավոր	18	0	
Հայաստանական միավոր	81	95	

9678
968
969

20-13

